


Բ. Պ. Գեորգիանցի



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԱՐԱԾՎԱԾ ԵՌԱԿԻՆՏԵՐԻ ԱՏԼՈՍ











Ռ . Ա . Կարապետյան



նկարիչ՝

Ք . Հ . Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՏԱՐԱԾՎԱԾ  
ՄՈԼԽՈՏԵՐԻ  
ԱՏԼԱՍ



ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ Է ՀՍՄՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ՈՐԳԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ ԳՅՈՒՂՑՆՏԵՍԱԿԱՆ  
ԲՈՒՀԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



**Կարապետյան Ռ. Ս.**

**Կ 294** Հայաստանում տարածված մոլախոտերի ատլաս: Ուս. ձեռնարկ գյուղատնտ. բուհերի համար.—Եր.: Լույս, 1980.— 144 էջ, նկ., աղյուսակ:

Գունավոր ատլասը կազմված է ուսումնական ծրագրին համապատասխան: Տրված են Հայաստանում առավել տարածված մոլախոտերի 101 տեսակի քառագույն նկարները՝ համապատասխան տեքստերով, ինչպես նաև նրանց բազմացման, տարածման առանձնահատկությունները, գոտիներն ու հողատեսքերը, հասցրած վնասներն ու նրանց դեմ տարվող պայքարի սկզբունքները: Ատլասը օգտակար է նաև գյուղատնտեսության բոլոր աշխատողների համար:

38.3.1.32 (10) 1980  
Կ 702 (01) 1980

632  
ԳՄԴ 41 . 46 Ի73

**Карапетян Размик Саркисович**

**АТЛАС СОРНЫХ РАСТЕНИЙ  
РАСПРОСТРАНЕННЫХ  
В АРМЕНИИ**

*Учебное пособие для студентов  
сельскохозяйственных вузов*

(на армянском языке)  
Издательство «Луйс»  
Ереван 1980

© «Լույս» հրատարակչություն, 1980

**ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ**

«Մոլախոտերի ատլասը» ընդգրկում է մեր հանրապետության դաշտերում, այգիներում և այլ հողատեսքերում առավել տարածված, կենսաբանական տարբեր խմբերի պատկանող մոլախոտերի 101 տեսակներ, որոնք այս կամ այն չափով բնորոշ են նաև մեր երկրի գյուղատնտեսական տարբեր գոտիների համար:

Ատլասի ընդհանուր և առանձին՝ մոլախոտերի նկարագրական բաժիններում շարադրված են մշակովի բույսերին մոլախոտերի հասցրած վնասները, նրանց բազմացման ու աշխարհագրական տարածման պայմանները, կենսաբանական, ձևաբանական ու հատկապես հարմարվածության առանձնահատկությունները:


Ներկա ատլասի նկարագրական մասն ուղեկցվում է մոլախոտերի առանձին տեսակների և նրանց առանձնահատկություններն ընդգրծող տարբեր օրգանների (ծաղիկ, սերմ, արմատ և այլն) գունավոր պատկերումով: Տրված է նրանց դեմ պայքարի սկզբունքները:

«Մոլախոտերի ատլասը» Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական բուհերի ագրոնոմիական, այգեպտղաբանաշարաբուծական ու տնտեսագիտական ֆակուլտետների, ինժեներական որոշ մասնագիտությունների ուսանողների ու տեխնիկումների սովորողների համար նախատեսված ուսումնական ձեռնարկ է, որը կարող է օգտակար լինել նաև այլ բուհերի կենսաբանական ֆակուլտետների ուսանողներին, գյուղատնտեսության և գյուղատնտեսական թեքմամբ հիմնարկների մասնագետներին, ինչպես նաև բարձր դասարանների աշակերտներին:

Հայերեն լեզվով նման ձեռնարկի կարիքը վաղուց էր զգացվում և այն կազմելու ընթացքում ցույց տված օգնության համար խորին շնորհակալություն ենք հայտնում հայկական գյուղատնտեսական ինստիտուտի երկրագործության ամբիոնի աշխատակիցներին և հատկապես Ն. Հ. Կարապետյանին՝ նրանց ցույց տված անմիջական աջակցության համար:



# ՄՈԼԽՈՏԵՐԻ ՀԱՍՅՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ



Մոլախոտեր են կոչվում վայրի այն բույսերը, որոնք չմշակվելով մարդու կողմից, աճում են մշակովի բույսերի դաշտերում և վնաս պատճառում նրանց:

Մոլախոտերի առկայությունն անցանկալի է բոլոր հողատեսքերում: Ցանկալի չէ նաև մշակովի այն բույսի առկայությունը, որը հայտնվել է մեկ այլ բույսի դաշտում՝ մարդու կամքից անկախ:

Մոլախոտերը հսկայական վնաս են հասցնում մշակովի բույսերին, գյուղատնտեսությանն ու ամբողջ ժողովրդական տնտեսությանը:

Գերմանական վիճակագրության տվյալներով, եթե գյուղատնտեսական բույսերի հիվանդություններն ու վնասատուները խլում են հացահատիկի համաշխարհային բերքի 5—10,2%-ը, ապա միայն մոլախոտերն ամեն տարի խլում են այդ բերքի 15%-ը:

Այսպիսով, մոլախոտերի հասցրած վնասի պատճառով մեր մոլորակի վրա ամեն տարի կորչում է 6 մլն տոննա հացահատիկ: Մոլախոտային բուսականությունը ԱՄՆ-ի գյուղատնտեսությանն ամեն տարի 5 միլիարդ դոլլարի կորուստ է պատճառում:

Մոլախոտերն աճելով մշակովի բույսերի դաշտերում ու տնկարկներում և օգտագործելով բույսերի տրամադրության տակ եղած սննդանյութերն ու ջուրը, օդն ու լույսը, խախտում են նրանց ջերմային ռեժիմն ու վատացնելով նրանց կյանքի պայմանները, դանդաղեցնում կամ դադարեցնում են նրանց աճն ու վարգացումը և բերքի անկման պատճառ դառնում:

Օրինակ, սողացող սեւը, իշամառլն ու գեղավերը հողից 2—2,5 անգամ ավելի ազոտ, հնավասար քանակությամբ ֆոսֆոր և 3 անգամ ավելի շատ կալիում են վերցնում, քան հացաբույսերը: Գեղավերը մեկ հեկտարից վերցնում է 140 կգ ազոտ, 120 կգ ֆոսֆոր:

Շնկոտենը, երիցուկն ու մատիտեղը 2—2,2 անգամ ավելի շատ ջուր են ծախսում, քան վարսակը: Մոլախոտերով աղբոտված դաշտերում մինչև 7,5%-ով ավելի պակաս խոնավություն է լինում, քան մոլախոտերից զերծ դաշտերում:

Մոլախոտերն օգտագործելով CO<sub>2</sub> գազը, բույսերին օրկում են ածխածնից՝ խլելով նրանց ածխածնային սննդառության ռեժիմը:

Ունենալով առավել վարգացած ու հատկապես վեգետացիայի սկզբում փարթամորեն աճող վերգետնյա զանգված, սովերարկում են մշակովի բույսին. նրան օրկելով լույսից՝ ֆոտոսինթեզ կատարելու հնարավորությունից: Հողի, հետևապես բույսի սովերարկումով, մոլախոտային բուսակսությունը 2—4°-ով իջեցնում է հողի ջերմությունը, խախտում կամ կանխում է հողում կատարվող միկրոկենսաբանական պրոցեսները, ձգձգելով մշակովի բույսերի վեգետացիայի տևողությունը:




Պարպիտ մոլախոտերը մշակովի բույսերից սննդանյութերը վերցնում են միանգամից՝ պատրաստի օրգանական նյութերի ձևով, որի հետևանքով վերջինները հյուժվում ու մահանում են:

Մոլախոտերը մեծ չափով վնասում են մշակովի բույսերին, որպես հիվանդությունների ու վնասատուների հավանական կրողներ, փոխադրողներ ու տարածողներ: Դաշտային մանանեխը, դաշտային կաղամբուկը, հովվամաղախն ու շատ այլ մոլախոտեր հանդիսանում են կաղամբի կիլի և խաչածաղիկների այրացողի տարածողներ: Սև մորմը կարտոֆիլի քաղցկեղի առաջին կրողն (տերն) է: Սեզը հանդիսանում է հացաբույսերի ժանգերի տեր բույսը:

Ճակնդեղի նեմատոդը մշակովի բույսի վրա է անցնում հիմնականում թալից և այլ մոլախոտերից: Ցողունային նեմատոդը տարիներ շարունակ կարող է ապրել կաշուն մակարդախոտի ու աստղիկի վրա և տարիներ հետո, նույնիսկ ցանքաշրջանառություններ կիրառելու դեպքում, մշակովի բույսերի վրա:

Մշակովի բույսերի աճի, վարգացման ու բերքատվության վրա ուղղակիորեն ազդելուց բացի բազմամյա մոլախոտերի առանցքային արմատները, կոճղարմատներն ու ծլարմատները հողի վարելաշերտերում զրտնըվելով հսկայական պնեզվածներով, մեխանիկորեն բարձրացնում են հողի տեսակարար դիմադրողականությունը և դժվարացնելով հողի մշակման աշխատանքները, իջեցնում են վարի որակն ու աշխատանքի արտադրողականությունը: Օրինակ, սողացող սեպի արմատների երկարությունը հողի մեկ քառակուսի մետր վարելաշերտում հասնում է մինչև 495 մետրի: Դրանց վրա կարող են լինել մինչև 25979 աճի ու պտղաբերող բողբոջներ: Մոլախոտերը խանգարում են նաև բերքահավաքի ու կալսման աշխատանքներին:

Բոլոր մոլախոտերը և հատկապես նրանց թունավոր տեսակները ազդում են բերքի և բերքից ստացված մթերքների վրա, խիստ կերպով իջեցնելով նրանց ապրանքային հատկությունները, սննդային արժեքը, վատացնելով համն ու բույրը: Մարդու կողմից օգտագործվող մթերքների մեջ հարբեցնող որովի, արջնդեղի, դաշտային ձիաձետի, սև բանգու և շատ այլ մոլախոտերի սերմերի չնչին առկայությունը թունավորում է առաջացնում: Դեղատու իշամուկուտը, դառը օջինդրը, սխտորուկը ոչ միայն անմիջապես օգտագործվող մթերքներին, այլև կենդանիներից ստացված կաթին ու մսին նույնպես տհաճ համ ու հոտ են հաղորդում: Շատ մոլախոտերի (գազահավաք, մոշատոտ և այլն) ինչպես վերգետնյա, այնպես էլ ստորգետնյա օրգաններն անասունների թունավորում են առաջացնում:





# ՄՈՒԼԽՈՏԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ, ԲԱԶՄԱՑՄԱՆ ԵՎ ՏՍՐԱԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԴԱՏ — ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Մոլախոտային բուսականության հասցրած վերը թվարկած վնասները առավել սրությամբ են արտահայտվում այն պատճառով, որ մոլախոտերն ապրում են մշակովի բույսերի համակեցությամբ և հատկապես կլիմայական աննպաստ պայմաններում ու ցածր ագրոտեխնիկայի դեպքում ձնշում են նրանց, հաղթելով տեսակի պահպանման համար մղվող պայքարում:

Դա տեղի է ունենում մոլախոտերի կենսաբանական առանձնահատկությունների շնորհիվ, որոնց դրսևորումը սերտորեն կապված է նրանց ձևաբանական (մորֆոլոգիական) առանձնահատկությունների հետ:

Մոլախոտերն ունեն հզոր վարգացած, փնջաձև, առանցքային արմատներ, կոճղարմատներ ու ծլարմատներ, սոխուկներ, ցողունային ու արմատային պալարներ, որոնք մշակովի բույսերի հետ միևնույն դաշտում համակեցության մեջ են և թե խորությամբ, թե լայնությամբ թափանցելու տեսակետից մեծ մասամբ գերապանցում են վերջիններին: Բացի այդ, մոլախոտերի արմատային համակարգը իր հիմնական դերը կատարելու հետ միասին, կատարում է նաև սննդանյութերի պահեստի ու վեգետատիվ բազմազման օրգանի լրացուցիչ դերը, որը և ընդլայնում է նրանց առանց այն էլ արագ ու բազմակողմանի բազմազման հնարավորությունները: Օրինակ, ուղտափուշի արմատները որոշ դեպքերում կարող են մինչև 15 մ խորանալ:

Մոլախոտերի ուղղականգուն, բարձրացող, սողացող, փոփոզ, փաթաթվող, մագլցող և այլ տիպի ցողունները նույնպես, տարբեր բնական ու կոնկրետ աճի պայմաններում շատ ձկուն հարմարվածության հետևանքով կարող են չպահպանել տեսակին յուրահատուկ չափերը, ձևն ու աճման բնույթը: Փոփոխվող պայմաններում ինչպես ցողունը, այնպես էլ տերևները կարող են տարբեր ձևեր ընդունել ու երբեմն հակադիր դեր կատարել: Ջրի ու սննդի առատության և ցածր ագրոտեխնիկայի դեպքում մոլախոտերի ցողունները լինում են հաստ, լավ փոխադրունակ, տերևային մակերեսն ու վերգետնյա ամբողջ կանգվածը՝ տարածված: Այսպիսի պայմաններում առավել քանակությամբ չոր նյութեր կուտակելու ու առատ պտղաբերությունն ապահովելու նպատակով տրանսպիրացիան ուժեղացնելու համար ցողուններն ու հատկապես տերևները թավոտվում են: Իսկ մոլախոտերի համար աննպաստ ու մշակովի բույսերի համար նպաս-



տավոր պայմաններում մոլախոտերի ցողունները թավազրկվում և ընդհակառակը պատվում են մոմաշերտով, իսկ տերևների մակերեսը փոքրանում է և տևական չորացման պայմաններում վերածվում փշանման հավելվածների:

Հացաբույսերի դաշտերում դաշտային պատատուկը տիպիկ փաթաթվող բույս է, իսկ աննեցուկ տարածություններում, ցելադաշտերում, նույն մոլախոտը դառնում է փռվող:

Սակայն մոլախոտային բուսականության հարմարվածության ու տարածվելու կենսաբանական ամենաբնորոշ պայմանը նրանց առատ պտղաբերումն է, սերմերի տարածման բավապիսի հարմարանքները, նրանց առաջատայնությունը, կենսաբանական հարմարվածությունը մշակովի բույսերի ցանքերում ու տնկարկներում, տարբեր ժամանակաշրջաններում լինելու ու ծլունակության պահպանումը, սերմերի բացառիկ կենսունակությունը, ծլման պրոցեսի ձգձգվելը, խակ վիճակում ծլելը և այլն:

Նրինակ, հասկավոր հավակատարի մեկ բույսը կարող է տալ 485. 700 սերմ, այն դեպքում, երբ փափուկ ցորենի մեկ բույսը կավանկերպում է ընդամենը 1010, իսկ ճյուղավոր ցորենինը՝ 1950 հատիկ: Շոռանի բույսերը դաշտը վարակում են ոչ միայն իրենց աճած տեղում, այլև հասունանալուց նրա վերգետնյա օրգանները հողի վրայով զորվում են և այդպիսով սերմերը տարածում ավելի մեծ արեալով: Իշամառուլի, խատուտիկի, սնձի, դաշտային տատասկի, հալևորիկի և մի շարք այլ մոլախոտերի սերմերն իրենց վրա ունենալով վրձնաձև հատուկ հարմարանքներ, տարածվում են քամու միջոցով, վարակի համար ընդգրկելով ոչ միայն նոր հողամասեր, այլև ամբողջ հողային զանգվածներ: Քամու միջոցով սերմերի տարածման հեռավորությունը կախված է սերմի (և նրա թռչող հարմարանքի) ուղղահայաց կտրվածքի մակերեսի (S) և սերմի կշռի (M) հարաբերությունից, որը կոչվում է առաջատայնության գործակից (K) և արտահայտվում է հետևյալ բանաձևով՝ 
$$K = \frac{S(uv^2)}{M(q)}$$

Որքան առաջատայնության գործակիցը մեծ լինի, այնքան մոլախոտերի սերմերն ավելի երկար տարածություն կանցնեն և բույսի արեալը ավելի մեծ կլինի: Առաջատայնության փոքր գործակից (2, 3) ունեցող սերմերի կտրվածքի մակերեսի ու կշռի հարաբերությունը գրեթե համընկնում է մշակովի բույսերի սերմերի համանման ցուցանիշների հետ, և նրանք դաշտ են վերադառնում մշակովի բույսերի սերմերի հետ:

Մոլախոտերի մի մասի սերմերն էլ իրենց հաստ, անթափանց կեղևի շնորհիվ ոչ միայն նորմալ պայմաններում, այլ նույնիսկ անասունների մարտողական տրակտով անցնելիս չեն կորցնում ոչ իրենց ծլունակությունը







և ոչ էլ կենսունակությունը: Այսպիսով, մշակովի բույսերի դաշտերն աղբոսվում են նաև գոմաղբի միջոցով, եթե վերջինս դաշտ է տեղափոխվում թարմ, չհասունացած վիճակում: Մոլախոտերի մի մասի սերմերն էլ տարածվում են թռչունների, մարդկանց, անասունների, փոխադրամիջոցների և այլ ճանապարհներով, որովհետև նրանք ունեն կերեր, փշեր, խոզանակներ, կպչելու, կառչելու տարբեր հարմարանքներ:

Իրենց աճի ու վարձագման էվոլյուցիան անցկացնելով մշակովի բույսերի համակեցությամբ, մոլախոտերը մեծ մասամբ այնքան են հարմարվել «մշակութային» պայմաններին, որ թե մյուս օրգանների ձևով ու դերով և թե հատկապես սերմերով միանգամայն նմանվել են մշակովի բույսերին, իհարկե, հոգուտ իրենց գոյության, իրենց տեսակի պահպանման: Գարնանացան ցորենի ցանքերում՝ որումը, աշնանացան աշորայի ցանքերում՝ աշորային ցորենուկը, վարսակի ցանքերում՝ խրփուկը, հնդկացորենի ցանքերում՝ մատիտեղը և մի շարք այլ համակեցություններ իրենց աճի ու վարձագման տարբեր փուլերում ինչպես մյուս օրգանների, այնպես էլ սերմերի չափերով ու ձևով գրեթե չեն տարբերվում մշակովի բույսերից և չեն անջատվում նրանց սերմերից:

Որոշ մոլախոտերի (օրինակ, խրփուկի) միննույն բույսի տարբեր մասերում առաջացած սերմերը կարող են ունենալ տարբեր ծլունակություն, իրենց կենսունակությունը պահպանել տարբեր ժամանակ և ծլել տարբեր շերտության ու խոնավության պայմաններում: Կենսաբանական այսպիսի առանձնահատկությունները հնարավորություն են տալիս եղիլում պահպանել սերմերի որոշ՝ պահեստային պաշար, հետագայում ծլելու ու տեսակի պահպանումն ապահովելու համար:

Մոլախոտերի բազմացման, տարածման ու մշակովի բույսերի ցանքերն ու տնկարկներն աղբոսելու, նրանց աճն ու վարձացումը ճնշելու կենսաբանական պայմաններից մեկն էլ այն է, որ նրանք կարող են ընդգրկել գյուղատնտեսական, հողային ու կլիմայական ոչ թե մեկ, այլ իրենց պայմաններով միանգամայն տարբեր մի շարք գոտիներ, ոչ թե մեկ, այլ իրենց մշակման ու կենսաբանական առանձնահատկություններով միանգամայն տարբեր մշակովի բույսերի ցանքերն ու տնկարկները և միշտ էլ, մարդու անտարբերության պայմաններում, գերազանցել նրանց թե աճի և թե վարձագման ու պտղաբերման տեմպերով:

Բնական պայմաններում իրենց աճի ու վարձագման էվոլյուցիայի ընթացքում ձեռք բերած կենսաբանական հատկությունների միջոցով նրանց անարգել տարածման վիթխարի ընդունակություններին գումարվում են նաև ագրոտեխնիկական ու տնտեսական-կազմակերպական այն ազդակները, որոնք գիտակցաբար թե ակամա ընձեռնվում են մարդու կողմից նրա գործունեության ընթացքում, որպես վրիպում:



Փաստորեն մոլախոտերից ապատ «իդեալական» դաշտի վարակվածության սկիզբը դրվում է ցանքի ժամանակ՝ մոլասերմերով վարակված, ագրոկանոններով չնախատեսված, ոչ կոնդիցիոն, վատ պտված սերմերով կատարված ցանքի միջոցով: Մոլասերմերի 5%-ի առկայության դեպքում, ըստ ակադեմիկոս Գ. Ն. Աղաջանյանի, 1 կգ գարու սերմերի մեջ կպարունակվի մոլախոտերի 8200 սերմ, որի 200 գ/հ ցանքի նորմայի դեպքում մեկ հեկտար հողում կլինի 1.640.000 մոլասերմ:

Մոլախոտերի և նրանց սերմերի տարածմանը մեծապես նպաստում է մշակովի բույսերի ինչպես ուշ ու նոսր ցանքը, այնպես էլ ուշ բերքահավաքը: Ուշ ու նոսր ցանքի դեպքում մոլախոտերի աճի ու վարգացման լավ հնարավորություն է ստեղծվում. մինչև մշակովի բույսերի ծլելը, մոլախոտերն արդեն ծլած են լինում և ճնշում են առանց այդ էլ նոսր ցանված մշակովի բույսերին: Մշակովի բույսերի ուշ բերքահավաքի դեպքում մոլախոտերի «բերքահավաքը» նույնպես կատարվում է նրանց սերմերի լրիվ հասունացման շրջանում և, դաշտը աղբոտվում է թափված, իսկ սերմնանյութը՝ կալաման ժամանակ նրա մեջ ընկած սերմերով: Աշնանացան ցորենի մոմային հասունացման շրջանում կատարված բերքահավաքի ժամանակ հողի 1 մ<sup>2</sup> տարածության վրա եղել է 489 սերմ, իսկ նրանից ութ օր ուշ՝ լրիվ հասունացման փուլում կատարած բերքահավաքի դեպքում՝ 1063 սերմ (Աղաջանյան Գ. Ն.):

Մոլախոտերի սերմերով դաշտերի վարակվածությունը մեծ չափերի է հասնում սերմերը պտելուց առաջացած թափոններից, անկանոն ոռոգումից և դաշտերի անմշակ տարածություններում, միջնակներում, կալատեղերում, դեպատեղերում, ոռոգման ցանցի հողամասերում տարածված մոլախոտերի դեմ չպայքարելու, հնձի ու կալաման ժամանակ մոլախոտերի սերմերը չառանձնացնելու ու ոչնչացնելու պատճառով:

Մոլախոտերի բնորոշ առանձնահատկություններից մեկը նրանց անսահմանափակ արեալն է, գոտուց գոտի արագ ու կարճաժամկետ տեղափոխման ընդունակությունն ու կլիմայափոխման նկատմամբ ցուցաբերած ճկունությունը:

Սպիտակ թելուկը, միամյա կնճռուկը, սողացող սեպը, սովորական արվանտակը, եպան լեզվի տարբեր տեսակներն ու շատ այլ մոլախոտեր ընդգրկում են ոչ միայն Հայաստանի, այլև Միության տարբեր գոտիները ծովի մակերևույթից 0-ից մինչև 3000 մ բարձրության վրա աղբոտելու մշակովի գրեթե բոլոր բույսերի ցանքերն ու տնկարկները:





# ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԱՍԱԿԱՐ- ԳՈՒՄԸ



Մինևույն կամ համընկնող կենսաբանական առանձնահատկություններ ունեցող մոլախոտերն այդ առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու պայթարի միջոցառումները հիշտացնելու նպատակով դասակարգվում են առանձին կենսաբանական խմբերում և ըստ ավելի նեղ համանման ու համընկնող հատկանիշների՝ ստորադասավում են այդ խմբերում:

Ըստ կենսաբանական առանձնահատկությունների (հատկապես ապրելակերպի) մոլախոտային ամբողջ բուսականությունը բաժանվում է կենսաբանական երկու խմբի՝ ոչ պարապիտների (ոչ մակաբույծներ, ինքնասուններ) և պարապիտների (մակաբույծներ, այլասուններ):

Ոչ պարապիտ մոլախոտային բուսականության բոլոր ներկայացուցիչները սեփական, քլորոֆիլային հատիկներ ունեցող կանաչ տերևներով ու սեփական արմատներով կանաչ բույսեր են: Նրանք սնվում են ինքնուրույն՝ արմատներով ջուր և նրանցում լուծված հանքային սննդանյութեր վերցնելու և տերևներով ֆոտոսինթեզ կատարելու եղանակով:

Պարապիտ մոլախոտերը կամ չունեն սեփական արմատներ, ոչ էլ կանաչ տերևներ (լրիվ պարապիտներ), կամ ունեն միայն մեկը կամ մյուսը (կիսապարապիտներ): Կենսաբանական այս խմբի ներկայացուցիչները սնվում են կանաչ բույսերի հաշվին, նրանց ցողունների (ցողունային պարապիտներ) կամ արմատների (արմատային պարապիտներ) վրա՝ օգտագործելով նրանց պատրաստած օրգանական նյութերը:

Ոչ պարապիտ մոլախոտերն ըստ իրենց կյանքի տևողության բաժանվում են երկու խմբի՝ սակավամյանների և բազմամյանների:

Սակավամյա մոլախոտերի կյանքը տևում է մեկ կամ երկու տարի: Այդ ժամանակաընթացքում նրանք սերմեր են տալիս, որից հետո բույսը ամբողջությամբ մահանում է: Բույսերը բազմանում են միայն սերմերով:

Այս ենթախմբի մոլախոտերն ըստ աճի ու վարձագման ցիկլերի բաժանվում են *մոնոցիկլիկների*, որոնք ծլում և սերմ են տալիս մեկ վեգետացիայի ընթացքում (վաղ և ուշ զարնանայիններ, էֆեմերներ) և *դիցիկլիկների*, որոնք ծլում են նախորդ տարվա աշնանը, ձմեռում են վարդակի կամ թփակալման փուլում և սերմ են տալիս հաջորդ վեգետացիայի ընթացքում (ձմեռողներ, ձմեռայիններ, երկամյաներ):

Բազմամյա մոլախոտերի բույսերը սերմեր տալուց հետո նույն վեգետացիայի վերջում ամբողջովին չեն մահանում, այլ պահպանելով վեգետատիվ բազմացման բոլոր օրգաններ, հաջորդ տարիներին շարունակում են իրենց աճն ու վարձագումը: Նրանց մի մասը հիմնականում սերմերով և մասամբ վեգետատիվ օրգաններով է բազմանում, իսկ մյուս մասը՝ ընդհակառակը: Այս խմբի մեջ մտնող ենթախմբերը բնութագրվում են ըստ իրենց վեգետատիվ բազմացման օրգանների և նրանց անունով էլ կոչվում են՝ առանցքարմատավորներ, փնջարմատավորներ, կոճղարմատավորներ, ծլարմատավորներ, սոխուկավորներ, արմատապալարավորներ, ցողունապալարավորներ, տերևապալարավորներ, սողացողներ (տես մոլախոտերի դասակարգման սխեման):



# Մ Ո Լ Ա Խ Ո Տ Ե Ր Ի Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ Ը

**Ո Չ Պ Ա Ր Ա Չ Ի Տ Ն Ե Ր**

**Ս Ա Կ Ա Կ Ա Մ Յ Ա Ն Ե Ր**

**Բ Ա Չ Մ Ա Մ Յ Ա Ն Ե Ր**

**Մ Ո Ն Ո Յ Ի Կ Լ Ի Կ Ն Ե Ր**

**Դ Ի Յ Ի Կ Լ Ի Կ Ն Ե Ր**

**Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Մ Ս Ե Ր Մ Ե Ր Ո Վ Բ Ա Ձ Մ Ա Յ Ո Ղ Ն Ե Ր**

**Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Մ Վ Ե Գ Ե Տ Ա Տ Ի Վ Բ Ա Ձ Մ Ա Յ Ո Ղ Ն Ե Ր**

Է ֆ Ե Ն Ե Ր Ն Ե Ր  
Վ ա Ղ Գ ա Ր Ն ա ն ա յ Ի ն ն Ե Ր  
Ո ի Չ Գ ա Ր Ն ա ն ա յ Ի ն ն Ե Ր

Ա Չ Ն ա ն ա ծ Ի Ն Ե Ր  
(Ճ մ ե ո ո Ղ ն Ե Ր, Ճ մ ե ո ա յ Ի ն ն Ե Ր)  
Ն Ր Կ ա Մ յ ա ն Ե Ր

Ա ո ա ն յ ք ա ա Ր մ ա տ ա վ ո Ր ն Ե Ր  
Փ ն Ջ ա Ր մ ա տ ա վ ո Ր ն Ե Ր

Ծ Լ ա Ր մ ա տ ա վ ո Ր ն Ե Ր  
Կ ո ճ Ղ ա Ր մ ա տ ա վ ո Ր ն Ե Ր  
Պ ա Ն ա Ր ա վ ո Ր ն Ե Ր  
Ս ո Ի ու Կ ա վ ո Ր ն Ե Ր  
Ս ո Ղ ա Կ ո Ղ ն Ե Ր

**Պ Ա Ր Ա Չ Ի Տ Ն Ե Ր**

**Լ Ր Ի Վ Պ Ա Ր Ա Չ Ի Տ Ն Ե Ր**

**Կ Ի Ս Ա Պ Ա Ր Ա Չ Ի Տ Ն Ե Ր**

Ա Ր Մ ա տ ա յ Ի Ն  
Ճ ո Ղ ու ն ա յ Ի Ն

Ա Ր Մ ա տ ա յ Ի Ն



ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ



## ՍԱԿԱՎԱՄՅԱՆԵՐ

**Էֆեններներ:** Մոնոցիկլիկ մոլախոտեր են, կոչվում են նաև կարճատև զարնանայիններ կամ կարճատև ամառայիններ: Ունեն կարճ վեգետացիա, մեծ քանակությամբ սերմեր են տալիս և մեկ վեգետացիայի ընթացքում կարող են մի քանի անգամ ծլել ու պտղաբերել:

Պատկանում է մեխակազգիների (Caryophyllaceae) ընտանիքին: Երկշաքիլավոր բույս է: Ունի թույլ վարգացած, փնջաձև արմատներ, պառկած կամ կիսականգուն, թույլ թավոտ, 10—80 սմ բարձրությամբ ցողուններ, որոնց վրա՝ հողի շերտի հետ շփվող հանգույցներից առաջանում են հավելյալ արմատներ: Տերևները մանր են, սրավուն-օվալաձև: Ունի մանր, աստղաձև, սպիտակ պսակաթերթիկներով ծաղիկներ: Հինգփեղկանի տուփում տեղավորված են կլորավուն կամ երիկամաձև, մոխրագույն կամ մուգ դարչնագույն, փայլատ սերմերը, որոնք տուփի հասունանալը բացվելուց անմիջապես հետո թափվում են: Մեկ բույսը կարող է տալ մինչև 25.000 սերմ, որոնք կարող են հողում ծլունակությունը պահպանել 4—25 տարի, ծլում են 1,5—2 սմ խորությունից: Սերմերը կարող են ծլել և գարնանը, և ամռանն ու աշնանը: Այդ պատճառով էլ աստղիկը մեկ վեգետացիայի ընթացքում կարող է մի քանի սերունդ տալ և հանդես գալ նաև ձմեռող ձևերով:

Տարածված է երկրագնդի հատկապես բարեխառն գոտում: Հայաստանի գրեթե բոլոր գոտիներում աղբոտում է հացաբույսերի, բանջարաբուստանային բույսերի, խոտաբույսերի ցանքերն ու պտղատու այգիների տնկարկները: Տարածվում է ծովի մակերևույթից մինչև 2300 մ բարձրության վրա, որի պատճառով էլ ենթալպյան մարգագետիններում չի աճում:


## ՈՉ ՊԱՐԱԶԻՏՆԵՐ

ԱՍՏՂԻԿ ՄԻՋԻՆ

STELLARIA MEDIA L.

ЗВЕЗДЧАТКА СРЕДНЯЯ

1. Բույսը ծաղկման ու պտղակալման շրջանում. փրփուղ ցողունները հատված են. 2. Արմատը բույսի վեգետացիայի վերջում և գետնամերձ ցողուններից առաջացած արմատները. 3. Ծիրը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը բաժակաթերթերով (խոշորացրած). 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:







ԲՈՂ ԳԱԶԱՐԱՆՄԱՆ

CAUCALIS DAUCOIDES L.

ПРИЦЕПНИК МОРКОВНЫЙ



1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում, գլխավոր ցողունը միջին և գազաթի մասից հատված է. 2. Արմատը վեգետացիայի վերջում. 3. Ծիրը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմը բնական և խոշորացրած (մեջքի կողմից և կողքից) չափերով:



Վաղ զարնանայիններ: Այս ենթախմբի ներկայացուցիչները ծլում են վաղ զարնանը, քանի որ նրանց սերմերը ծլման բարձր ջերմաստիճան չեն պահանջում: Այդ պատճառով էլ վաղ զարնանային մոլախոտերը մեծ մասամբ վարակում են վաղ զարնանացան բույսերի (ցորեն, գարի, վարսակ) դաշտերը: Հայաստանում տարածված են այս ենթախմբի հետևյալ տեսակները:

Նեխուրազգիների (Umbelliferae) ընտանիքին պատկանող երկշաքիլավոր բույս է: Ծլում է վաղ զարնանը: Արմատն ուղղաձիգ առանցքային է, բարակ, նուրբ երկրորդային արմատներով ու մազարմատներով: Արմատը թափանցում է վարելաչերտի խորությամբ: Ցողունները մեծ մասամբ ճյուղավոր են, հապվադեպ ուղիղ, ծածկված մանր փշերով: Ցողունի բարձրությունը հասնում է մինչև 40 սմ և բռնում է հացաբույսերի երկրորդ հարկը: Տերևաթիթեղները կրկնակի, եռակի փետրաձև են:

Հովանոցը երկարակոթ է, ճառագայթներով, որոնց ծայրին գտնվում են սպիտակ ու մանուշակագույն ծաղիկները: Դրանց մեծ մասը առաջացնում է երկարավուն-սուր, ամբողջությամբ փշերով պատված պտուղներ, որոնցով և տարածվում, և բազմանում է մոլախոտը: Բույսերը ծաղկում են ապրիլից սկսած և հասունանում հացաբույսերի հետ միաժամանակ կամ նրանցից 1—2 շաբաթ առաջ, աղբոսելով ամբողջ հողատարածությունները:

Տարածված է Ասիայի որոշ մարզերում, Աֆրիկայի հյուսիսում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում, Կովկասում: Հայաստանում տարածված է հիմնականում նախալեռնային ու լեռնային գոտիներում, աղբոսելով հացաբույսերի, միամյա խոտաբույսերի ցանքերը, ցեղադաշտերը, խաղողի ու պտղատու այգիներն ու այլ հողատեսքեր:



Հրանուկազգիների (*Ranunculaceae*) ընտանիքի միակյա մոլախոտ է: Ունի թփակալման հանգույցից սիմետրիկ ձևով դուրս եկող փրնջաձև արմատներ, որոնք, հատկապես վերին մասում, պատված են նուրբ մազարմատներով:

Ցողունները կանգուն են, ճյուղավորվող, ներքևի մասում ողորկ, վերևում՝ թույլ թավոտ: Նրանց միջին բարձրությունը հասնում է 30 սմ-ի: Ունի մատնաձև, հիմնականում եռաբաժան, կանաչադեղնավուն տերևներ, որոնց ծոցերից դուրս են գալիս երկրորդային ցողուններ:

Ծաղիկն ունի 5 բաժակաթերթ և նույնքան էլ դեղին գույնի պսակաթերթեր: Պտուղը ընկույզ է, տափակ կողմերից պատված ելուններով, կողքերից՝ նկատելի փշերով: Ծաղկակոթունի ծայրից աստղաձև դուրս են գալիս նման 5—6 ընկույզներ:

Բազմանում է միայն սերմերով, որոնք հեշտությամբ տարածվում են կենդանիներին, մարդկանց ու փոխադրամիջոցներին կպչելով: Երկրորդ հարկի մոլախոտ է, ծլում է վաղ գարնանն ու ծաղկում մայիս-հուլիս ամիսներին:



Տարածված է Եվրոպայի ու Ասիայի բարեխառն ու տաք, մեծ մասամբ խոնավ գոտիներում: Հայաստանում բարձրանում է մինչև միջին լեռնային գոտին, աղբյուրներում հիմնականում հացաբույսերի, առվույտի, կտավատի, ինչպես նաև բանջարաբոստանային բույսերի ցանքերն ու տնկարկները, խաղողի ու պտղատու այգիները:

## ԳՈՐՏՆՈՒԿ ԴԱՇՏԱՅԻՆ

### RANUNCULUS ARVENSIS L.

#### ЛЮТИК ПАШЕННЫЙ

1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում, երկրորդային ճյուղավորությունները հատված են: 2. Արմատը բույսի հասունացման փուլում: 3. Ծիլը շաքիլատերևներով: 4. Ծաղկի կտրվածքը: 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:








## ԽՐՓՈՒԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

*AVENA FATUA L.*

ОВСЮГ ОБЫКНОВЕННЫЙ



1. Բույսը հուրանակալման փուլում. միջին և գագաթային՝ հուրանային մասերը հատված են: Աջ կողմում հուրանը. 2. Արմատը բույսի հասունացման փուլում. 3. Ծիլը. 4. Հասկիկը ծաղիկներով. 5. Սերմը փորի կողմից:



Դաշտավուկազգիների (հացազգիներ) Poaceae (Gramineae) ընտանիքի վարսակի ցեղին պատկանող միամյա, վաղ զարնանային մոլախոտ է: Ունի փնջաձև արմատներ, մերկ, հիմնականում 50—60 սմ (և մինչև 120 սմ) երկարության հասնող ուղղաձիգ ցողուններ, որոնք վերջանում են մինչև 30 սմ երկարության հուրանով: Տերևները ձգված-երկարավուն են, չուգահեռ ջղեր ունեցող տերևաթիթեղներով, որոնց հիմքի մասը թավոտ է:

Դյուրաբեկ առանցքով հասկիկների ծոցում տեղավորված են 2—3 ծաղիկ: Հասկիկը, հատկապես հիմքի մասում, պատված է դեղնավուն մազմուկներով և նրան է ձուլված երկհատված քիստը, որի առաջին՝ հիմքի հատվածը, ոլորված է: Ընկնելով հողի մակերեսին, փոքր-ինչ խոնավանալու դեպքում քիստի հիմքի պարույրը ետ է ոլորվում, իր հետ ոլորելով ու հողի մեջ մտցնելով նաև սերմը: Կենսաբանական այս առանձնահատկությունը նպաստում է, որպեսզի հողի ամբողջ վարելաչափությունը վարակվի այս մոլախոտերի սերմերով (լավ թփակալված մեկ բույսը տալիս է մոտ 600 հատիկ): Խոնավությամբ ապահովված բարձրադիր գոտիներում խրփուկի աշնանային ծիլերը ձյան հաստ ծածկոցի տակ չեն ցրտահարվում, այդ պատճառով էլ այս մոլախոտը բարձր լեռնային ու նախալեռնային բարձրադիր գոտիների ամենաչարորակ մոլախոտերից է:

Խրփուկի արեալն ընդգրկում է ամբողջ Եվրոպան և Միջերկրական ծովին հարող շրջանները, Հյուսիսային Աֆրիկան, Մերձավոր Արևելքն ու Սկանդինավյան թերակղզու հարավը, ՍՍՀՄ-ում՝ Հարավային Ուկրաինան, Ղրիմը, Կովկասն ու Միջին Ասիան: Հայաստանում խրփուկը տարածված է Շիրակում, Լոռիում ու Սևանա լճի ավազանում:




Ծխաբույսազգիների (Fumariaceae) ընտանիքին պատկանող միամյա մուխտոտ է: Ծլում է հիմնականում վաղ գարնանը, սակայն ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին կամ ավելի վաղ: Տաք հարավում կարող է հանդես գալ նաև ձմեռող ձևերով: Ունի ուժեղ ճյուղավորվող առանցքային արմատ, որը թափանցում է մինչև 30 սմ խորությամբ: Ցողունները կիսականգուն են և տարածվում են շառավղաձև, ընդգրկելով մշակովի բույսերի ներքին հարկը:

Տերևները կապտականաչավուն են, եռակի փետրաձև, որոնք բաժանված են մատնաձև, բարակ տերևիկների: Ունի կապտամանուշակագույն ծաղկաբույլ, որի գույնը տերևների գույնի ներդաշնակմամբ ստեղծում է ծխի տպավորություն, որից և առաջացել է նրա անունը: Ունի մանր, կանաչավուն պտուղ և գրեթե կլոր, կարմրավուն-շագանակագույն սերմեր (ընկույզիկ): Մեկ բույսը տալիս է 300-ից մինչև 1600 սերմ, բազմանում է բացառապես սերմերով: Բույսը պատված է մոլաշերտով, որը և բարձրացնում է նրա դիֆուզորոդանությունը անբարենպաստ պայմանների նկատմամբ:

Տարածված է գրեթե ամբողջ Եվրոպայում, ընդգրկելով մինչև հյուսիսային լայնության 70°-ը: ԱՅՍ-ում տարածված է Միջին Ասիայում և Կովկասում: Հայաստանում դաշտավայրերից մինչև լեռնային շրջանները ծխաբույսի տարածվածությունը գնալով սչակասում է: Ծխաբույսի սերմերով հիմնականում աղբոտվում է հողը, Կտելիս մանր սերմերը անշատվում են հացաբույսերի սերմերից: Ամենից շատ աղբոտում է գազարի դաշտերը, քանի որ մատղաջ բույսը գազարի բույսից գրեթե չի տարբերվում: Հանդիպում է նաև գարնանացան հացաբույսերի, բանջարաբուստանային բույսերի դաշտերում:


73370 2954



ԾՒԱԲՈՒՅՍ ՎԱՅԼԱՆՏԻ

FUMARIA VAILLANTII LOIS.

ДЫМЯНКА ВАЙЛАНТОВА



1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլային ականջիկներով. 4. Ծաղկաբույլի մի հատվածը. 5. Պտուղը բնական և խոշորացրած չափերով. 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:



## ԿԱՂԱՄՐՈՒԿ ԴԱՇՏԱՅԻՆ

**BRASSICA CAMPESTRIS L.**

**КАПУСТА ПОЛЕВАЯ**



1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում. 2. Արմատը. 3. Ծիրը շաքիատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը (պատիճը) ընդլայնական կտրվածքով. 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Կաղամբազգիների (Brassicaceae) ընտանիքի երկշաքիավոր սովախոտ է: Հավասարապես կրում է նաև բողկուկ, շաղգամբուկ անունները: Ունի առանցքային, հիմնականում վարելաշերտի խորությամբ թափանցող արմատներ, որոնք առաջացնում են երկրորդային արմատներ և բավականին խիտ արմատամազիկներ: Ցողունները ուղղականգուն են, նոսր ցանքերում ուժեղ ճյուղավորվող, սկզբնական շրջանում մալի են, հասուն շրջանում՝ սնամեջ: Ցողունի հիմքի մասը և նրա չկարգացած ելուններն ունեն գորշ կամ մուգ մանուշակագույն երանգավորում, վերին մասն ավելի բաց գույնի է: Բույսերը հիմնականում ունեն 30—40 սմ, առանձին դեպքերում մինչև 120 սմ բարձրություն:

Տերևները տարածն են, հիմքի մասում բլթակաձև կտրտված, վերին մասում ավելի էլիպսաձև, դարձյալ կտրտված, սրածայր: Թե գլխավոր, թե կողային ճյուղավորումները վերջանում են դեղին գույնի մանր ծաղիկներով, որոնք ծաղկաբույլ են կազմում: Պտուղը բարակ, երկարավուն պատիճ է, որտեղ համրիչաձև տեղավորված են կարմրագորշ, 1,5 մմ տրամագիծ ունեցող սեղմված-կլորավուն սերմերը: Շաքիատերևները երիկամաձև են, որոնք ծիլերին են կպած ուռած կողմով, և փռվում-ծածկում են հողի մակերեսը: Բազմանում է սերմերով:

Տարածված է հյուսիսային բարեխառն գոտում: ՍՍՀՄ-ի և ՀՍՍՀ-ի բոլոր և հատկապես բարձրագիր գոտիներում, աղբոտում է հացաբույսերի, ինչպես նաև միամյա խոտաբույսերի ցանքերն ու ցեղադաշտերը:



Մատիտեղազգիների (Polygonaceae) ընտանիքի հնդկացորենի ցեղին պատկանող միամյա, վաղ գարնանային մոլախոտ է: Ունի դարչնագույն, բավականաչափ պարզացած առանցքային արմատներ և բոլոր կողմերից տարածվող մազարմատներ, որոնք իրենց հաստությամբ քիչ են տարբերվում երկրորդային արմատներից: Արմատների հիմնական վանգվածը տարածվում է վարելաշերտում, իսկ նպաստավոր պայմաններում կարող է թափանցել նաև ենթավարելաշերտը: Յողունները մեծ մասամբ կիսականգուն են, մերկ, հարթ, լավ ճյուղավորվող, փաթաթվելու համեմատաբար պակաս հակումով: Տերևները սրտաձև են:

Ծաղկափթույթունը ողկույզ է՝ նստած կոթունների վրա, որոնց ծայրին անաջանում է վահանաձև, թույլ վարդագույն ծաղկաբույլը: Սերմնապտուղը եռանիստ-բրգաձև է, կանաչավուն գույնի: Սերմը երկրաչափական նույն ձևն ունի՝ ավելի սրված եզրերով, սև գույնի է, փայլատ: Գործնականում միայն գույնով է տարբերվում մշակովի հնդկացորենի սերմերից և այս հանգամանքն էլ նպաստում է այս մոլախոտի, հատկապես սերբերով, անարգել տարածմանը հնդկացորենի ցանքերում:


Ծլում է վաղ գարնանը, ծաղկում է հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, աղբոտելով հիմնականում վաղ գարնանացան հացաբույսերի՝ գարնանացան ցորենի, գարու, հնդկացորենի, կանեփի դաշտերը, ընդգրկելով բավականին լայն արեալ՝ Հյուսիսային Ամերիկան, Չինաստանը, ՍՍՀՄ-ում՝ Ուրալը, Բելոռուսիան, միջինասիական ու կովկասյան գոտիները: Հայաստանում ամենաշատ տարածված է լեռնատափաստանային գոտում:

## ՀՆԴԿԱՑՈՐԵՆ ԹԱԹԱՐԱՎԱՆ

**FAGOPYRUM TATARICUM L.**

**ГРЕЧИХА ТАТАРСКАЯ**

1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում. կիսականգուն ճյուղավորումները հատված են. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմնապտուղը բնական և խոշորացրած չափերով. 6. Սերմը բնական չափերով:





ՄԱՏԻՏԵՂ ԹՈՋՆԻ

**POLYGONUM AVICULARE L.**

ГОРЕЦ ПТИЧИЙ



1. Բույսը ծաղկման փուլում. գետնատարած ճյուղավորումների մի մասը հատված է. 2. Արմատը. 3. Ծիլը. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմնապտուղը խոշորացրած. 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Պատկանում է մատիտեղազգիների (Polygonaceae) ընտանիքի մատիտեղ ցեղին: Միամյա, վաղ գարնանային մոլախոտ է: Ունի լավ վարգացած առանցքային արմատ, որի վերին ծայրին առաջացող բողբոջներից բույսը խիստ ճյուղավորվում է, տալով կարճ շեշտված հանգույցներով, փոփոկ կամ կիսականգուն, միջին հաշվով 30—40 սմ երկարությամբ ցողուններ: Հենց այդ հանգույցներից էլ սկսվում են սրավուն-էլիպսաձև տերևներն ու նրանց ծոցից՝ 2—5-ական մանր, սպիտակ, կանաչավուն կամ վարդագույն ծաղիկները: Բույսի ենթաշաքիղային մասը, ինչպես նաև հանգույցները, տերևների հիմքի հետ, ներկված են վարդագույն: Պտուղը եռանիստ է, թխագորշ, շատ մանր: Մեկ բույսը տալիս է մինչև 5300 սերմնապտուղ: Ծլում է վաղ գարնանը, գրեթե ձյան տակից: Ծաղկումը սկսվում է հունիսից և շարունակվում ամբողջ ամառվա ընթացքում: Նույն հարաբերությամբ էլ պտղաբերում է. սերմերը հեշտությամբ թափվում են՝ աղբոտելով հիմնականում հողը, ապա սերմնանյութը: Սերմերը երկար տարիներ հողում կարող են պահպանել իրենց ծղունակությունը և դրանով իսկ բույսին ընձեռել դաշտն աղբոտելու ու իր տեսակը պաշտպանելու պոտենցիալ հնարավորություն: Ավելի շատ հանդիպում է ճափփեղրերին, առուների ափերին, գյուղամիջյան ճանապարհներին: Աճում է գրեթե բոլոր հողերում ու հողատեսքերում:

Տարածված է Եվրոպայի ու ՍՍՀՄ-ի գրեթե բոլոր գոտիներում, բացի արևադարձային գոտուց: Հայաստանում աղբոտում է ցածրադիր, նախալեռնային ու լեռնային գոտիների բոլոր կոպտուրաների դաշտերը, ինչպես նաև ցելահողմամասերը, խամերը, խաղողի ու պտղատու այգիները:



Մատիտեղազգիների (Polygonaceae) ընտանիքի, միամյա, վաղ գարնանային մոլախոտ է: Առանցքային արմատների վրա՝ արմատավզիկից փոքր-ինչ ներքև, անաչանում են երկրորդային արմատներ: Նրանք թափանցում են հողի վարելաշերտից խորը: Ցողունները փաթաթվող են կամ փռված, ունեն մինչև 100 սմ երկարություն: Բույսը առաջին հայացքից նման է թաթարական հնդկացորենին և դաշտային պատատուկին: Թաթարական հնդկացորենից պետք է վանապանել տերևների ձևով, իսկ դաշտային պատատուկից՝ ծաղիկներով: Առաջինների տերևներն ավելի լայն են, սրտաձև, իսկ պատատուկային մատիտեղինը՝ ավելի նեղ ու նետաձև: Պատատուկանման մատիտեղի ծաղիկները հասկանման հուրաններ են և նըստած են ցողունների ծայրին, ունեն կանաչ գույն (նեսից սպիտակ են):

Նկարագրվող մոլախոտն ունի եռանիստ սերմնապտուղ, որի երկարությունը հասնում է 4 մմ: Սերմը սև է, խամրած գույն ունի: Ծաղկունը սկսվում է հունիսից և տևում մինչև աշուն: Պտղաբերում է հիմնականում սկսած ամառվա կեսից, և սերմերը 1—2 շաբաթով ավելի շուտ են թափվում, քան հասկավոր հացաբույսերինը: Նրանք աղբոտում են հողը, իսկ ուշ հասունացած սերմերն անցնում են սերմնանյութի մեջ և մանրահատիկ սերմերի հետ նորից դաշտ վերադառնում: Այս մոլախոտի յուրաքանչյուր բույսը կարող է տալ մինչև 6000 սերմ: Բավանում է սերմերով:

Տարածված է երկրագնդի գրեթե բոլոր լայնություններում, հատկապես Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, Ասիայում (Չինաստան, Ճապոնիա) և ՍՍՀՄ-ում՝ ամենուրեք: ՀՍՀՄ-ում տարածված է նախալեռնային, լեռնային ու ցածրադիր գոտիներում, աղբոտելով հատկապես հացաբույսերի դաշտերը, խաղողի ու պտղատու այգիները:

## ՄԱՏԻՏԵՂ ՊԱՏԱՏՈՒԿԱՅԻՆ

### POLYGONUM CONVOLVULUS L.

#### ГОРЕЦ ВЫЮНКОВЫЙ

1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում, գազաթափն մասը (աջ կողմում) փաթաթված է մեկ այլ բույսի ցողունի: 2. Հասուն բույսի արմատը: 3. Ծիրը շաքիլատերևներով: 4. Ծաղիկը խոշորացրած: 5. Սերմնապտուղը բնական և խոշորացրած չափերով: 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:





## ՏԱՐԱԾՈՒԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

### SPERGULA ARVENSIS MERT.

#### ТОРИЦА ОБЫКНОВЕННАЯ



1. Բույսը ծաղկման փուլում. 2. Արմատը. 3. Ծիրը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմը խոշորցրած:

Պատկանում է մեխակազգիների (Coryophyllaceae) ընտանիքին: Ունի չափավոր պարզացած առանցքային արմատ: Արմատավիկից առաջանում են աղեղնաձև կորացած, 15—40 սմ երկարությամբ ցողունները: Բույսը ճյուղավորվում է, իսկ ափսոսանքով ցողունները ճյուղավորվում են միայն գագաթային մասում: Ցողունը հիմքից մինչև գագաթը պատված է գեղձամազերով: Ցողունի հանգույցներում իրարից գրեթե հավասար հեռավորության վրա ճառագայթաձև դասավորված են նեղ ու սրված, կորույթամբ դեպի վեր ուղղված տերևախմբերը: Վերին տերևախմբի ծոցից դուրս եկող ծաղկակրթունքի վրա նստած է մեկ-երկու կամ երեք-հինգ պսականի աստղաձև, սպիտակ ծաղիկը: Ծաղկունը տևում է հուլիսից մինչև օգոստոս:

Սերմերը, մանր են, գրեթե գնդաձև, 1 մմ տրամագծով: Բազմասերմ տուփը հասունանալուց հետո բացվում է, և սերմերը թափվում են հողի մակերեսին: Մեկ բույսը կարող է տալ մինչև 10000 սերմ, որոնց մի մասը ձմեռելուց հետո, գարնանը հեշտությամբ ու համերաշխ ծլում է, մյուս մասը երկար ժամանակ հողում պահպանում է իր ծլունակությունը, իսկ մի մասն էլ վատ պտելու դեպքում մանրահատիկ սերմնանյութի հետ նորից վերադառնում է դաշտ:

Սերմերը ծլման համար ցածր ջերմաստիճան են պահանջում և 5 սմ-ից ավելի խորությունից չեն ծլում: Մոլախոտի փարթամ աճելու և ճյուղավորվելու հետևանքով մշակովի բույսը խիստ ճնշվում է և երբեմն օջախներով իր տեղը պիջում տարածուկին:

Տարածված է աշխարհի գրեթե բոլոր բարեխառն գոտիներում և Հայաստանի նախալեռնային և ցածրադիր, ինչպես նաև լեռնային գոտում, աղբոսելով հացահատիկի դաշտերը, բանջարանոցները, բոստաններն ու այգիները:



Դաշտավուրկազգիների (Poaceae) ընտանիքին պատկանող միամյա մոլախոտ է: Բավականին լավ վարգացած փնջաձև արմատները գրեթե վբաղեցնում են վարելաչերտի վերին մասը, իրենց կյանքի հողային պայմանների նկատմամբ ներկայացնելով ցորենին համահավասար պահանջներ: Յողունը ուղղական-գուն է, սնամեջ և կոպիտ, հասնում է 40—80 սմ բարձրության: Ունի 3—6 սմ լայնությամբ կանաչ գույնի մերկ տերևներ: Յողունի ծայրից սկսվում է խիստ ամուր ու ողորկ, 10—30 սմ երկարությամբ, սինուսիդի ձև ունեցող սունին, որի սեղմված-տափակ հիմնամասում նստած են 3—9 ծաղիկ ունեցող կանաչավուն հասկիկները: Հատիկն ունի հալիվ նկատելի սաղմ և շատ նման է գարնանացան ցորենի մանրահատիկ սերմերին, որը և պայմանավորում է ցորենի սերմնանյութի հետ այս մոլախոտի արագ ու անարգել տարածումը: Մոլախոտի սերմերը ցորենի սերմերից հեշտությամբ անջատելու համար անհրաժեշտ է ստեղծել գարնանացան ցորենի խոշորահատիկ, սելեկցիոն սորտեր:

Պարսկական որումը բազմանում է միայն սերմերով: Լավ թփակալված մեկ բույսը կարող է տալ մինչև 6000 հատիկ: Աշնան-գարնան ընթացքում անբարենպաստ հողային պայմաններում և ջրում սերմերն իրենց ծլունակությունը կորցնում են 8 ամսվա ընթացքում:

Տարածված է երկրագնդի հատկապես եվրոպական մասում, Կովկասում ու Անդրկովկասում: Հայաստանի լեռնային, լեռնատափաստանային ու անտառային գոտիներում խիստ կերպով աղբոսում է բոլոր հացահատիկային կուլտուրաների ցանքերը:


Հատիկի սերմնամաշկի տակ առաջացող թեմուլին ալկալոիդը որոմի սերմերին թունավոր հատկություն է հաղորդում:

## ՈՐՈՍ ՊԱՐՍՎԱԿԱՆ

**LOLIUM PERSICUM BOISS., ՈՐՈՆ.**

**ПЛЕВЕЛ ПЕРСИДСКИЙ**

1. Բույսը հասկակալման փուլում, ցողունը միջին մասից հատված է, աջ կողմում հասկը: 2. Արմատը: 3. Բույսը ծման վերջին փուլում: 4. Ծաղիկը խոշորացրած: 5. Սերմը փոքի կողմից ու կողքից բնական և խոշորացրած չափերով:






ԱՄԲՐՈԶԻԱ ՕՇԻՆՊՐԱՏԵՐԵՎ

AMBROSIA ARTEMISIFOLIA L.

АМБРОЗИЯ ПОЛЫННОЛИСТНАЯ



1. Բույսը՝ ծաղկման փուլում, ցողունի գագաթային մասը հատված է. 2. Հասուն բույսի արմատը. 3. Ծիլը շաքիատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը խոշորացրած:



Ուշ գարնանայիններ: Այս ենթախմբի մեջ մտնող տեսակները ծլում են, երբ հողի վերին շերտում արդեն 10° և ավելի ջերմություն կա: Այս մոլախոտերով խիստ վարակվում են ուշ գարնանը ցանվող ու տնկվող մշակովի բույսերը (եգիպտացորեն, շաքարի ճակնդեղ, ծխախոտ, բանջարաբուստանային բույսեր և այլն):

Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքին պատկանող միամյա, վաղ գարնանային, երկշաքիլավոր, կարանտին մոլախոտ է: Ունի ուղիղ, մինչև 4 մ խորությամբ գնացող առանցքային, իլիկաձև արմատ: Յողունն ուղիղ է, հաստ և ճյուղավորվող: Տերևները մատնանման ճյուղավորված են: Տերևաթիթեղի վերին կողմը մուգ կանաչ է, իսկ ներքինը՝ գորշավուն: Բույսը խիստ նման է օշինդրին:

Բույսը միատուն է, երկսեռ: Սերմը հակառակ ձվաձև կեղծ պտուղ է, որի վերին մասը վերջանում է բզանման ցցվածքներով: Լավ պտղաբերած բույսերը կարող են տալ մինչև 80—100 հազարական սերմ: Ծաղկույնը սկսվում է հուլիսի վերջին և շարունակվում է մինչև սեպտեմբեր, պտղաբերումը համապատասխանաբար՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին:

Մոլախոտի սերմերը բերվել են Ամերիկայից: Այժմ տարածված է Սովետական Միության Հարավ-Արևելքում, Հյուսիսային Կովկասում, Արևմտյան Վրաստանում, Ուկրաինայում, Ալմա-Աթայի մարզում և Պրիմորսկի երկրամասում: Արդեն ներքին կարանտինի մոլախոտ է և նկատվում է նաև Հայաստանում, ուր տարածվել է Կուբանից փոխադրված ծղոտի հետ: Այս մոլախոտը ուժեղ կերպով իջեցնում է գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների բերքատվությունը:



Լսուկեղինջազգիների (Lamiaceae) ընտանիքի արեղախոտ ցեղին պատկանող մոլախոտ է: Հայաստանում տարածված արեղախոտի միակ միանյա տեսակն է: Ունի արմատավզիկից սկսած լավ ճյուղավորվող ու խիտ արմատամազիկներով պատված առանցքային արմատներ, որոնց խտությունն ու համաչափությունը փնջարմատի տպավորություն կարող են ստեղծել: Նրանք հիմնականում տարածվում են հողի վարելաչերտում, իսկ նպաստավոր պայմաններում՝ ավելի խորը:

Բույսը պատված է վերևից դեպի ներքև ուղղված ցանցառ մազիկներով: Ցողունն ունի 15—30 սմ բարձրություն, ընդգծված կողերիկներ, արմատավզիկից ճյուղավորվում է կամ չի ճյուղավորվում: Ունի սղոցաձև տերևներ, ընդ որում ստորին տերևները ձվաձև երկարավուն են, երկար կոթունով, միջին տերևները ավելի նեղ են, իսկ վերինները՝ նշատարաձև, առանց կոթունի: Գլխավոր ցողունի և տերևածոցերից դուրս եկած ճյուղավորումների վրա օղակներով նստած է 3—6 ծաղկից բաղկացած ծաղկափթթությունը: Ծաղկի բաժակը գեղձային թավ ունի, պսակը դեղին է, ստորին շուրթի վրա կան կարմիր կետեր: Պտուղը գորշ գույնի ընկույզիկ է, սերմերը մանր են (1 մմ): Բազմանում է բացառապես սերմերով:


Տարածված է երկրագնդի բարեխառն գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական մասում: Հայաստանի նախալեռնային, լեռնային ու անտառալեռնատափաստանային գոտում աղբոտում է հացաբույսերի, բանջարաբոստանային ու այլ ջարահերկ բույսերի, բազմամյա ու միամյա խոտաբույսերի ցանքերն ու ցելադաշտերը:

## ԱՐԵՂԱԽՈՏ ՄԻԱՄՅԱ

### STACHYS ANNUUS L.

#### ЧИСТЕЦ ОДНОЛЕТНИЙ

1. Բույսը ծաղկման փուլում. կողային ցողունը հիսքից հատված է. 2. Արմատը. 3. Ծիրը շաքիատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը (ընկույզիկը) բնական և խոշորացրած չափերով:





ԱՆԹԵՄ ԳԱՐՇԱՀՈՏ

ANTHEMIS COTULA L.

ПУПАВКА ВОИЮЧАЯ



1. Բույսը ծաղկման փուլում. գլխավոր ցողունի հանգույցներից դուրս եկած երկրորդային ճյուղավորումները հատված են. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատեղևներով. 4. Ծաղկի կտրվածքը. 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի միանյա մոլախոտ է: Արմատը առանցքային է, իլիկաձև, կողքերից խիտ ճյուղավորվող:

Ունի ընդգծված գլխավոր ցողուն, որի հանգույցներից դուրս են գալիս երկրորդային ցողունները: Ցողունի բարձրությունը որոշ բույսերի մոտ նպաստավոր պայմաններում կարող է հասնել մինչև 50 սմ: Տերևի երակայական եզրագիծը էլիպսաձև է, կտրտված, նեղ-փետրաձև տերևամասերով: Ծաղիկները նստած են ցողունների ծայրերին, գրեթե միևնույն հորիզոնական հարթության վրա: Ծաղկի վամբյուղը կիսագլանաձև է, դեղին, լեզվակները՝ սպիտակ: Սերմը կողավոր է, կտրավուն, միջին մասը ավելի լայն, ստորին մասը՝ սրածև: Մակերեսը փայլատ է, դեղնաշագանակագույնից մինչև գորշ շագանակագույն երանգով: Բազմանում է միայն սերմերով: Ծլում է ուշ գարնանը, ծաղկումը սկսվում է հուլիսից և տևում մինչև աշնան վերջը: Մեկ բույսը միջին հաշվով տալիս է 1200 սերմ: Այս մոլախոտը դաշտային անթեմից տարբերվում է իր սուր գարշահոտով:

Նրա համաշխարհային արեալը ընդգրկում է Եվրոպան, Արևմտյան Ասիան, Հյուսիսային Աֆրիկան ու Հյուսիսային Ամերիկան, Ավստրալիան: ՍՍՀՄ-ում ամենամեծ տարածում է գտել եվրոպական մասում և հյուսիս-արևմտյան Սիբիրում: Հայաստանում՝ Արարատյան հարթավայրի ու նրա նախալեռնային գոտում աղբոտում է հացաբույսերի դաշտերը, այգիները, անմշակ տարածությունները:



Պատկանում է փիփերթազգիների (տուղտազգիներ) (Malvaceae) ընտանիքին: Միամյա, ուշ գարնանային մոլախոտ է: Ունի առանցքային, ոչ շատ խորը գնացող արմատներ: Ցողունը ուղղականգուն է, մեծ մասամբ ճյուղավորվող, որի վրա եղած նոսր գեղձամազերը թույլ թավ են կապում: Ցողունի բարձրությունը 15—45 սմ է: Բոլոր տերևները կոթունավոր են, 3—5-մասնյա, ելունավոր բլթակներով, ըստ որում ներքևի տերևները գրեթե կլորավուն են: Բաժակաթերթերը գորշ կանաչավուն են, մուգ գծերով, թավոտ: Պսակաթերթերը դեղին գույնի են, հիմքում ծիրանագույն բծերով:

Պտուղը տուփիկ է: Սերմերը եռակող են, սրտաձև, հասուն շրջանում երկու կողմից սեղմված, մուգ դարչնագույնից մինչև սև, փայլատ, մանր ելուններով: Բազմանում է բացառապես սերմերով: Սերմերը ծլում են ուշ գարնանը, շարահերկ բույսերի և հատկապես բամբակենու սերմերի հետ: Աճի ու վարձագման գրեթե բոլոր (հատկապես ծաղկման ու սերմերի հասունացման) փուլերը համընկնում են բամբակենու հետ:

Ամենից շատ տարածվում է Արևելյան Եվրոպայում և ընդգրկում է Ասիայի ամբողջ հարավը, Ավստրալիան, Հարավային Ամերիկան: Վարակում է ՍՍՀՄ եվրոպական մասի, Կովկասի, Միջին Ասիայի, Արևելյան Սիբիրի, Հեռավոր Արևելքի, Սովետական Հայաստանի ցածրադիր ու նախալեռնային գոտիների, հատկապես կավավալային հողերում մշակվող բամբակենու, խորդենու, բրնձի, կորեկի բանջարանոցային ու այլ մշակովի բույսերի ցանքերն ու տնկարկները:


## ԲԱՄԲԱԿԱՆԲԵՐ ՈՒՌԱԾ

### HIBISCUS TRIONUM L.

### ГИБИСКУС ВЗДУТЫЙ



1. Բույսը ծաղկման ու պտղակալման շրջանում. գլխավոր ու երկրորդային ցողունները հիմքից հատված են. 2. Հասուն բույսի արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղկի կտրվածքը. 5. Պտղի կտրվածքը բաժակաթերթերով. 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:









ՊԱՆԴՈՒՌ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ

PORTULACA OLERACEA L.

ПОРТУЛАК ОГОРОДНЫЙ



1. Բույսը ծաղկման փուլում. գլխավոր ցողունը հիմքի և զագաթի մասերից, կողային (շառավղային) ճյուղավորումները հիմքից հատված են. 2. Հասուն բույսի արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:



Պատկանում է դանդուռազգիների (Portulacaceae) ընտանիքին, ունի մապարմատների խիտ ցանցով պատված առանցքային արմատ: Արմատը, ինչպես նաև մապարմատները գունավորված են կարմրավուն երանգով: Արմատավիկից ճառագայթաձև դուրս են գալիս փովող ցողունները՝ համանման ճյուղավորումներով: Նրանց երանգավորումը նույնպես կարմրավուն է, կառուցվածքը՝ փխրուն: Ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդային ցողունների վրա, մեծ մասամբ հակադիր, վարդակի ձևով դասավորված են հակառակ-ձվաձև, հիմքի մասում սրված տերևները, որոնք ունեն բաց դեղին երանգավորմամբ կանաչ գույն: Տերևների ծոցում, հիմնականում մեկական, մասամբ՝ 2—3-ական հատով նըստած են վառ դեղին պսակաթերթերով ծաղիկները: Բեղմնավորումից հետո առաջանում է բազմասերմ տուփիկը, որի մեջ գտնվում են 0,7 մմ երկարությամբ, շագանակագույն-սև, փայլուն սերմերը:

Սերմերը ծլում են գարնան կեսին, ծաղկում՝ հունիս-հուլիսին, տալով մեծ քանակությամբ սերմեր: Այդ պատճառով էլ այն հանդիսանում է շարահերկ-տեխնիկական և բանջարաբուստանային կուլտուրաների ուղեկից մուլխոտ: Չնայած բույսը բազմանում է սերմերով և, իհարկե, միամյա է, սակայն արմատավիկից վերև ցողունները կտրելու դեպքում բույսըն ընդունակ է նոր ցողուններ առաջացնելու:

Տարածված է երկրագնդի բարեխառն ու տաք գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Հեռավոր Արևելքում, Միջին Ասիայում, Կովկասում: Հայկական ՍՍՀ-ում աղբոտում է Արարատյան հարթավայրի ու նրա նախալեռնային գոտու բանջարաբուստանային, տեխնիկական բույսերի (հատկապես խոբդենու), ինչպես նաև հացաբույսերի ցանքերը:





Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի միանյա, ուշ գարնանային չարորակ մոլախոտ է: Ունի լավ վարգացած, ուղղահայաց դիրքով դեպի հողի խորը շերտերը գնացող առանցքային արմատ, աղեղնաձև, դեպի վեր ձգվող, մինչև 60—80 սմ բարձրության հասնող կտր կամ բավակող ու լիամեջ ցողուններ: Հասունանալիս, երբ ցողունն ընդունում է դեղնամանուշակագույն երանգ, փշերը նույնպես չորանում են, թողնելով միայն իրենց հետքերը: Ցողունի յուրաքանչյուր հանգույցից դուրս են գալիս երկար կոթուն ունեցող 3—5 բլթականի տերևներ, որոնց մակերեսի հակառակ կողմը պատված է թավով: Բույսի գրեթե յուրաքանչյուր տերևածոցից դուրս են գալիս մեկ կամ սովորաբար երեքական հատով նստած ծաղիկները: Պտուղները էլիպսաձև են, երկարավուն ու մեծ, բոլոր կողմերից պատված են կեռ փշերով, իսկ գագաթին ունեն երկու մեծ, առավել սուր, եղջյուրանման փշեր: Սերմը տուփիկ է, որի մեջ, հաստ ու ամուր պատյանի տակ տեղավորված են երկու երկարավուն սերմիկները: Տարածված է ինչպես երկրագնդի, այնպես էլ ՍՍՀՄ հարավում: Հայաստանում տարածված է գրեթե բոլոր շրջաններում, սակայն ամենամեծ տարածում գտել է Արարատյան, հյուսիս-արևելյան գոտիներում, ուր և աղբոտում է ուշ գարնանացան, հատկապես բանջարաբոստանային կուլտուրաների ցանքերն ու տնկարկները: Վարակի հիմնական աղբյուր են համարվում աղբոտ վայրերը, ճանապարհների ու առուների եզրերը: Պտուղները հասունանում են ամառվա վերջին և տարածվում գյուղատնտեսական կենդանիների (հատկապես ոչխարների), մարդկանց ու փոխադրամիջոցների միջոցով: Փչացնում է ոչխարի բուրդը և հանդիսանում դաշտային գաղձի վարգացման պայման: Բույսի բոլոր օրգաններում յոդ կա:

## ԴԱՌՆԱՓՈՒՅ ՍՈՎՈՐԱԿԱՆ

### XANTHIUM STRUMARIUM L.

### ДУРНЫШНИК ОБЫКНОВЕННЫЙ

1. Բույսը հասունացման փուլում. գլխավոր ցողունը միջին մասից, կողային ճյուղավորումները հիմքից հատված են. 2. Հասուն բույսի արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը. 5. Պտղի երկայնական կտրվածքը. կենտրոնում տուփիկն ու սերմերից մեկը. 6. Սերմը բնական չափերով:





ԵՂԻՆՋ ԱՅՐՈՂ

URTICA URENS L.

КРАПИВА ЖГУЧАЯ



1. Բույսը ծաղկման փուլում. 2. Արմատը. 3. Ծիրը շաքիլատերևներով. 4. Արական և իգական ծաղիկները. 5. Պտուղը բնական և խոշորացրած. 6. Սերմը բնական և խոշորացրած (կողքից) չափերով:

Պատկանում է եղինջազգիների (Urticaceae) ընտանիքին: Միամյա, ուշ գարնանային բույս է, ունի ոչ այնքան ուժեղ կարգացած առանցքային արմատ, որը, սակայն, բնորոշ է լավ ցանցավորված արմատամազիկներով: Գլխացանցավորված արմատամազիկներով: Գլխավոր ցողունը ուղղականգուն է, արմատավիկից խոր ցողունը ուղղականգուն է, արմատավիկից խոր ցողուններն էլ քարանիստ են, ունեն մանր, ծակող-այրող փշեր: Ցողունների հանգույցներում, գրեթե հավասար հեռավորությամբ, կոթբույսերի վրա հակադիր ձևով նստած են ձվաձև, սուր ծայրերով և կանոնավոր-սղոցաձև եզրերով տերևները, որոնք ունեն մուգ կանաչ գույն և լավ արտահայտված շղակորություն: Արական և իգական ծաղիկները, որոնք օղականման ծաղկաբույլ են կազմում, նստած են տերևածոցերում: Նրանք ունեն բաց դեղին և կանաչ ծաղկապատյան: Սերմերն ունեն 1,5—2 մմ երկարություն, սեղմված-ձվաձև են: Ամբողջ բույսը ծածկված է խայթող-այրող գեղձամազիկներով: Բազմանում է բացառապես սերմերով (մեկ բույսը կարող է տալ մինչև 1300 սերմ), որոնց ծուլը տևում է գրեթե ամբողջ գարնանը: Այդ պատճառով էլ այն կարող է հավասարապես աղբոտել թե վաղ, թե ուշ գարնանը ցանվող բույսերի ցանքերն ու տնկարկները: Ծաղկունը սկսվում է հունիս ամսից և տևում է մինչև աշուն:

Այս մոլախոտի համաշխարհային արեալը ընդգրկում է ամբողջ Եվրոպան, Ասիան, Հյուսիսային Աֆրիկան, Ավստրալիան, Հյուսիսային Ամերիկան: ՄՍՀՄ-ում տարածված է Սիբիրում, Հեռավոր Արևելքում, ՄՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում, Կովկասում: Հայաստանում աղբոտում է լեռնային, լեռնատափաստանային ու անտառատափաստանային գոտիների խոտաբույսերի ցանքերն, արոտներն ու մարգագետինները:



Թելուկազգիների (Chenopodiaceae) ընտանիքի միանյա, ուշ զարնանային մոլախոտ է: Լավ վարգացած, խիտ արմատամազիկներով պատված առանցքային արմատը կարող է հողի վարելաչափից էլ խորը թափանցել: Ցողունը կլոր է, ողորկ, կանաչ ֆոնի վրա՝ դեղին, ուղղաձիգ գծերով: Գլխավոր ցողունը հաստ է, բավականաչափ ճյուղավորված և հասնում է մեկ մետր և ավելի բարձրության: Տերևները կոթունավոր են, լինում են խմբերով, որոնցից մեկը սովորաբար մեծ է, մյուսները՝ թերվարգացած: Հատկապես տերևների հակառակ կողմը, և ընդհանրապես բույսը, պատված է այրանման փառով, որը բույսին տալիս է սպիտակավուն երանգ: Ծաղիկը հնգամաս է, կանաչադեղնավուն՝ սպիտակ երանգավորմամբ: Ծաղիկների խումբը տերևվածոցերից դուրս եկած ընդհանուր կոթունի վրա հուրանաձև ծաղկաբույլ է կազմում: Սերմերը մանր են, գորշ գույնի, կլոր, երկու կողմից տափակված: Բույսն աչքի է ընկնում իր բարձր պտղաբերությամբ (ավելի քան 100.000 սերմ մեկ բույսից): Սերմնապատյանն ամուր է, շատ քիչ ջրաթափանց, որի հետևանքով սերմերը հողում իրենց ծլունակությունը կարող են պահպանել երկար ժամանակ:

Տարածված է Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի նպաստավոր կլիմա ունեցող գոտիներում: Ընդգրկում է ՍՍՀՄ ու ՀՍՀ բոլոր բնական գոտիները, աղբոտելով թե դաշտային կուլտուրաների ցանքերը և թե խաղողի ու պղտղատու այգիները: Օգտագործվում է որպես անասնակեր: Սերմերի բաղադրության մեջ կարողինը զգալի տեսակարար կշիռ ունի: Մատղաշ բույսն օգտագործվում է ժողովրդական սննդի մեջ:

## ԹԵԼՈՒԿ ՍՊԻՏԱԿ

### CHENOPodium ALBUM L.

#### МАРЬ БЕЛАЯ

1. Բույսը ծաղկման և պտղաբերման շրջանում, գլխավոր ցողունը միջին և գագաթի մասերից հատված է. 2. Արմատը. 3. Ծիրը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը (սերմը) բնական և խոշորացրած չափերով:







ՏԱՏԱՇ ԳԵՏՆԱՏԱՐԱԾ

TRIBULUS TERRESTRIS L.

ԿՈՐԿԻ



1. Բույսը ծաղկման վերջին և հասունացման սկզբնական շրջանում. գետնատարած, շառավղային ճյուղավորումները հատված են. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտղիկը:



Չուգատերևազգիների (Zygophyllaceae) ընտանիքի միանյա, ուշ գարնանային, փոփոջ մոլախոտ է: Առաջացնում է ցողունային ճյուղավորումների խիտ ցանց: Տերևները պուլպ փետրաձև են, հակադիր-բարդ, մանր ու թավոտ:

Ծաղիկներն անութային են, դեղնավուն, 6—10 մմ երկարությամբ: Ընձյուղիկները եռանիստ են, փշոտ ելուստներով, որոնք հասունանալիս բաժանվում են առանձին պլուդիկների: Վերջիններն ունեն երկու պուլպ սուր ելուստներ (փշեր), որոնք շատ մանր են, դժվար կոտրվող, 1000 ընկուպիկը կշռում է 3—6 գ:

Սերմերը երկարավուն, հակառակ-ձվաձև են, ունեն խորդուբորդ, փայլատ մակերես: Սերմերի երկարությունը առանց փշիկների 2,75—3 մմ է, լայնությունը և հաստությունը՝ 0,75—1,0 մմ: Ծաղկում է մայիսից մինչև աշուն: Չոր պայմաններում արագորեն պտղաբերում և չորանում է, տալով մեծ թվով պտուղներ:

Տարածված է գլխավորապես ՍՍՀՄ հարավում՝ Ղրիմում, Կովկասում, միջինասիական հանրապետություններում: Աճում է ճանապարհների ելրերին, միջնակներում, չմշակվող ավազային բերվածքներում: Աղբոտում է ջրովի և անջրդի ցորենի, գարու, ինչպես նաև առվույտի, բոստան-բանջարանոցային բույսերի ցանքերը, հանդիպում է նաև այգիներում, խամահողներում, աղբատեղերում:



Դաշտավուկազգիների (Poaceae) ընտանիքի միանյա բույս է: Ունի փնջաձև, հզոր արմատային համակարգ: Ցողունը ուղիղ է, մինչև 50 սմ բարձրության, թփակարման հանգույցից լավ ճյուղավորվող: Հիմնականում մերկ է, բայց ծաղկաբույլի մոտ՝ թույլ թավոտ: Ցողունը տերևակալում է թփակարման հանգույցից սկսած՝ տալով նեղ, ձգվող ու կուգահեռ ջղավորությամբ տերևներ: Ծաղկաբույլը հասկ է, գլանաձև ու խիտ: Խոզանները (քիստերը) հասկիկներին կից են ու շեկ: Հենց այդ գույնով էլ այն արտաքինապես կարելի է վանազանել կանաչ խոզանուկից: Ամբողջ բույսը թխակապույտ է, այդ պատճառով էլ գրականության մեջ այն անվանվում է նաև թխակապույտ խոզանուկ: Սերմերը մանր են, ձվաձիր, փոքի կողմից՝ տափակ, ունեն դեղնաշագանակագույն գունավորում, փոքր-ինչ գորշավուն երանգով: Լավ թփակարված մեկ բույսը նպաստավոր պայմաններում կարող է տալ մինչև 6000 սերմ, որոնք իրենց կենսունակությունը կարող են պահպանել 10—15 տարի:

Սերմերը ծլում են ուշ գարնանը, աղբոտելով ուշ գարնանացան՝ հատկապես տեխնիկական ու բանջարաբուստանային կուլտուրաների ցանքերն ու տնկարկները: Ծիլերը գրեթե չեն տարբերվում կորեկի ու ստղանի խոտի ծիլերից, այդ պատճառով էլ այս մոլախոտը առավել մասնագիտացած է վերը նշված կուլտուրաներին:


Անթավ խոզանուկը տարածված է Եվրոպայի միջին գոտում, ՍՍՀՄ եվրոպական մասում, հարավ-արևմտյան շրջաններում, Արիմում, Միջին Ասիայում, Կովկասում: Հայաստանում տարածված է Արարատյան հարթավայրի, նախալեռնային ու լեռնային գոտիների դաշտային բոլոր կուլտուրաների ցանքերում ու այգիներում:

## ԽՈՉԱՆՈՒԿ ԱՆԹԱՎ

### SETARIA GLAUCA L.

### ЩЕТИННИК ГОЛЫЙ

1. Բույսը հասունացման փուլում: գլխավոր ցողունը հատված է միջին և վերին մասերից. 2. Արմատը. 3. Ծիլը. 4. Հասկիկը խոզանուկներով. 5. Հատիկը առանց հասկաթեփուկների:





## ԿՈՏԵՍ ԴԱՇՏԱՅԻՆ

**LERIDIUM CAMPESTRE R. BR.**

**КЛОПОВНИК ПОЛЕВОЙ**



1. Բույսը ծաղկման և հասունացման շրջանում. կո դային ճյուղավորումները հատված են: 2. Արմատը.
3. Ծիլը շաքիլատերևներով.
4. Ծաղիկը խոշորացրած.
5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Կաղամբազիների (Brassicaceae) ընտանիքին պատկանող երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի ճյուղավորվող ու արմատամազիկների խիտ ցանցով պատված արմատներ: Ցողունը կանգուն է, անկանոն ճյուղավորված, մապապատ: Այն հասնում է ընդամենը 35—40 սմ, սակայն հողի մակերեսին մոտ մեծ տարածություն է զբաղեցնում, սովորաբար կեղծ հատկապես մատղաշ մշակովի բույսերին: Ցողունային ճյուղավորումները հերթադիր են: Տերևները երկարավուն-լեզվակաձև են, վերին տերևները երկարակողմ են, փետրաձև, իսկ ստորինները՝ ամբողջական: Ճյուղերի գագաթային մասը ամբողջությամբ վերածվում է ծաղկաբույլի, որն ունի դեղնագորշ, բաց դարչնագույն երանգ: Ծաղիկն ունի չորս բաժակաթերթ ու երկու առէջ, սերմը ակոսավոր է, օվալաձև-սեղմված:

Բույսը պտղաբերման բավականին մեծ հակում ունի (մեկ բույսը տալիս է շուրջ 1500 սերմ): Հեշտությամբ թափվող սերմերը մեր պայմաններում ծուր են ուշ գարնանը, ավելի հարավային ու տաք երկրներում՝ նույնիսկ աշնանը: Նրանք միահամուռ ու արագ ծուր են հողի 0,5 սմ խորությունից: Կոտեմի վարակի օջախներն են բնակավայրերի ու նրանց շրջապատի աղբոտ տեղերն ու ճամփեկերը, որտեղից և այն տարածվում է ցանքերը, բանջարանոցներն ու այգիները:

Մոլախոտը տարածված է ամբողջ Եվրոպայում և Ասիայի բարեխառն գոտում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում: Հայաստանում տարածված է ցածրադիր ու նախալեռնային գոտիներում: Բույսը, ժատկապես նրա ծաղիկներն ու ցողունները, պարունակում են մինչև 0,1% ալկալոիդներ:



Հավակատարապզինների (Amaranthaceae) ընտանիքի երկշաքիլավոր, սակավամյա մուլախոտ է: Վարելաշերտի ամբողջ խորությամբ թափանցող առանցքային արմատներն ունեն կարմրավուն երանգավորում: Նրանց գույնը նորածիլ հասկում ավելի կարմիր է: Ցողունը ուղիղ է, բազմակող ու թավոտ՝ մինչև 80 սմ բարձրությամբ: Տերևները կլորավուն-ռոմբաձև են, մեծ մասամբ՝ հարթեպր: Վերին տերևներն անհամեմատ ավելի խոշոր են, քան ստորինները:

Ծաղկափթթությունը, որը մեծ մասամբ առաջանում է ցողունի գագաթին ու տերևածոցերից, հասկանման է, ծաղիկները՝ միասեռ, թույլը միատուն է (թե արական և թե իգական ծաղիկները գտնվում են մեկ բույսի վրա):

Ծաղկափթթությունն ունի բույսին հատուկ կանաչ-սպիտակավուն երանգավորում, երբեմն կարմրավուն գունավորմամբ: Պտուղը թաղանթանման պարկ է, օվալաձև, սերմը կլորավուն է, հարթ: Մեկ բույսը կարող է տալ մինչև մեկ միլիոն սերմ, որոնք ծլում են 20°-ից ոչ պակաս ջերմության պայմաններում: Սերմերի ծլունակությունը բարձրանում է սերմնաթաղանթի վնասվելուց հետո, որը մեծ մասամբ տեղի է ունենում շարահերկ բույսերի միջշարային տարածությունների փխրեցման ժամանակ: Բույսը ծաղկում է ըսկըսած հուլիսից և առատորեն պտղաբերում աշնանը: Սերմերի մեծ մասը մնում է տեղում, մյուսը տարածվում է կենդանիների, մարդկանց, քամու և հոսող ջրերի միջոցով:


Տարածված է ամբողջ Եվրոպայում, բացի ծայր հյուսիսից, Աֆրիկայում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Սիբիրի հարավային մասում, Կովկասում, ինչպես նաև մեր հանրապետության գրեթե բոլոր գոտիներում: Աղբոտում է ուշ գարնանացան, հատկապես շարահերկ բույսերի ցանքերն ու տնկարկները:

## ՀԱՎԱԿԱՏԱՐ ՀԱՍԿԱՎՈՐ

### AMARANTUS RETROFLEXUS L.

#### ЩИРИЦА КОЛОСИСТАЯ

1. Բույսը ծաղկման վերջին ու հասունացման սկզբնական շրջանում. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Արական ծաղիկը խոշորացրած. 5. Իգական ծաղիկը խոշորացրած. 6. Սերմերը բնական և խոշորացրած չափերով:








ԱՂՐՈՒԿ ԲԱՐՁՐ

**SISIMBRIUM ALTISSIMUM L.**

**ГУЛЯВНИК ВЫСОКИЙ**



1. Բույսը ծաղկման վերջին և հասունացման սկզբնական շրջանում, ցողունը միջին և գագաթային մասերից հատված է: Աջ կողմում՝ գլխավոր ցողունի գագաթը ծաղկափթթության հետ. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պատիճի հատվածը. 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

*Աշնանածիլեր:* Սակավամյա մոլախոտերի այս ենթախմբերի հիմնական ներկայացուցիչներն աճում և բազմանում են երկու ցիկլով: Այդ պատճառով էլ նրանք կոչվում են *դիցրկիկներ*: Սրանց վեգետացիոն շրջանն անցնում է հիմնականում երկու ցիկլով: Ամռան վերջին կամ աշնանը ծլում են, անպայման ձմեռում (ձմեռայիններ) վարդակի կամ թփակավան փուլում և հաջորդ տարվա գարնանից շարունակում իրենց աճն ու վարգացումը: Սակայն որոշ դեպքերում մոլախոտերի առանձին տեսակներ կարող են ծլել և աշնանը, և գարնանը (ձմեռողներ):

Պատկանում է կաղամբազգիների (Brassicaceae) ընտանիքին: Երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի լավ վարգացած առանցքային արմատ՝ հաստ երկրորդային արմատներով, ճյուղավորվող, բայց վերձից ցողուն, որի բարձրությունը հասնում է մինչև 100 սմ: Ցողունն ամենատորին մասում պատված է մապիկներով: Տերևները փետրաձև են, վերին տերևները՝ հատված, գծային մասերով, ստորինները՝ երկարավուն, ատամնավոր ելուններով: Ծաղիկն ունի մերկ բաժակաթերթ և դեղին պսակաթերթեր: Պտուղը պատիճ է՝ 50—100 մմ երկարությամբ, կարճ կոթունով: Սերմերն անկանոն քառանկյունու տեսք ունեն, դեղին են կամ դեղնադարչնագույն: Շաքիլները նույնպես դեղնավուն են՝ կանաչ եպրերով: Սերմերը տարածվում են հասունացած բույսի գլորվելու միջոցով (գետնագլոր): Հայաստանում տարածված են նաև աղբուկ կոպեկի, աղբուկ չորակող տեսակները, որոնք աճում են ցածրադիր ու նախալեռնային շրջանների հացաբույսերի ու խոտաբույսերի ցանքերում: Տարածված է ամբողջ Եվրոպայում ու Ասիայում, Կովկասում, Միջին Ասիայում:



Կաղամբազգիների ընտանիքի (Brassicaceae) երկշաքիլավոր, ձմեռող մուխոտ է, սակայն ի հայտ է գալիս նաև գարնանային ձևերով: Ծլելուն պես առաջացնում է լավ կարգացած, ճյուղավորվող ու ճկուն արմատային համակարգ, որը թափանցում է վարելաչերտի ամբողջ խորությամբ: Գլխավոր ցողունը սովորաբար վերձիգ է, հիմքի մասում՝ ճյուղավոր: Ծլելուց անմիջապես հետո օվալաձև, հարթ ելք շաքիլատերևների հետ առաջանում են նաև բլթակավոր, բայց ամբողջական՝ մեկերկու կույզ տերևներ, որոնք հետագայում ձևափոխվում են, ցողունի վրա դասավորվելով հերթադիր և դառնում խիստ կտրատվածփետրաձև, գծային մասերով: Ծաղկաբույլը կավաված է բավաժաղիկ ողկույվներից, որոնք պտուղներ տալու ժամանակ երկարում են: Ողկույվները սովորաբար դասավորվում են ցողունի վերին մասերում: Ծաղիկն ունի բաց դեղին պսակաթերթ, երկար ծաղկակոթ: Պտղի երկարությունը հասնում է մինչև 25 մմ: Պատիճները բացվող են: Սերմերը փորի կողմից օվալաձև են, մեջքի կողմից՝ կորնթարթ, կողքերից՝ եռանկյունաձև: Մակերեսը դեղնագորշավուն է, թույլ կետավոր, թույլ փայլուն կամ փայլատ: 1000 սերմի կշիռը 0,2 գ է: Բույսն առատ պտղաբերում է (մինչև 700000 սերմ):

Տարածված է մեր մոլորակի բարեխառն գոտում, ՍՍՀՄ-ում՝ ամենուրեք, Հայաստանում աճում է մինչև ծովի մակերկույթից 2400 մ բարձրության վրա, աղբոտելով լեռնային գոտու հացահատիկային, շարահերկ ու կերային կուլտուրաների ցանքերը, բավամայա տրևկարկների բուսաստանները:

Որպես անասնակեր վտանգավոր է հատկապես ծաղկման ու պտղաբերման փուլերում, որովհետև այդ շրջանում բույսի գեներատիվ օրգանները պարունակում են մինչև 1,5% սինիգրին:

## ԱՎԼԱԽՈՏ ՍՈՎՈՐԱԿԱՆ

*DESCURANIA SOPHIA L.*

ГУЛЯВНИК СТРУЙЧАТЫЙ

1. Բույսը ծաղկման և պտղակավման շրջանում. գլխավոր ցողունը միջին և գագաթային (ծաղկափթթույան հետ) մասերից հատված է: 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմը բնական ու խոշորացրած (փորի կողմից ու կողքից) չափերով:







## ԱՂԲԱԿՈՏԵՍ ԳԱՐՇԱՀՈՏ

### LEPIDIUM RUDERALE L.

#### ПЕРЕЧНИК



1. Բույսը պտղակալման փուլում. ճյուղավորումները հատված են:
2. Արմատը:
3. Ծիրը շաքիատերևներով:
4. Ծաղիկը խոշորացրած:
5. Պատիճները խոշորացրած:
6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:



Կաղամբազիների (Brassicaceae) ընտանիքին պատկանող երկշաքիլավոր մոլախոտ է: Հյուսիսային շրջաններում միանյա, վաղ գարնանային մոլախոտ է, հարավային շրջաններում՝ ձմեռող: Ունի առանցքային արմատ, կարճ, ճյուղավոր ու ծոմոված ցողուն:

Յողունային ճյուղավորումների վրա, հակադիր ձևով դասավորված են կրկնակի փետրածև, նեղ ու փոքր-ինչ ծոմոված տերևները, որոնք չունեն վառ կանաչ գունավորում: Յողունային ճյուղավորումների ծայրերին, վերջին տերևածոցից սկսած, հերթադիր ձևով դասավորված են ծաղկակոթունները: Նրանց առանձին, կոթունավոր ծաղիկները չորի են պսակաթերթերից և ունեն երկուական առէջ: Պտղի հասունացումից հետո պատիճները բացվում են, և սերմերը հեշտությամբ թափվում: Դրանք օվալաձև են, մի կողմից սեղմված-տափակ, մյուս կողմից՝ աղեղնաձև: Սերմերի մակերեսը ծալքավոր է, դեղնագորշ ֆոնի վրա՝ մանր կետավոր: 1000 սերմը կշռում է 0,5 գ: Շաքիկները երկարավուն են: Բույսը տհաճ հոտ ունի, որը որպես անասնակեր օգտագործելու դեպքում նույն համն ու հոտը հաղորդում է կաթին ու մսին: Ծաղկում է հունիսից մինչև օգոստոս ամիսը: Նույն տարվա սերմերը անմիջապես կարող են ծլել: Աղբային (ռուղերայ) մոլախոտ է:

Տարածված է ՍՍՀՄ գրեթե ամբողջ տարածքում: Աղբոտում է ՀՍՍՀ Արարատյան հարթավայրի ու հատկապես նախալեռնային գոտու հացահատիկային կուլտուրաների ցանքերը:



Դաշտավուկազգիների (Poaceae) ընտանիքի միաշաքիլ, խկական ձմեռային մոլախոտ է: Հզոր, լավ պարգացած փնջաձև արմատները ուշ ցանքերում սովորաբար գերապանցում են աշնանացան հացաբույսերի արմատներին՝ վարելաչերտի խորքից վերցնելով ջուրն ու սննդանյութերը: Ցողունը նույնպես իր բարձրությամբ գրեթե չի պիջում աշնանացան ցորենի ցողուններին: Ճապոնական ցորենուկը խիստ մասնագիտացած է աշնանացանների ցանքին և այնտեղ ի հայտ է բերում մոլախոտային իր բոլոր հնարավորությունները՝ մշակովի բույսերի նկատմամբ գերիշխելով և խորքից, և բարձրությամբ, և թե մակերեսով: Ծաղկափթթությունը բազմահասկ հուրան է: Հուրանները չնայած ցրված են, բայց առանձին հասկերը հավաք են: Ամբողջ բույսը մերկ է, վառ կանաչ գույնի: Ավելի ինտենսիվ պարզանում է խոնավ տարիներին, պարարտ, կավավազային հողերում: Սերմերը ձևով և չափերով նման են աշորայի սերմերին: Այդ պատճառով էլ աշորայի սերմերի վարակումը նվազեցնելու կամ վերացնելու ամենառեալ միջոցը համարվում է սելեկցիոն ճանապարհով աշորայի խոշորահատիկ սերմեր ստանալը: Լավ թփակալման դեպքում մեկ բույսը կարող է տալ մինչև 1500 հատիկ, որոնք ունենում են բարձր ծրունակություն:


Տարածված է հյուսիսային կիսագնդի ամբողջ բարեխառն գոտում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Արևելյան Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Կովկասում, Միջին Ասիայում: Հայաստանում համարվում է աշնանացան կուլտուրաների ցանքերին մասնագիտացած մոլախոտ՝ հատկապես միջին լեռնային գոտիներում: Աղբոտում է նաև ցածրադիր քու նախալեռնային գոտիների այգիները:

## ՑՈՐԵՆՈՒԿ ՃԱՊՈՆԱԿԱՆ

### BROMUS JAPONICUS THBG.

#### КОСТЕР ЯПОНСКИЙ

1. Բույսը հասկակալման փուլում: Գլխավոր ցողունը միջնամասից ու զագաթից, երկրորդայինները՝ հիմքից հատված են: Աջ կողմում բազմահասկ հուրանը. 2. Արմատը. 3. Աշնան ծիր. 4. Հասկի հատվածը. 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:





## ԲԵՐԵՆԻԿԵ ԴԱՇՏԱՅԻՆ

VERONICA L.

ВЕРОНИКА



1. Բույսը ծաղկման փուլում. 2. Արմատը. 3. Ծիրը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը. 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Խուլեղինշապգինների (Lamiaceae) ընտանիքի միանյա, երկշաքիլավոր մուխոտ է (կան բերենիկների նաև բազմանյա տեսակներ): Ունի թույլ պարզացած առանցքային արմատ: Գլխավոր ցողունը սկսվում է արմատավիկից, սակայն երկրորդային ճյուղավորումները դուրս են գալիս հիմնականում առաջին տերևածոցներից: Ցողունը ուղղաձիգ է կամ փոքրինչ կորացած, պատված է մաշիկներով: Տերևները ցողունի հիմքի մասում դասավորված են հակադիր-սիմետրիկ ձևով, ատամնավոր են և էլիպսաձև, իսկ վերին ու գագաթային մասում՝ հերթադիր, երկարավուն ու հարթեպր: Հենց այդ տերևների անութներում էլ նստած են կապույտ, քառապսակ ծաղիկները:

Ցածրադիր վայրերում ծաղկում է մարտ-ապրիլ ամիսներին, լեռնային շրջաններում՝ մայիս-հունիսին: Ինչպես ծաղկումը, այնպես էլ պտղաբերումը ձգձգվում է, սկսելով ներքևից: Պտուղը հակառակ-սրտաձև տուփիկ է, մերկ, կողերը պատված են մետաղափայլ մաշիկներով: Այն նստած է տերևածոցում՝ 2 սև երկարությամբ կոթունի վրա: Սերմը ոսպնյակաձև է, ունի դեղնաշագանակագույն երանգ և պատված է թույլ խավով: 1000 սերմի կշիռը 0,05 գ է: Հասունացումից անմիջապես հետո սերմը կարող է ծել, ըստ որում, կախված միջավայրի պայմաններից՝ և աշնանը, և գարնանը: Հացահատիկային կուլտուրաների, խոտաբույսերի վաղ և խիտ ցանքերում բույսը զգալիորեն ճնշվում է:

Տարածված է ինչպես երկրագնդի, այնպես էլ ՍՍՀՄ ամբողջ ասիական ու եվրոպական գոտիներում: Աղբոսում է ՀՍՍՀ ցածրադիր ու նախալեռնային, ինչպես նաև լեռնային գոտիների հացաբույսերի, միանյա խոտաբույսերի ցանքերն ու խաղողի և պտղատու այգիները:



Պատկանում է մեխակազգիների (Caryophyllaceae) ընտանիքին: Երկշաքիլավոր, գարնանային, ձմեռող, տիպիկ անցողիկ տեսակ է: Ունի ամուր, ուղղահայաց և բավականին խորը թափանցող արմատային համակարգ, մինչև մեկ մետրի հասնող ուղիղ, վերձիգ և ճյուղավորվող ցողուններ, գծանշտարաձև տերևներ: Ամբողջ բույսի վերգետնյա մասը, մինչև ծաղկի բաժակաթերթերի ծայրը, պատված է բարակ ու երկար մազմուկներով: Գծային տերևները ցողունի վրա նստած են կույգ-կույգ: Հենց այդ տերևածոցերից էլ դուրս են գալիս երկրորդային ցողունները, որոնք կապմում են ընդհանուր ճյուղավորում: Գրեթե յուրաքանչյուր ճյուղավորման ծաղիկները ցողունների ծայրին նստած են մեկական հատով, խոշոր են, ունեն վառ կարմիր պսակաթերթեր, անբույր են, անհոտ:

Պտուղը ձվաձև տուփիկ է և պարունակում է 30—40 երիկամաձև, կլորավուն սերմեր: Դրանք սև գույն ունեն, փայլատ են, ծածկված ելուններով: Մեկ բույսը կարող է տալ մինչև 300 սերմ, որոնք կարող են ծլել նույն տարվա աշնանը կամ հաջորդ տարվա գարնանը: Սերմերի բացառիկ բարձր ծլունակությունը ամբողջությամբ պայմանավորում է արջնդեղի բազմացումն ու տարածումը, քանի որ այն բազմանում է միայն սերմերով: Բույսի թե ծիլերը, թե ձմեռող վարդակը խիստ ցրտադիմացկուն են, որի համար էլ գերակշռում են այս մուլախոտի ձմեռող ձևերը:


Տարածված է գրեթե ամբողջ Եվրոպայում և Ասիայում, ՍՍՀՄ-ում և Հայկական ՍՍՀ-ում՝ ամենուրեք: Հիմնականում հացաբույսերի մուլախոտ է: Սերմերը թունավոր են (պարունակում են 5—6 % սապոնիններ, գիտագին) և գրգռում են քիթ-կոկորդային համակարգը, առաջացնելով սուր ալերգիկ երևույթներ:

ԱՐՋՆԴԵՂ ԹՈՒՆԱՎՈՐ

AGROSTEMMA GITHAGO L.

КУКОЛЬ ОБЫКНОВЕННЫЙ

1. Բույսը ծաղկման փուլում, ցողունը միջին և զազաթային մասերից հատված է: Աջ կողմում երկրորդային, ծաղկակիր ցողունի հատվածքը: 2. Արմատը: 3. Ծիլը շաքիլատերևներով: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Պտուղը: 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:





## ԵՐԻՑՈՒԿ ԱՆՆՈՏ

CHAMAEMELUM INODORUM VIS.

РОМАШКА НЕПАХУЧАЯ



1. Բույսը ծաղկման փուլում. գլխավոր ցողունը հաս-  
ված է միջին և վերին, երկրորդայինները՝ հիմքի մա-  
սից. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղկի  
երկայնական կտրվածքը. 5. Սերմիկը բնական և խո-  
շորացրած չափերով:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտա-  
նիքի երկշաքիլավոր, միամյա, ձմեռող մղա-  
խոտ է: Անբարենպաստ ձմեռ ունեցող վայրե-  
րում ի հայտ է գալիս գարնանային ձևերով,  
նպաստավոր պայմաններում՝ ձմեռում է: Ունի  
կարճ, բայց հզոր ճյուղավորվող առանցքային  
արմատ: Արմատավիկը համընկնում է հողի  
մակերեսի հետ և այդտեղից էլ բույսը սկսում  
է ճյուղավորվել, առաջացնելով ուղիղ, կտրա-  
վուն ցողուններ՝ երկրորդային ճյուղավորում-  
ներով: Բույսը հասնում է մինչև 45—60 սմ  
բարձրության: Տերևները երկփետրաձև են:

Յուրաքանչյուր ցողունի և ճյուղի ծայրին նըս-  
տած է բարդածաղիկը՝ բավաթիվ պամբյուղ-  
ներով: Բարդածաղիկը շրջապատող պամ-  
բյուղներն ունեն մեկական երկար, սպի-  
տակ լեպվակներ, որոնք կենտրոնում խո-  
ղովակաձև են: Սերմիկը հակառակ-բրգա-  
ձև է, ընդգծված կողավոր: Միջկողա-  
յին հատվածները կնճռոտված են: Սեր-  
մերը, որոնց հասունացումը համընկնում է  
խոտաբույսերի հասունացման հետ, կալսման  
ընթացքում անցնում են սերմնանյութի մեջ:  
Այդ պատճառով էլ տարածման հիմնական  
պատճառը վատ պտված սերմերով խոտա-  
բույսերի ցանքն է: Սերմերի ծլունակությունն  
ու նրանց պահպանունակությունը բարձր է:  
Անասունների ստամոքսաաղիքային ուղիով  
անցած սերմերի մինչև 27%-ը չի կորցնում  
ծլունակությունը: Սերմերը կարող են ծլել թե՛  
աշնանը, և թե՛ գարնանը, հանդես գալով  
անցողիկ ձևերով: Բույսերը հերբիցիդների նը-  
կատմամբ զգայուն չեն:

Տարածված է աշխարհի ու ՍՍՀՄ ինչպես  
եվրոպական, այնպես էլ ասիական մասերում:  
Հայկական ՍՍՀ հատկապես ցածրադիր  
շրջաններում աղբոտում է հացաբույսերի ու  
խոտաբույսերի ցանքերը, ցեխաշտերը:



Պատկանում է հրանուկազգիների (Ranunculaceae) ընտանիքին: Գրականության մեջ անվանում են նաև ամրուկ: Միամյա, ձմեռող երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի խորը գնացող առանցքային արմատ և ուղղաձիգ, հաստ, քիչ ճյուղավորվող ցողուն, որի բարձրությունը հասնում է մինչև 60 սմ և ավելի: Այն ծածկված է նոսր ու գանգուր մազմուկներով: Ունի գծային տերևամատներ. գլխավոր ցողունի վրա հերթադիր ու մեծ մասամբ անկանոն դասավորված տերևների անութներից առաջանում են երկրորդային ճյուղավորումները, իսկ նրանց վրա եղած տերևների անութներից՝ երրորդայինները: Ընչպես գլխավոր, այնպես էլ երկրորդային ու երրորդային ցողունների և ճյուղավորումների երկու երրորդից սկսվում է ծաղկաբույլը, որը երկար ողկույզ է: Ծաղիկներն առաջամասերով նստած են ջահանման երկար կոթունների վրա: Ծաղիկները վառ մանուշակագույն են: Տերևապտուղը ուղիղ է, գեղձամազոտ: Սերմերը կնճռոտ են: Ծաղկում է մայիսից մինչև հուլիս ամիսը և հասունանում հացաբույսերի հետ՝ աղբոսելով սերմնանյութը, և սերմերի զգալի պաշար թողնելով հողում: Բազմանում է միայն սերմերով, որոնք ծլում են և աշնանը, և գարնանը: 1000 սերմը կշռում է 1,3 գ:

Տարածված է Եվրոպայի միջին գոտիներում և Ասիայի հյուսիսում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում և Կովկասում: ՀՍՍՀ-ում համարվում է ցածրադիր ու նախալեռնային գոտիների հացահատիկային ու բանջարանոցային կուլտուրաների, խաղողի ու պտղատու այգիների հիմնական մոլախոտերից մեկը:


Դեղֆինի սերմերը 33% ճարպ և զգալի քանակությամբ ալկալոիդներ են պարունակում:

## ԴԵԼՖԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ.

CONSOLIDIDA ORIENTALIS SCHRÖD.

ЖИВОКОСТЬ ВОСТОЧНАЯ

1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում. գլխավոր ցողունը հիմքի ու զագաթի (ծաղկափթթության հետ) մասերից հատված է. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը. 5. Սերմը խոշորացրած:





ԿԱՔԱՎՐԿՈՒՑ ԴԱՇՏԱՅԻՆ

**LITHOSPERMUM ARVENSE L.**

**ВОРОБЕЙНИК ПОЛЕВОЙ**




1

1. Բույսը ծաղկման փուլում. 2. Արմատը. 3. Ծիլը ջաջիատերևներով. 4. Ծաղիկը. 5. Պտուղ-ընկույզիկը խոշորացրած չափերով:




2



3



4



5

Գաղտրիկազգիների (Borraginaceae) ընտանիքին պատկանող երկշաքիլավոր, միամյա, ձմեռող մուլախոտ է: Ունի՝ հյոր պարզացած առանցքային արմատ՝ կեղևի վրա կարմիր պիգմենտներով: Ցողունն ուղղաձիգ է, թույլ ճյուղավորվող և հասնում է մինչև 50 սմ բարձրության: Ներքևի տերևները նշտարաձև են, վերինները՝ նեղ նշտարաձև: Ցողունը սովորաբար վերջանում է ոչ մեծ քանակությամբ ծաղիկներով: Նրանց պսակը բաց դեղին է կամ հազվադեպ՝ կապտավուն: Ամբողջ բույսը պատված է կոպիտ մապիկներով և կեղտոտ կանաչավուն գույն ունի: Ծաղկի բաժակը փշիկներով պատված փշի տեսք ունի: Բույսի հասունանալուց հետո, երբ պսակաթերթերը թափվում են, բաժակի մեջ նստած է լինում կոպիտ, տանձաձև պտուղը: Այն ընկույզիկ է, որը գորշավուն-դեղին գույն ունի և պատված է ելունանման կետերով: 1000 հատիկի կշիռը շուրջ 5 գ է: Սերմերը ոչ պակաս, քան 5 տարի կարող են պահպանել իրենց ծլունակությունը: Նրանք ամենից լավ ծլում են 2 սմ խորությունից: Նպաստավոր պայմաններում զարնանը ծլած սերմերից առաջացած բույսերը կարող են նորից հասուն պտուղ տալ: Սերմերը հասունանում են աղբոտված կուլտուրաների հետ և տարածվում թափվելու, թռչունների ու հոսող ջրի միջոցով, անցնում են սերմնակույթի մեջ և դժվարությամբ անջատվում նրանից: Սերմերի թաղանթը զգալի քանակությամբ կիր ու սիլիկահող է պարունակում: Այդ պատճառով էլ նրանով վարակված հատիկի հացը տհաճ համ ունի: Երկրագնդի վրա տարածված է գրեթե բոլոր գոտիներում, բացի բևեռային գոտուց: Հայկական ՍՍՀ նախալեռնային ու լեռնային գոտիներում վարակում է հացբույսերի, միամյա խոտաբույսերի ցանքերն ու ցելախողամասերը:





Աստղածաղկազգիների — Asteraceae (Compositae) ընտանիքի միամյա, ճմռռող երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի իլիկաձև, ոչ խորը գնացող, բայց հզոր ճյուղավորվող արմատային համակարգ, 30—40 սմ բարձրությամբ ճյուղավորվող ու մազիկներով պատված ցողուններ: Տերևները երկարած են, խորը կտրտված: Յուրաքանչյուր ճյուղավորման գագաթին նստած են մեկական ծաղիկ, որոնք սակայն հովանոց հիշեցնող բույլ են կապմուն: Ծաղիկները տեղավորված են առանձին պարբյուղիկներում, նրանցից 12-ը, որոնք շրջապատում են ամբողջ ծաղկախումբը, լեզվակավոր են, իսկ ներսիները (80 հատ) փողավոր են, դեղին գույնի: Աշնան ծիլերից առաջացած բույսերը ծաղկում ու հասունանում են մայիսից մինչև հուլիս, գարնանածիլերը՝ սեպտեմբերից մինչև հոկտեմբեր ամիսները: Սերմիկը երկարավուն է, գլանաձև հիմքում թեք կտրվածքով, պատված է մանր ելուններով: Նրա ծայրին նստած է արծաթավուն-սպիտակ վրձնիկը, որը և նպաստում է մեծ հեռավորության վրա սերմերի արագ տարածմանը: Սերմերը բաց շագանակագույն են կամ գորշ կանաչավուն երանգ ունեն: 1000 սերմը կշռում է մոտավորապես 0,18 գ: Բույսը մեծ մասամբ կարող է պտղաբերել տարեկան երկու անգամ: Մայիս ամսին պտղաբերելու դեպքում վարակում է հողը, սեպտեմբերին՝ հողն ու սերմնանյութը: Առատ պտղաբերման և սերմերի տարածման ամենաբավական միջոցների (գոմաղբի, սերմնանյութերի, գյուղգործիքների, տարայի, քամու, հոսող ջրի) պատճառով այս մոլախոտը անարգել ձևով վարակում է երկրագնդի ու ՍՍՀՄ եվրոպական մասի հարավային՝ սևահողային գոտու, ՀՍՀՍ ցածրադիր, նախալեռնային ու լեռնային գոտիների, հատկապես ցելահողամասերը, հացահատիկի ու խորդենու դաշտերը:

## ՀԱԼԵՎՈՐԻԿ ԳԱՐՆԱՆԱԲԵՐ

**SENECIO VERNALIS W. K.**

**КРЕСТОВНИК ВЕСЕННИЙ**

1. Բույսը ծաղկման-պտղակալման շրջանում. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիատերևներով. 4. Ծաղիկ երկայնական կտրվածքը. 5. Սերմը բնական (վրձնիկներով) և խոշորացրած չափերով:







## ՀՈՎՎԱՄԱՂԱԽ

CAPSELLA BURSA PASTORIS M.

ПАСТУШЬЯ СУМКА



1. Բույսը ծաղկման վերջում և պտղաբերման շրջանում. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:



Պատկանում է կաղամբազգիների (Brassicaceae) ընտանիքին: Միայն երկշաքիլավոր մոխխոտ է: Տարբեր կլիմայական պայմաններում կարող է հանդես գալ տարբեր ձևերով՝ որպես վաղ զարնանային, ձմեռող և նույնիսկ ձմեռային մոխխոտ: Ունի ուղղահայաց ուղղությամբ գնացող ու լավ ճյուղավորվող արմատային համակարգ, մինչև 40–50 սմ երկարությամբ ցողուններ (հիմնականում մերկ, մասամբ՝ թույլ թավոտ): Հիմնական տերևային զանգվածը տեղավորված է թփակավան հանգույցում և նրանից քիչ վերև՝ ցողունային ճյուղավորումների հիմքի մասում: Ըստ որում, վարդակը կազմող տերևները փետրաբաժան են, ցողունայինները՝ երկարավուն-նետաձև: Ցողունների կեսից սկսած, նրանց վերևի մասում, երկար կոթունների վրա հատ-հատ նստած են մանր, սպիտակ ծաղիկները: Պտուղը չոր, բազմասերմ պատիճ է: Մեկ պատիճում ընդհանուր միջնորմի վրա նստած են 10–12 հատ մանր, դեղնադարչնագույն, օվալաձև սերմերը: 1000 հատիկը կշռում է 0,1–0,15 գ, սերմերի ծլունակությունը շատ բարձր է: Թե սերմերի ծլունը, թե բույսերի ծաղկումն ու սերմնաթափումը ձգձգվում է՝ հանգամանք, որը նպաստում է նրա բազմացմանը, տեսակի պահպանմանն ու տարածմանը: Տարածման համար առանձնապես վտանգավոր է մանրասերմ կուլտուրաների (խոտաբույսեր, բանջարանոցային կուլտուրաներ և այլն) վատ կտված սերմերով կատարված ցանքը: Նպաստավոր վեգետացիայի ընթացքում տալիս է 2–3 սերունդ:

Տարածված է երկրագնդի բարեխառն գոտիներում. ՍՍՀՄ միջին գոտում և ՀՍՍՀ մինչև բարձր լեռնային գոտին աղբոտում է հացաբույսերի, խոտաբույսերի, տեխնիկական ու բանջարաբոստանային բույսերի ցանքերն ու տնկարկները, այգիները:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի երկշաքիլավոր, միամյա, ձմեռող մոխրոտ է: Վերին մասում ունի իլիկաձև հաստացած, սիմետրիկ ճյուղավորվող արմատային համակարգ, ուղիղ, ճյուղավորվող, 75 սմ բարձրությամբ ցողուններ. ներքևի տերևները փետրային են, վերինները՝ գծային-նշտարաձև: Բույսը պատված է նոսր, կոպիտ թավով: Բարդածաղիկը կապույտ ծաղիկներով կամբյուղ է: Բույսը զարնանացան կուլտուրաների ցանքերում գրեթե միամյա ձևով է հանդես գալիս և ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, իսկ աշնանացանի ցանքերում նա մեծ մասամբ ձմեռող է և այնքան շուտ է ծաղկում, որ մինչև աշնանացանի հունձը նրա սերմերն արդեն հասունացած են լինում: Սերմերը երկարացած, կողքերից փոքր-ինչ սեղմված են. Նրանց մակերեսը հարթ է ու փայլուն, ունեն փղոսկրի գույն՝ ներքևում՝ շագանակագույն գորշավուն: 1000 սերմիկի կշիռը 4,5 գ է: Բույսը տալիս է 700-ից (զարնան ցանքերում) մինչև 1600 սերմ (աշնան ցանքերում): Բույսը բազմանում ու տարածվում է սերմերով, որոնց մի մասը կուլտուրական բույսի սերմերի հետ անցնում է պահեստ, մի մասը ընկնում է գոմաղբի մեջ և տեղափոխվում դաշտ, իսկ մյուս մասը թափվում է հողի մեջ՝ դառնալով դաշտի հետագա աղբոտման պահեստային պաշար: Կապույտ տերեփուկի հայրենիքը Արևելքի և Միջերկրական ծովին հարող երկրներն են: Այն տարածված է Եվրոպայի ու Ասիայի միջին գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական մասում և ՀՍՀՄ նախալեռնային ու հատկապես լեռնային շրջաններում: Աղբոտում է ինչպես զարնանացան, այնպես էլ աշնանացան կուլտուրաների դաշտերը, ամենուրեք հանդես գալով որպես չարորակ մոխրոտ:

## ՏԵՐԵՓՈՒԿ ԿԱՊՈՒՅՑ

### CENTAUREA CYANUS L.

#### ВАСИЛЕК СИНИЙ

1. Բույսը ծաղկման-պտղաբերման շրջանում. ցողունը հիմքի և գագաթի մասերից հատված է. 2. Արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով. 4. Ծաղկի երկայնական կտրվածքը. 5. Սերմը (վրձնիկներով) բնական և խոշորացրած չափերով:









ՄԱՆՈՒՇԱԿ ԴԱՇՏԱՅԻՆ

**VIOLA ARVENSIS M.**

**ФИАЛКА ПОЛЕВАЯ**

1. Բույսը ծաղկման փուլում, ուղղականգուն և փոփոկ գոգուկները հիմքից հատված են: 2. Արմատը: 3. Ծիլը շաքիլատերևներով: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Պտուղ-տուփիկը բացված վիճակում, որից թափվել են սերմերը (բնական և խոշորացրած չափերով):



Մանուշակագինների (Violaceae) ընտանիքի միամյա, ձմեռող, երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի վարգացած ու լավ ճյուղավորվող արմատային համակարգ, թույլ ճյուղավորված, մինչև 40 սմ բարձրությամբ գոգուկներ, որոնք խիտ ցանքերում սովորաբար կանգուն են լինում, ուշ և նոսր ցանքերում փոփած: Ստորին տերևներն օվալաձև են, արտահայտված սղոցաեզր, վերինները՝ նշտարաձև:

Ունի երկար ծաղկակոթուններով մաշնր ծաղիկներ, որոնք նստած են ճյուղավորումների ծայրերին, վերջին տերևախմբի ծոցում: Պսակաթերթերը բաց դեղին են, ստորինները՝ վառ դեղին, երբեմն բաց մանուշակագույն: Պտուղը եռափեղկ տուփիկ է: Հասունանալիս այն բացվում է և, թափվում են մանր, ձվաձև, ներքևի մասում ստորակետի նման կեռացած, բաց դարչնագույն սերմերը: Նրանց մակերեսը թեթև կնճռոտված է, փայլուն կամ հալվադեպ՝ փայլատ: 1000 սերմը կշռում է 0,5 գ:

Բույսը բացառապես սերմերով է բազմանում և լավ է աճում թեթև ավազային, նոսր ցանքով հողատեքերում: Թե հողում և թե սերմանայութի մեջ ու լաբորատորիայում սերմերը իրենց ծունակությունը կարող են պահպանել մինչև չորս տարի: Ներքին հարկի մոլախոտ է, կուլտուրական բույսերին ճնշում է մատղաջ հասակում, հատկապես ուշ և նոսր ցանքերում:

Տարածված է Եվրոպայում և Ասիայի չափավոր տաք գոտիներում, ՍՍՀՄ Եվրոպական մասում, մասամբ՝ Սիբիրում և Կովկասում: Սովետական Հայաստանում այն բարձրանում է մինչև լեռնային գոտի և աղբոտում հատկապես աշնանացան հացաբույսերի ու միամյա խոտաբույսերի ցանքերը:



Բակլազգիների (Fabaceae) ընտանիքի երկ-  
 շաքիղավոր, միամյա, ձմեռող մոլախոտ է: Բա-  
 րակ, բայց խորը գնացող, լավ ճյուղավորվող  
 առանցքային արմատն ունի պալարիկավոր  
 արմատիկների ցանց: Ցողունը միջին հաշվով  
 40—70 սմ բարձրության, բայց նպաստա-  
 վոր պայմաններում կարող է հասնել մինչև  
 150 սմ-ի: Նոսր ցանքերում մագլցող-փռվող  
 է, խիտ ցանքերում՝ մագլցող, ցեղերում՝ լրիվ  
 փռվող և պատված է խիտ թավով: Տերևները  
 մանր, գծանշտարաձև են, որոնք անկանոն-  
 հերթադիր կամ հակադիր ձևով նստած են  
 ընդհանուր տերևակոթոնի վրա, որը որպես  
 կանոն վերջանում է փաթաթվող հարմարան-  
 քով՝ բեղիկներով:

Ծաղկափթթությունը բազմածաղիկ ողկույզ է:  
 Ծաղիկները մի շարքով նստած են ընդհա-  
 նուր ծաղկակոթոնի վրա: Ծաղկի պսակը  
 մանուշակագույն է, մանր: Բույսերը խաչաձև  
 փոշոտվող են: Ունդերը երկարավուն-նմբաձև  
 են, սերմերը գնդաձև են, սև, թավջապատ ու  
 փայլատ: Մեկ ծաղկից առաջացած մեկ ուն-  
 դի մեջ կարող են լինել 2—8 սերմ: Սերմերի  
 ծրուակությունը շատ բարձր է, ծրում են  
 6—8 օրվա ընթացքում, 1000 հատիկը կըջ-  
 ում է 10—20 գ, մեկ բույսը տալիս է մինչև  
 350 սերմ:

Հատկապես ուժեղ վարակում է աշնանացան  
 հացաբույսերի ցանքերը: Մշակովի բույսերին  
 վնասում է փաթաթվելու ու փռվելու միջոցով:  
 Բույսը ցրտակայուն է ու չորադիմացկուն,  
 հանդես է գալիս նաև երկամյա ձևերով:

Տարածված է երկրագնդի միջին գոտում,  
 ՍՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում  
 և Կովկասում: Հայաստանում աղբոտում է  
 (սկսած ցածրադիր գոտուց մինչև լեռնային  
 գոտին) աշնանացան ու գարնանացան կու-  
 տուրաների, խոտաբույսերի ցանքերն ու խա-  
 դողի և պտղատու այգիները:


## ՎԻԿ ԹԱՎՈՏ

VICIA VILLOSA ROTH.

ВИКА МОХНАТАЯ



1. Բույսը ծաղկման-պտղաբերման շրջանում. ներքևի փռվող ճյուղավորումները հատված են.
2. Արմատը.
3. Ծիրը շաքիլատերևներով.
4. Ծաղիկը խնշորացրած.
5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:





ԾՎԾՎՈՒԿ ԵՂԱՆԱՆՄԱՆ

**SILENE DICHOTOMA EHRH.**

**СМОЛЕВКА ВИЛЬЧАТАЯ**



1. Բույսը ծաղկման փուլում, ցողունը միջին մասից հատված է: 2. Զախ կողմում ցողունի գազաթափին մասը ողկույզանման ծաղկաբույլով: 3. Արմատը: 4. Ծիլը շաքիլատերևներով: 5. Բաժակը և պտուղը: 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Մեխակազգիների (Caryophyllaceae) ընտանիքի երկշաքիլավոր, միամյա, ձմեռային փոխտո է: Հանդես է գալիս նաև երկամյա ձևերով: Ունի առանցքային, ասիմետրիկ ճյուղավորվող արմատ, ուղիղ, ճյուղավոր, մազմուկներով պատված և մինչև 70 սմ բարձրության հասնող ցողուններ: Տերևները նշտարաձև են, երկարավուն, մազմուկապատ: Ցողունների մի կողմում և հատկապես նրանց գագաթին, կարճ կոթունների վրա նստած են ծաղիկները և կազմում են ողկույզանման ծաղկաբույլ: Բաժակը լայն-ձվաձև է, պսակը՝ սպիտակ: Պտուղը տուփիկ է՝ լայն, կարասաձև, ատամնավոր եզրերով: Սերմերը միջին մեծության են, փայլատ-գորշ, պատված են փայլուն կետերով: 1000 սերմը կշռում է մոտավորապես 1 գ: Բույսը բազմանում ու տարածվում է միայն սերմերով: Վերջիններս ունեն բարձր ծլունակություն և ծլման մեծ էներգիա: Նույն տարում հասունացած սերմերը հենց այդ տարվա ամռանը կամ աշնանըն էլ ծրում են՝ առաջացնելով օվալաձև ու սրածայր, դեղնականաչավուն շաքիլատերևներ: Ձմեռում է վարդակի փուլում և ծաղկում հունիս-հուլիս ամիսներին: Սերմերը հասունանում են աշնանացան կուլտուրաների սերմերի հետ գրեթե միաժամանակ: Մեկ բույսը կարող է տալ մինչև 1500 սերմ:

Տարածված է հարավային՝ տաք և հյուսիսային՝ բարեխառն գոտիներում: Տարածման կենսաբանական պայմանները համապատասխանում են ՍՍՀՄ եվրոպական մասի, Կովկասի, Արևմտյան Սիբիրի բնական պայմաններին: Հայկական ՍՍՀ լեռնային ու լեռնատափաստանային շրջաններում աղբոտում է հացահատիկային կուլտուրաների, ցանովի խոտաբույսերի ցանքերն ու պտղատու տրնկարկները:



Դաշտափուկազգիների (Poaceae) ընտանիքի միաշաքիլ, տիպիկ ձմեռային, միակա մուգ-խոտ է: Կոչվում է նաև դաշտասեպ, հողմուկ: Ունի լավ պարզացած փնջաձև արմատային համակարգ, ուղղականգուն, հանգուցավոր, սնամեջ ու մերկ, մինչև 100 սմ բարձրության հասնող ցողուններ և գծանշտարաձև տերևներ: Ծաղկաբույլը ցրված հուրան է, խոշոր, մինչև 30 սմ բարձրությամբ: Ստորին ծաղկաթեփուկը քիստավոր է, հատիկը՝ նեղ, երկար, մերկ (1,5 մմ): Լավ պարզացած մեկ բույսը կարող է տալ մինչև 16000 հատիկ: Բազմանում է բացառապես սերմերով, որոնք լավ են ծլում հողի մակերեսից և հողում ծլունակությունը երկար են պահպանում: Չանգվածաբար ծլում է անառվա վերջին կամ աջնան սկզբին, ձմեռում է լավ թփակաված վիճակում: Հողմախոտի աճի, պարզացման ու պտղաբերման փուլերը համընկնում են աշնանացան հացաբույսերի համապատասխան փուլերի հետ, այդ պատճառով էլ այն հատկապես այդ կուլտուրաներին է մասնագիտացել: Խոնավասեր բույս է. այդ պատճառով էլ տարածված է անտառային շրջանների ավազակավային և թեթև հողերում: Աղբոսում է սերմնանյութը, հողի մակերեսը, որտեղից անմիջապես ծլում է և հողի խորը մշակման դեպքում անցնում է նրա խորը շերտերը՝ դառնալով հողի հետագա վարակման պոտենցիալ պաշար:





Տարածված է Եվրոպայում և ՍՍՀՄ եվրոպական մասում, Սիբիրում, Կովկասում, Միջին Ասիայում: ՀՀ-ում անտառային, լեռնատափաստանային և լեռնային գոտիներում աղբոսում է աշնանացան հացաբույսերի, բանջարանոցային և տեխնիկական կուլտուրաների, խոտաբույսերի ցանքերը:

## ՀՈՂՄԱԽՈՏ

*APERA SPICA VENTI P. B.*

МЕТЕЛИЦА ОБЫКНОВЕННАЯ

1. Բույսը ծաղկման-պտղակավման շրջանում. երկրորդային ճյուղավորումները հատված են.
2. Արմատը.
3. Ծիլը.
4. Հասկիկը քիստավոր ծաղկաթեփուկներով.
5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:







# ԻՃԱԽՈՏ ՍՈՎՈՐԱԿԱՆ

## ECHIUM VULGARE L.

### РУМЯНКА ОБЫКНОВЕННАЯ



1. Բույսը ծաղկման փուլի վերջում: Գլխավոր և երկրորդային ցողունները հիմքից հատված են. 2. Արմատը. 3. Ծիր նախորդ տարվա զարնանը (զաքիատերևներով). 4. Ծաղկի երկայնական կտրվածքը. 5. Պտուղների խումբը ծաղկի բաժակում. 6. Պտուղները բնական և խոշորացրած չափերով:



Գաղտրիկազգիների (Borraginaceae) ընտանիքի երկշաքիլավոր, դիցիկլիկ մոլախոտ է: Ունի խորը գնացող առանցքային արմատներ: Բույսը դրանք ձևավորում է կյանքի առաջին տարում մինչև ձմեռումը: Չմեռում է լավ թփակաված վիճակում, երկար ու նեղ, գետնին փռված տերևներով (ցրտահարությունից պահպանվելու համար): Հաջորդ տարվա զարնանից սկսում է վերաճը՝ առաջացնելով կտրավուն, բութանկյունավոր, հաստ, մինչև 100 սմ բարձրությամբ ցողուններ: Տերևները նշտարած են, միաջիղ, հերթադիր: Ֆոտոնի վերին մասում, յուրաքանչյուր տերևածոցում նստած են բավմաթիվ ծաղիկներ՝ ձուլաթերթ, ձագարած, կապույտ պսակներով: Բույսի ցողունը, տերևներն ու ծաղկի բաժակները պատված են կոպիտ, փշանման մազմուկներով: Բույսը հաջորդաբար ծաղկում, նույն ձևով պլուզաբերում ու սերմնաթափում է սկսած հուլիս ամսից մինչև սեպտեմբերը ներառյալ: Ծաղկապսակի չորանալ-թափվելուց հետո թույլ կերպով նստած պտուղները՝ 4 միասերմ ընկուկիկներ, հեշտությամբ թափվում են, աղբոտելով թե հողը և թե սերմնանյութը: Սերմը (ընկուկիկը) գորշ դարչնագույնից սև-շագանակագույն է, թավոտ: 1000 սերմը կըշռում է մոտավորապես 2—8 գ: Մեկ բույսը կարող է տալ մինչև 2800 սերմ: Առաջին տարվա սերմերի ծլումը խիստ ձգձգվում է:

Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում, Հյուսիսային Ամերիկայում: ՍՍՀՄ եվրոպական մասի, Կովկասի և ՀՍՀՄ նախալեռնային ու լեռնային գոտիների թեթև, չոր, հանքային սննդանյութերով հարուստ ու վատ մշակված հողերում: Աղբոտում է հատկապես հացաբույսերի, միամյա խոտաբույսերի ցանքերը, խոտհարքները, արոտավայրերը, խամ հողերն ու անմշակ տարածությունները:



**Երկամյաներ:** Սակավամյա մոլախոտերի դի-գիլիկի խմբի այս ներկայացուցիչներն իրենց աճի ու պտղաբերման համար պահանջում են լրիվ երկու վեգետացիա: Ծլում են գարնանը, ձմեռում վարդակի փուլում և հաջորդ տարվա գարնանից շարունակում իրենց աճն ու վար-գացումը և աշնանը պտղաբերում են:

Մորմազգիների (Solanaceae) ընտանիքի երկշաքիավոր, երկամյա մոլախոտ է: Ունի հը-վոր իլիկաձև արմատային համակարգ, հաստ, ճյուղավորվող ու ամուր ցողուններ, որոնց բարձրությունը հասնում է մինչև 60 սմ և ավելի: Տերևները երկարավուն են, ատամնաձև կամ բլթակաձև կտրվածքով: Բույսը պատված է մազմուկներով: Ծաղկաբույլը երկար է, սև: Պսակը կեղտոտ-դեղնավուն է և ունի մանու-շակագույն ջղացանց: Խոշոր ծաղիկները նըս-տած են շատ կարճ ծաղկակոթունների վրա: Պտուղը՝ երկսեգմենտանի տուփիկ է՝ կափա-րիչով: Հասունանալուց հետո կափարիչը միանգամից բացվում է ու դուրս են շարժու-վում մանր, սև-գորշավուն ողորկ ու փայլատ սերմերը (1000 սերմը կշռում է մոտ 24 գ): Ամբողջ բույսը թունավոր է, զարշահոտ: Խիստ մասնագիտացած է մշակովի խաշխա-շի ցանքերին: Սև բանգիով վարակված հա-ցաբույսերի կոմբայնային բերքահավաքը դժվար է: Ծաղկում և պտղաբերում է հունիս-սեպտեմբերին:



Տարածված է երկրագնդի համեմատաբար չափավոր տաք գոտիներում՝ Եվրոպայի հա-րավում, Հյուսիսային Աֆրիկայում, Ավստրա-լիայում, Հյուսիսային Ամերիկայում, ՍՍՀՄ միջին և հարավային գոտիներում, Միջին Ասիայում, Կովկասում: ՀՍՀՄ մինչև բարձր լեռնային գոտիները համարվում է աղբային մոլախոտ, վարակելով նաև հացաբույսերի, խոտաբույսերի, տեխնիկական ու բանջարա-նոցային բույսերի դաշտերը, տնկարկները:

**ԲԱՆԳԻ ՍԵՎ**

**HYOSCYAMUS NIGER L.**

**БЕЛЕНА ЧЕРНАЯ**

1. Բույսը ծաղկման-պտղակալման շրջանում.
2. Ար-մատը.
3. Ծիլը նախորդ տարվա գարնանը (շաքի-լատերեններով).
4. Ծաղկի երկայնական կտրվածքը.
5. Պտուղը բացված.
6. Սերմը բնական և խոշորաց-րած չափերով:







## ԿԱԿԱԶ ՄԵԿԾԱՂԿԱՆԻ

### PAPAVER MONANTHUM TRAU

### МАК ОДНОЦВЕТКОВЫЙ



1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում. 2. Արմատը. 3. Ծիլը նախորդ տարվա գարնանը (շաքիլատերևներով). 4. Ծաղկի երկայնական կտրվածքը. 5. Պտուղը թափվող սերմերով. 6. Սերմերը բնական և խոշորացրած չափերով:



Կակաչագզիների (Papaveraceae) ընտանիքի երկշաքիլավոր, դիցիկլիկ, երկամյա մոլախոտ է: Վեգետացիայի սկզբից ևեթ առաջացնում է ծռնոված, երկրորդային արմատներով ճյուղավորվող ու արմատամազիկներով պատված իլիկաձև արմատներ: Ցողունը ուղղական գուն է, բայց ծայրամասում՝ թեքվող, մինչև 40 սմ բարձրությամբ: Այն հիմնականում ծածկված է լինում գեղձամազերով, բայց լինում է նաև մերկ: Տալիս է կարճ, կողային ճյուղավորումներ: Տերևները փետրաձև հատված են: Բույսն ունի կանաչավուն կամ թխագորշ երանգավորում: Ծաղիկը սկզբում կնգուղանման խոշոր կոկոն է, փակ, հաստ, թխականաչ բաժակներով, որոնք հետպիտեռ բացվում են և թափվում: Պսակը վարդագույն է, փայլուն, սև հիմնամասով: Պտուղը զավաթաձև, զրմբեթավորված տուփիկ է, որի մեջ սերմերը երկուական շարքերով դասավորված են ճառագայթավոր սեգմենտներում: Դրանք երկամաձև են, վանդակավոր մակերեսով: Հասունանալուց հետո տուփիկներից թափվում են հողի բուսամերձ մակերեսին, աղբոտելով մանրասերմ բույսերի (ծխախոտ) սերմանյութը, խոշորասերմ բուսացանքերում (հացաբույսեր)՝ հողը: Ծրման փուլում շաքիլատերևները սրածայր-նշտարաձև են, իսկականները՝ օվալաձև:

Տարածված է երկրագնդի առավել տաք գոտիներում՝ Միջին և Մերձավոր Արևելքում, Կովկասում: Հայաստանում աճում է սկսած ցածրադիր գոտուց, բարձրանալով մինչև 2000 մ: Եթե նախկինում համարվում էր ուղեբալ, հիմնականում աճելով անմշակ տարածություններում, այժմ զանգվածաբար կարելի է հանդիպել հացաբույսերի, կերաբույսերի ցանքերում, արոտներում ու խոտհարքներում: Պարունակում է ակալոիդներ՝ կոդեին, մորֆին և այլն:



Բակլազգիների (Fabaceae) ընտանիքի երկ-  
 շաքիլավոր, երկամյա մոլախոտ է: Ունի շատ  
 խորը (մինչև 8 մ) գնացող առանցքային ար-  
 մատ և կանգնած, բայց ոչ ուղիղ, մինչև 2  
 մետր բարձրության ցողուններ: Ներքևի տե-  
 րևները ձվաձև են, վերինները՝ նշտարաձև,  
 երկար: Ծաղկաբույլը բազմածաղիկ, հասկա-  
 նման խիտ ողկույզ է, դեղին պսակով: Պտու-  
 ղը միասերմ, որոշ դեպքերում երկսերմ ունի է,  
 թույլ կետավորված, մերկ, կնճռոտ և փայլատ.  
 գույնը՝ գորշ դեղնավունից մուգ երկնագույն:  
 1000 ունդի կշիռը 3,5 գ է: Սերմերը ծլում են  
 շատ անհամերաշխ, մինչև 5 սմ խորությու-  
 նից:

Գարնանածիլ սերմերը միայն վեգետատիվ  
 պանգված են առաջացնում, որը աշնանը չո-  
 րանում, ոչնչանում է: Կենդանի են մնում  
 միայն արմատն ու նրա վզիկի վրա առաջա-  
 ցած բողբոջները, որոնցից հաջորդ տարին  
 բույսը վերաճում է, առաջացնում գեներա-  
 տիվ օրգաններ: Բույսը ձմեռում է վարդակի  
 փուլում և եթե հաջորդ տարվա աշնանը հասց-  
 նում է սերմեր առաջացնել, ապա իր վե-  
 գետացիան ավարտում է, իսկ եթե ոչ՝ ձմե-  
 ռում է երկրորդ անգամ և պտղաբերում եր-  
 րորդ տարում, հանդես գալով բազմամյա ձե-  
 վով: Հենց սերմի ծլման ժամանակաշրջանից  
 էլ կախված՝ զարնանածիլ բույսերը վարակում  
 են զարնանացան, աշնանածիլ բույսերը՝ աշ-  
 նանացան կուլտուրաների ցանքերը:



Տարածված է Եվրոպայի և Ասիայի տաք շր-  
 ջաններում, հատկապես միջինասիական հան-  
 րապետություններում, Անդրկովկասում: Մեր  
 հանրապետության ցածրադիր և նախալեռ-  
 նային գոտիներում աղբոտում է բոլոր կուլ-  
 տուրաների ցանքերն ու տնկարկները:

## ԻՇԱՌՎՈՒՅՑ ԴԵՂԻՆ

### MELILOTUS OFFICINALIS DES

#### ДОННИК ЖЕЛТЫЙ

1. Բույսը ծաղկման փուլում, գլխավոր և երկրորդային  
 ցողունները հիմքից հատված են: Աջ կողմում ցողունի  
 գագաթը հասկանման ծաղկաբույլով: 2. Արմատը.  
 3. Նախորդ տարվա զարնան ծիր: 4. Ծաղիկը խոշո-  
 րացրած: 5. Պտուղը խոշորացրած: 6. Սերմը բնական  
 և խոշորացրած չափերով:





ԿՇՎՈՒԿ ԱՐԵՎԵԼՅԱՆ

**BUNIAS ORIENTALIS L.**

**СВЕРБИГА ВОСТОЧНАЯ**



1. Բույսը ծաղկման-պտղակավման շրջանում: Չախ կողմում՝ բույսի գագաթային մասի հատվածքը ծաղկաբույլերով: 2. Արմատը. 3. Ծիլը բույսի կյանքի առաջին տարում. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը խոշորացրած. 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Կաղամբազիների (Brassicaceae) ընտանիքի երկշաքիլավոր, դիցիկլիկ, երկամյա մուլախոտ է: Ծլելուց հետո, երբ առաջացնում է փոքր, օվալաձև շաքիլատերևներ և նշտարաձև առաջին կույզ տերևները, միաժամանակ արդեն որպես հիմք, ունենում է բավականին խորը գնացող առանցքային արմատ, որն առաջին տարին հաստանալով ու խորանալով, մինչև վարդակի փուլը՝ ձմեռումը, արդեն հասնում է 2 մ խորության: Արմատավիկի հարթակի վրա եղած բողբոջներից առաջանում են մինչև 1,5 մ բարձրության հասնող հաստ ու ամուր ցողուններ, որոնք շատ հաճախ թփուտներ են կազմում: Տերևները հերթադիր են, սուր ծայրով, նշտարաձև, հիմքի մասում խորը կտրտված: Տերևածոցից (հատկապես վերին) առաջացած ճյուղավորումների և գլխավոր ցողունների վրա յառաջանում են դեղին պսակաթերթերով ծաղիկներ: Պտուղը կոպիտ ելուններով տանձաձև ընկուլիկ է; երկբնանի կամ չորսբնանի: Յուրաքանչյուր բնում կա մեկական դարչնագույն-դեղին, կնձռոտ ու փայլատ մակերեսով սերմ: 1000 ընկուլիկը կշռում է մոտավորապես 25 գ: Ծաղկում է մայիսից մինչև օգոստոս ամիսը և հասունանում մայիսի վերջից՝ նույն հաջորդականությամբ: Վերին հարկի մուլախոտ է: Բույսը հիմնականում բազմանում է սերմերով, բայց նպաստավոր պայմաններում արմատների բողբոջակիր հատվածները կարող են արմատածիլ առաջացնել: Այդ դեպքում բույսը հակվում է դեպի վեգետատիվ բազմացում (բազմամյաություն) և նրա դեմ տարվող պայքարը ավելի է դժվարանում:

Տարածված է Եվրոպայի և Ասիայի համեմատաբար տաք գոտիներում, Ղրիմում, Կովկասում: Աճելով <ՍՍՀ> բոլոր գոտիներում, հատկապես մեծ վնաս է հասցնում հացաբույսերի ցանքերին:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի երկշաքիլավոր, երկամյա մոխախոտ է: Ունի բաց կանաչ, կիսաթափանցիկ, ուղղական գուն ցողուններ, որոնց բարձրությունը հասնում է մինչև 2 մ: Ցողունները երբավոր են, թաղանթափշերով և սարդոստայնատիպ մալմրվուկներով պատված: Տերևների իդեալական եզրագիծը էլիպս է, սակայն եզրերում խիստ կտրատված: Տերևաջղերը վերջանում են մանր, սուր փշերով: Ծաղկափթթությունը պամբյուղ է, նույնպես փշապատ: Պսակը վառ կարմիր է: Սերմերը երկարացած-նշտարաձև են, վանդակաձև դաջվածքով: Սերմը հասունանալուց հետո պամբյուղից հեշտությամբ պոկվում և զագաթի փուփուկի միջոցով քամուց տարվում է, ընդգրկելով հսկայական արեալ: 1000 սերմը կշռում է մոտավորապես 11 գ: Մեկ բույսը տալիս է մոտավորապես 8000 սերմիկ: Ծլելուց հետո, վեգետացիոն ժամանակաշրջանի առաջին ցիկլում (առաջին տարի) բույսը առաջացնում է իլիկաձև հաստացած, ամուր ու ճկուն առանցքային արմատ, ուր մինչև ձմեռումը կուտակվում է պլաստիկ նյութերի հսկայական պաշար, արագ վերաճն ու հետագա վարգացումը ապահովելու համար: Ձմեռում է խիտ վարդակ կապմող փշոտ և ուտայնապատ տերևներով, որոնք իրար կիպ կպած, նստած են գետնի մակերեսին: Վերջին հանգամանքը արմատներում կուտակված սննդանյութերի հետ խիստ բարձրացնում է բույսի ձմեռադիմացկունությունը և ապահովում նրա երկրորդ ցիկլի աճը: Ծաղկում և պտղաբերում է հուլիս-օգոստոսին:

Մոլախոտը տեղափոխվել է Միջերկրական ծովի ափերից և լայն տարածում գտել Եվրոպայում, ՍՍՀՄ ասիական մասում, ԱՄՆ-ում: ՀՍՍՀ ցածրադիր ու նախալեռնային գոտիներում աղբոտում է ցեղերը, հացաբույսերի ու միամյա խոտաբույսերի ցանքերն ու այգիները:

ԿԱՂՇՆԱԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

ONOPORDON ACANTHIMUM L.

ТАТАРНИК ОБЫКНОВЕННЫЙ

1. Բույսը ծաղկման փուլում: Գլխավոր ցողունը հիմքից և վերին մասերից հատված է: Ցողունի գագաթին ծաղկափթթությունն է: 2. Արմատը: 3. Ծիր բույսի կյանքի առաջին տարում: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Սերմը բնական (փուփուկով) և խոշորացրած չափերով:







ԿՈՒՏՈՒԿ ՄԵԾ

ARCTIUM LAPPA L.

ЛОПУХ БОЛЬШОЙ



1. Բույսը ծաղկման փուլում: Գլխավոր և երկրորդային ցողունները հիմքից և զագաթից հատված են: Չախ կողմում՝ ցողունի զագաթը ծաղիկ-վամբյուղներով:
2. Հասուն բույսի արմատը:
3. Ծիրը բույսի կյանքի առաջին տարում:
4. Ծաղիկ երկայնական կտրվածքը:
5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի երկշաքիլավոր, երկամյա մոլախոտ է: Ունի երկարած, իլիկաձև արմատ, որը երբեմն կարող է հողի վարելաշերտի խորությունից անցնել: Այն հատկապես ծայրի մասում առաջացնում է երկրորդական արմատներ: Ունի կանգուն, հաստ ու ուժեղ ճյուղավորվող ցողուններ, որոնց բարձրությունը հասնում է մինչև 1,5 մ: Չորանալուց հետո նրանք խիստ ամրանում են: Տերևները սրտաձև են, խոշոր: Ներքևից դեպի վերև փոքրանում են, նեղանում: Նրանց վերին մասը մերկ է, վառ կանաչ, ներքին մասը պատված է սպիտակ, մանր թելիկներով: Ծաղիկ-վամբյուղներն ամփոփված են գրեթե գնդաձև ծաղկափթթության մեջ, որը դրսի կողմից ամբողջությամբ սչալված է կեռ փշերով: Պսակը մուգ կարմիր է: Սերմերը բարակ, նշտարաձև են, խորդուբորդ, գորշ շագանակագույն, փայլատ: 1000 սերմը կշռում է մոտավորապես 10 գ: Բույսը հաջորդաբար ծաղկում և հասունանում է հուլիս-օգոստոս ամիսներին: Սերմերը թափվում են ամուր պտղապատյանի բացվելուց հետո, սակայն տարածվում են ամբողջությամբ կեռ փշերով պատված պտղի հետ՝ մարդկանց, փոխադրամիջոցների ու կենդանիների միջոցով: Մեխանիկական հարվածները նպաստում են պտղապատյանի բացվելուն ու սերմերի թափվելուն: Հենց այս հանգամանքն էլ նպաստում է նրա տարածմանը ոչ միայն անմշակ տարածություններում, այլև անուշադրության դեպքում նաև հացաբույսերի ու ցանկացած կուլտուրայի դաշտերում:

Տարածված է երկրագնդի ու ՍՍՀՄ չափավոր կլիմայի գոտիներում: Հայաստանի ցածրադիր ու նախալեռնային գոտիներում աղբոտում է ամենուր, ներառյալ հացաբույսերի դաշտերը:



Նեխուրազգիների (Umbelliferae) ընտանիքի երկշաքիլավոր, երկամյա բույս է, ունի պարաձև արմատ, բարձր (մինչև 150 սմ) ցողուններ, որոնց ստորին մասը պատված է կոշտ մազվուկներով. ուղղականոն է, ճյուղավորված: Ցողունի հիմքը հաստացած է, հանգույցները տերևածոցերում՝ ուռած: Տերևները եռակի փետրաձև են, երբեմն թույլ թավապատ: Յուրաքանչյուր ցողուն կամ ճյուղավորում վերջանում է հովանոցաձև ծաղկափթոթայամբ, 15—20 ճառագայթներով: Ծաղկի պսակաթերթերը սպիտակ են, մանր: Պտուղը երկմաս է, հակագուրպաձև, երկարավուն. սերմիկը հնգակող է, մակերեսը՝ հարթ կամ կետավոր, գույնը՝ դեղնավուն: 1000 սերմնապտուղը կշռում է 2—3 գ: Բույսն առատ սերմնակալում, բազմանում ու տարածվում է միայն սերմերով: Ծլելու տարին, աշնան վերջում առաջացնում է խիտ, հավաք, մաշկապատ տերևավարդակ: Հաջորդ տարին, գարնանը առաջացնում է շղավոր, բայց հաստ ու մսալի ցողուն: Այնուհետև ցողունը հանգուցավորվում է, արագ աճում և դառնում գրեթե սնամեջ: Ծաղկունը՝ հովանոցի առաջացումը, համընկնում է հացաբույսերի ծաղկակալման փուլի հետ, որի սովորարկումից տուժում են հատկապես ուշ ցանքի կարճացողուն կուլտուրաները: Պտղաբերում է օգոստոս ամսին, որը լեռնային շրջաններում դարձյալ համընկնում է հացաբույսերի ու խոտաբույսերի հասունացման հետ, աղբոտելով և հողը, և սերմնանյութը:



Տարածված է երկրագնդի հարավային կիսագնդում, ՍՍՀՄ եվրոպական մասի հարավում, Ղրիմում, Կովկասում, Միջին Ասիայում: Հայաստանում ամենաշատ տարածված է լեռնային գոտու, նախալեռնային՝ բարձրադիր ենթագոտու հացաբույսերի ու ցանովի խոտաբույսերի ցանքերում:

## ՂՄԻ ՍՈՒՈՒԿԱՅԻՆ

### CHAEROPHYLLUM BULBOSUM L.

### БУТЕНЬ ЛУКОВЧАТЫЙ

1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում: Երկրորդ տարվա ցողունը հիմքից ու գագաթային մասերից հատված է: Չախ կողմում՝ հովանոցաձև ծաղկաբույլն ու պտղաբույլը. 2. Արմատային սոխուկը. 3. Ծիլը բույսի կյանքի առաջին տարում. 4. Ծաղկաբույլը. 5. Ծաղիկը խոշորացրած. 6. Երկմաս պտուղը բնական և խոշորացրած չափերով. 7. Սերմիկը բնական և խոշորացրած չափերով:





## ՄԻՔԵՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ

**FALICARIA VULGARIS BERN**

**РЕЗАК ОБЫКНОВЕННЫЙ**



1. Բույսը կյանքի երկրորդ տարում, ծաղկման փուլում: Ցողունը հիմքից և գագաթից հատված է: Չափ կողմում ցողունի գագաթը հովանոցավոր ծաղկափղթթությամբ. 2. Արմատը. 3. Ծիլը բույսի կյանքի առաջին տարում. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմերը բնական և խոշորացրած չափերով:

Նեխուրազիների (Umbelliferae) ընտանիքի երկշաքիավոր, երկամյա բույս է՝ միամյա ձևերով: Ունի առանցքային, իլիկաձև արմատ, որը տարածվում է վարելաշերտի ամբողջ խորությամբ: Ցողունները ուղղականգուն են, թխկանաչ, 30—60 սմ բարձրությամբ, լերկ: Տերևները շատ ամուր են ու փետրաձև հատված, սղոցաեյր ու մերկ: Ցողունային ճյուղավորումների գագաթին նստած են հովանոցները, բարակ ու գրեթե իրար հավասար ծաղկակոթուններով, սպիտակ, մանր ծաղիկներով: Պտուղները հակագուրպաձև են, փոքր-ինչ կորացած, երկարավուն: Նրանք վերին կամ միջին մասով կպած են պտղակոթին, որը և հենց ճառագայթն է՝ ծաղկակոթունը: Սերմիկները մանր են, երկարավուն, թույլ կնճռոտ, փայլատ մակերեսով, դեղնադարչնագույն երանգով: 1000 սերմիկը կշռում է 1,25—2,5 գ: Բույսը աճում և բազմանում է (առանց բացառության) սերմերով: Նույն տարվա սերմերն ավելի վառ են ծլում, քան արդեն ձմեռածները, որոնք առաջին տարին ձմեռում են կոշտ տերևներով վարդակի փուլում: Բույսի վերածը շարունակվում է աշնանացան հացբույսերի վերածի և գարնանացանների ծելու հետ: Այդ ժամանակ սիբեիսն ուտելու համար բրիչներով հանելու դեպքում դուրս են գալիս նաև մշակովի բույսերի մատղաշ ծիլերը, դառնալով ցանքերի արհեստական նոսրացման պատճառ: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին և պտղաբերում օգոստոսի վերջին:

Տարածված է Ասիայի հարավային գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Կովկասում, Միջին Ասիայում, Արևմտյան Սիբիրում: Հայաստանի բարձր լեռնային, հատկապես լեռնային ու նախալեռնային գոտիներում աղբոտում է աշնանացան և գարնանացան հացբույսերի և այլ կուլտուրաների ցանքերը:



Նեխուրազգիների (Umbelliferae) ընտանիքի երկշաքիլավոր, երկամյա մոլախոտ է: Ունի լավ պարզացած, ճյուղավորվող արմատային համակարգ, ավելի քան 100 սմ բարձրությամբ ուղիղ, ճյուղավորվող, սնամեջ ու ողորկ ցողուններ, որոնք հաճախ ունենում են դարչնագույն բծավորում: Տերևները կրկնակի կամ եռակի փետրաձև են, լերկ, կանաչ: Ծաղկաբույլը հովանոց է՝ 12—20 ճառագայթներով: Ծաղկապսակը սպիտակ է, պտուղը՝ գնդաձև, սերմը՝ հնգակող: 1000 սերմի կշիռը մոտավորապես 0,5 գ է: Մեկ բույսը առատ պտղաբերելու դեպքում տալիս է ավելի քան 15.000 սերմ: Սերմերը համեմատաբար ավելի լավ են ծլում ձմեռելուց հետո՝ զարնան սկզբին և վերջին, առաջին տարում առաջացնելով տերևային վարդակ և ձմեռում այդ ձևով, արմատավիկի վրա պահպանելով ցողունասկզբնակը: Հաջորդ տարվա զարնանը ուժեղ վերած է տալիս, առաջացնելով վերգետնյա վեգետատիվ ու գեներատիվ օրգաններ: Բույսի ծաղկումն ու պտղաբերումը համապատասխանում է Հայաստանում մշակվող հիմնական կուլտուրաների միջահաս ձևերի ու սորտերի ծաղկման ու հասունացման հետ, որը նպաստում է նրա տարածմանը թե սերմնանյութի մեջ ընկնելու, թե հողը աղբոտելու միջոցով: Բույսը բազմանում է բացառապես սերմերով:


Տարածված է Եվրոպայի, Ասիայի, Հյուսիսային ու Հարավային Ամերիկայի չափավոր տաք գոտիներում, ՍՍՀՄ Եվրոպական մասում, Միջին Ասիայում, Կովկասում, Հայաստանի նախալեռնային, միջին լեռնային և անտառառափաստանային գոտիներում. աղբոտում է հացահատիկային կուլտուրաների ցանքերը, բնական ու ցանովի խոտհարքները, անտառային ու տափաստանային մարգագետինները: Պիսակը խիստ թունավոր բույս է:

## ՊԻՍԱԿ ԲԾԱՎՈՐ

**CONIUM MACULATUM L.**

**БОЛИГОЛОВ ПЯТНИСТЫЙ**

1. Բույսը ծաղկման և պտղակալման շրջանում: Երկրորդ տարվա ցողունը հիմքից ու գագաթից հատված է: Աջ կողմում՝ ցողունի գագաթը ծաղկաբույլով ու պտղաբույլով. 2. Արմատը. 3. Ծիլը բույսի կյանքի առաջին տարում. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը խոշորացրած. 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:





ՏԱՏԱՍԱԿԱՓՈՒՇ ԳԱՆԳՈՒՐ


CARDUUS CRISPUS L.

ЧЕРТОПОЛОХ КУРЧАВЫЙ




1

1. Բույսը կյանքի երկրորդ տարում, ծաղկման փուլում: Ցողունը հինքից և գագաթից հատված է: Աջ կողմում՝ ցողունի գագաթը պամբյուղ-ծաղկափթուխայնք: 2. Սլմատը: 3. Ծիլը բույսի կյանքի առաջին տարում: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Սերմը բնական (փուփուկով) և խոշորացրած չափերով:



2



4



5



6

Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի երկշաքիլավոր, երկամյա մոլախոտ է: Բազմաճյուղ և տարածվում է միայն սերմերով, որոնց ծլունը, հատկապես աշնանը, ձգձգվում է: Գարնանը, ծլելուց և ձվաձև շաքիլատերևներ առաջացնելուց հետո, բույսը մինչև աշուն իր աճման կարողությունը հավաքագրում է հզոր, ճյուղավորվող ու խորը գնացող իլիկաձև առանցքաարմատ և խիտ տերևավարդակ առաջացնելու վրա:

Գարնանը ծլելու դեպքում հսկայական վնաս է հասցնում զարնանացան կուլտուրաներին, աշնանը ծլելու և երկու անգամ ձմեռելու դեպքում՝ աշնանացան կուլտուրաներին: Ձմեռելուց հետո, հաջորդ տարվա գարնանը առաջացնում է ուժեղ ճյուղավորվող, ծայրեծայր թաղանթաթևերով ու փշերով պատված ուղղականգուն ցողուններ, որոնց բարձրությունը հասնում է 1,5 մ: Տերևները ներքևի մասում գրեթե փետրաձև են, վերին մասում՝ խորը կրտրտված, ատամնաձև, փշապատ: Ծաղկափթուխայնքը պամբյուղ է: Ծաղիկը գրեթե կլոր է, փշապատ, ծաղկապսակը՝ մուգ կարմրից մինչև կարմրամանուշակագույն: Սերմիկը գրեթե էլիպսաձև է, մակերեսը կոշտ ու փայլատ, դեղնագորշավուն երանգով: 1000 սերմը կշռում է մոտավորապես 1,45 գ, մեկ բույսը կարող է տալ մինչև 6500 սերմ:

Տարածված է ամբողջ Ասիայում, Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Կովկասում, Միջին Ասիայում ու Ղապախստանի հյուսիս-արևմտյան մասում: Հայկական ՍՍՀ ցածրադիր, նախալեռնային ու լեռնային գոտիներում աղբոսում է գրեթե բոլոր մշակովի ու անմշակ հողատեսքերը, հատկապես հացաբույսերի, բազմամյա խոտաբույսերի ցանքերն ու կարտոֆիլի տընկարկները:



## ԲԱԶՄԱՄՅԱՆԵՐ

Այս մոլախոտերը առաջին տարին պտղաբերելուց հետո չեն մահանում: Նրանք վեգետատիվ ճանապարհով տարիներ շարունակ կարող են վերաճել:

Առանցքաւորմատավորներ.— Բազմանում են հիմնականում սերմերով:


Մատիտեղազգիների (Polygonaceae) ընտանիքի բազմամյա մոլախոտ է: Ունի հզոր պարզացած իլիկաձև, առանցքային արմատներ: Յողունը ուղղականգուն է, վերին մասում ճյուղավորվող, հասնում է մինչև մեկ և ավելի մետր բարձրության: Տերևները լայն նշտարաձև են, ներքինները՝ կոթավոր, վերինները նստած են հանգույցների վրա: Յուրաքանչյուր տերևածոցից դուրս է գալիս ծաղկափթոթյունը՝ երկսերմ ծաղիկներով, որոնք փնջերով նստած են հուրանի կոթունի վրա: Սերմնապտուղը կտրվածքում եռակող է, դարչնագույն ու փայլուն: 1000 սերմնապտուղը կշռում է մոտ 1,4 գ. մեկ բույսը տալիս է մինչև 5000 սերմնապտուղ: Ավելուկը հանդես է գալիս որպես երկամյա բույս: Առաջին տարին առաջացնում է 30 սմ երկարությամբ առանցքաարմատ և տերևային վարդակ, երկրորդ տարում ցողունակալվում ու պտղաբերում է, երրորդ և հաջորդ տարիներին արմատավիկից վերաճ է տալիս: Թե կյանքի որերո՞րդ տարում է դադարում բույսի վերաճը, դրանից էլ կախված է մոլախոտի կյանքի տևողությունը: Ծաղկում և հաջորդաբար պտղաբերում է ամառվա կեսից: Տարածված է երկրագնդի բարեխառն գոտիներում, ՍՍՀՄ-ում՝ Կովկասում, Միջին Ասիայում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում: ՀՍՀՄ բոլոր գոտիներում աղբոտում է հատկապես աշնանացան կուլտուրաների, զարնանացանների դաշտերը, բանջարանոցային կուլտուրանները, խոտհարքները, արոտավայրերը:

## ԱՎԵԼՈՒԿ ԳԱՆԳՈՒՐ

RUMEX CRISPUS L

ЩАВЕЛЬ КУРЧАВЫЙ

1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին, ծաղկամուս-պտղաբերման շրջանում, ցողունը հիմքից և գագաթից հատված է: Աչ կողմում՝ հուրանանման ծաղկաբույլերն ու պտղաբույլը: 2. Հասուն բույսի ձմեռող արմատը: 3. Ծիլը շաքիատերևներով՝ բույսի կյանքի սկզբնական շրջանում: 4. Ծաղիկները: 5. Սերմիկը՝ պարուրող տերևով: 6. Սերմը ամենալայն կողմից՝ բնական և խոշորացրած չափերով: 7. Սերմի ընդլայնական կտրվածքը:









ԵՋԱՆ ԼԵՋՈՒ ՆՇՏԱՐԱՏԵՐԵՎ

PLANTAGO LANCEOLATA L.

ПОДОРОЖНИК ЛАНЦЕТОЛИСТНЫЙ



1. Բույսը կյանքի երկրորդ և հաջորդ տարիներին, ծաղկման ու պտղակալման շրջանում. 2. Հասուն բույսի արմատը. 3. Ծիլը շաքիլատերևներով՝ բույսի կյանքի սկզբնական շրջանում. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Սերմերը բնական և խոշորացրած չափերով:

Ջղախոտազգիների (Plantaginaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի առանցքային արմատ, որը խիստ փնջավորվում է մալարմատներով: Հենց արմատավիկից առաջացնում է վերսուլաց, բայց աղեղնաձև կորացած բարակ ու կլոր, 50 սմ երկարությամբ ցողուններ: Տերևները նեղ են, հաստ, նշտարաձև-սրածայր: Յուրաքանչյուր ցողուն անպայման վերջանում է հասկանման երկարավուն-ձվաձև ծաղկափթթությամբ: Կյանքի առաջին տարվա աշնանից բույսը առաջացնում է խիտ տերևային վարդակ, ապա՝ ծաղկակիր ցողուններ և իր ամբողջ կյանքի ընթացքում մնում այդ տեսքով: Ծաղկապսակը բաց գորշավուն է: Պտուղը մեկական սերմնարանով երկու տուփիկ է, սերմը՝ մանր, երիկամաձև, բաց շագանակագույն: Մեծ մասամբ սերմերով է բազմանում, բայց հողի վատ մշակման դեպքում, երբ արմատահատվածները մնում են հողում, նրանցից կարող են նոր բույսեր առաջանալ: Քանի որ նշտարաձև եզան լեզվի սերմերը խիստ նման են երեքնուկի սերմերին և բույսը մասնագիտացած է երեքնուկի ու առվույտի կուլտուրային, ուստի անասնակերի հետ անցնելով անասունների մարսողական օրգաններով, այնտեղից դուրս են գալիս 50%-ով ծլունակ վիճակում և գոմաղբի հետ նորից անցնում հողի մեջ:

Տարածված է երկրագնդի համեմատաբար բարեխառն գոտիներում: Ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ Սովետական Հայաստանի գրեթե բոլոր գոտիներում, աղբոտում է երեքնուկի, առվույտի, աշնանացան ու գարնանացան հացաբույսերի, տեխնիկական կուլտուրաների ցանքերը, նաև այգիները և մարգագետիններն ու խոտհարքները: Մեծ մասամբ հանդիպում է առուների ափերին, ձամփեղբերին, միջնակներում և այլուր:



Մատիտեղազգիների (Polygonaceae) ընտանիքի երկշաքիլավոր առանցքաարմատավոր մոլախոտ է: Ազգակից է և առաջին հայացքից խիստ նման գանգուր ավելուկին, բայց մի շարք էական հատկանիշներով դժվար չէ այս բույսերը տարբերել միմյանցից: Թրթնջուկն ունի առանցքային արմատների ամբողջ համակարգ, որ հզոր փնջարմատի տպավորություն է թողնում: Քանի որ նույն տարվա սերմերը վատ են ծլում, թափվելու հաջորդ տարում սերմերից առաջանում է նետասրտաձև տերևային լարդակ և երկրորդ տարում, արմատի վզիկի բողբոջներից՝ բժափոր-մսալի, թթու և մինչև 90 սմ բարձրությամբ ցողուններ: Վարդակը կապմող և ցողունի հիմքում դասավորված տերևները կոթունավոր են: Ցողունի վերնամասում տերևները նստած են ցողունների վրա և նրանց ետին ծայրերը գրկում են ցողունը: Ծաղկակիր ցողունը սկսվում է տերևածոցերից՝ հուրանանման ծաղկափթոթությամբ: Ծաղիկները վարդագույն են: Պտուղը եռանկյունաձև ընկուլիկ է: Սերմի և պտղի եպրագծերն իրար համընկնում են (գանգուր ավելուկի սերմը եռանկյունի է, պտուղը՝ կլոր, թաղանթավոր): Այս բույսի վեգետատիվ բազմացման հնարավորությունը ավելի մեծ է: Կյանքի երրորդ տարում արմատը կարող է ձեղքվել և արմատավզիկը բաժանվել առանձին մասերի: Այսպիսով, արմատավզիկի բողբոջները նոր ցողուններ տալու ավելի լայն հնարավորություն են ստանում: Բույսը ամենաշատ տարածված է հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտիներում, ՍՍՀՄ ամբողջ բարեխառն գոտում, Կովկասում: Հայաստանի լեռնային, բարձր լեռնային և նախալեռնային բարձր ենթագոտում աղբոտում է բազմամյա խոտաբույսերի, հացաբույսերի, բանջարանոցային կուլտուրաների ցանքերը, ցեղերն ու անմշակ տարածությունները:

ԹՐԹՆՋՈՒԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

RUMEX ACETOSA L.

ЩАВЕЛЬ КИСЛЫЙ

1. Բույսը կյանքի երկրորդ և հաջորդ տարիներին՝ ծաղկման և պտղակալման շրջանում: Ցողունը հիմքից հատված է: Աջ կողմում՝ հուրանանման ծաղկափթոթությունը: 2. Հասուն բույսի արմատը: 3. Ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Արական և իգական ծաղիկները: 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով և նրա ընդլայնական կտրվածքը:









ԺԱԽ ԹԱՎՈՏ

**HERACLEUM TRACHYLOMA  
FISCH. ET LALL.**

**БОРЩЕВИК ПУШИСТЫЙ**

1. Բույսը կյանքի երրորդ և հաջորդ տարիներին: Ցողունը հիմքից և գագաթից հատված է: Չախ կողմում մեծ հովանոցը (ծաղկաբույլը): 2. Հասուն բույսի արմատը: 3. Ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղիկը խոշորացրած: 5. Պտուղը խոշորացրած:



Նեխուրազգիների (Umbelliferae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի հզոր վարգացած ու ճյուղավորվող արմատ: Ցողունները հաստ են, անկանոն-կողավոր, չճյուղավորվող, հասնում են մինչև 2մ բարձրության: Ունի խոշոր, բլթակավոր տերևներ՝ ներքևում ավելի թավոտ, քան վերևում: Ցողուններն ունեն դեղնադարչնավուն երանգավորում: Տերևների վերին կողմը կանաչ է, ներքին կողմը՝ կանաչ-գորշավուն, թավոտ: Յուրաքանչյուր ցողուն կամ ցողունային ճյուղավորում վերջին ցողունահանգույցից արձակում է սիմետրիկ, գրեթե իրար հավասար ճառագայթներ: Ծաղկաթերթերը հակառակ-սրտաձև են, սպիտակ, բաց կարմրավուն կամ կարմրավուն: Պտուղը ձվածիր է 1000 սերմը կշռում է 1,4 գ: Ծաղկում է հունիս ամսին և առատ պտղաբերում՝ հուլիսին: Սերմերի ծունկությունը ոչ միայն բարձր է, այլև նրանք կարող են ծել անմիջապես, հենց առաջին տարին: Այդ պատճառով էլ ժախը կարող է մինչև ցողունակալելը 2 անգամ ձմեռել, մնալով վարդակի փուլում: Հենց այս հատկանիշն էլ պայմանավորում է բույսի դանդաղ աճը կյանքի սկզբնական շրջանում: Քանի որ բույսը վերաճում է միայն արմատավիկի բողբոջներից, ուստի և այն բուսուտներ չի առաջացնում: Կյանքի առաջին տարիներին վարդակի փուլում, հատկապես մանր եղջերավոր անասունների ինտենսիվ արածեցման դեպքում, դաշտի վարակվածությունը այս մոլախոտով կարելի է նվազագույնի հասցնել:

Համեմատաբար տաք երկրների բույս է, բայց ՀՍՍՀ-ում տարածված է լեռնային, լեռնաանտառային, մերձալպյան խոտհարքներում ու մարգագետիններում: Պայքարը վատ կազմակերպելու դեպքում վարակում է նաև մշակովի բույսերի ցանքերն ու տնկարկները:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի երկշաքիավոր, բազմամյա մոլախոտ է: Ունի վերին մասում խիստ հաստացած, միջին մասից լավ ճյուղավորվող առանցքային արմատ: Հաստ և զգալի մակերես ունեցող արմատավազիկը գտնվում է հողի մակերեսից 1—2 սմ խորը, որի վրա էլ անմիջապես նըստած է տերևային վարդակը: Այն առաջանում է ծլման սկզբից և ձևավորվում ձմեռելուց առաջ: Ձմեռելուն հաջորդող գարնանը վարդակային տերևներով շրջապատված բողբոջներից դուրս են գալիս ծաղկակիր ցողունները, ավելի ճիշտ՝ ծաղկակոթունները, որոնք սնամեջ են, փոքր-ինչ թավոտ և ներկված կարմրամանուշակագույն երանգով: Ծաղկակոթունի երկարությունը հասնում է մինչև 30 սմ: Ծաղկափթթությունը խոշոր պամբյուղ է՝ դեղին, լեզվակավոր ծաղիկներով, որոնք հասունանալիս առաջացնում են բարակ, գուրպանման մանր սերմեր: 1000 սերմիկը կշռում է 0,7 գ: Սերմերի երկար քթի վրա նըստած են սպիտակ գույնի մազափնջերը՝ սերմին բարձր առազաստայնություն հաղորդող հարմարանքները: Չնայած բույսը բազմանում և տարածվում է սերմերով՝ քամու օգնությամբ, բայց խատուտիկի բազմացումը պայմանավորված է նրանով, որ արմատի յուրաքանչյուր հատվածը նպաստավոր պայմաններում կարող է նոր բույսեր առաջացնել:

Սերմերն օժտված են բարձր ծլունակությամբ, սակայն ձմեռումից հետո նրանց ծլունակությունը զգալիորեն պակասում է: Նրանք 4 սմ-ից ավելի խորը թաղվելուց հետո չեն ծլում:




Ունի գրեթե անսահմանափակ արեալ՝ սկսած Եվրոպայից, Ասիայից ու Ամերիկայից մինչև ծայր հյուսիս: ՀՍՍՀ բոլոր գոտիներում աղբոտում է ցանքերը, ցեղերը, այգիներն ու վարձագետիները:

## ԽԱՏՈՒՏԻԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

TARAXACUM VULGARE LAM.

ОДУВАНЧИК ОБЫКНОВЕННЫЙ

1. Բույսը կյանքի երրորդ և հաջորդ տարիներին՝ ծաղկման ու պտղաբերման շրջանում: Չախ կողմում ցողունի գագաթին պտղաբույլը՝ թռչող հարմարանքներով (բնական չափերով): 2. Հասուն բույսի արմատը: 3. Ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Սերմը խոշորացրած:





ՕՇԻՆԴԻ ՊԱՆԸ

ARTEMISIA ABSINTHIUM L.

ПОЛЫНЬ ГОРЬКАЯ



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկակալման փուլում: Ցողունը հատված է ներքևի և գագաթային մասերից: 2. Բախ կողմում հուրանավոր ծաղկափթթությունը՝ պամբյուղ-ծաղիկներով: 3. Հասուն բույսի արմատը: 4. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի առաջին տարում: 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր, առանցքաարմատավոր մուխխոտ է: Ունի խորը գնացող առանցքային արմատ և բազմաթիվ երկրորդային արմատներ: Ամբողջ արմատային համակարգը հզոր փնջարմատի տպավորություն է թողնում: Արմատի վերին մասում, հողի մակերեսից ներքև, առանձին արմատներ ցողունի հիմքում կրում են մի խումբ բողբոջներ, որոնցից առաջանում են և՛ ծաղկակիր, և՛ անպտուղ ցողուններ՝ տերևային վարդակով: Չնայած ցողունախումբը արմատների հետ միասնական է, բայց առանձնաառաջանում ցողունները կարող են ինքնուրույն աճել ու վարգանալ: Ցողունաբողբոջներից առաջին տարին առաջանում են ընձյուղներ, երկրորդ տարին՝ ծաղկակիր ցողուններ: Ցողունն ունի մինչև 1 մ բարձրություն, ուղղական գուն է, սլացիկ, չձյուղավորվող, գորշ արծաթավուն, թույլ թավոտ: Տերևները երկարավուն են, եռամաս, փետրաձև: Նրանց վերին մակերեսը պատված է գորշ մազիկներով: Տերևը նույնպես գորշ արծաթավուն է: Ցողունի վերին մասում տերևների կտրտվածությունը պակասում է: Չամբյուղ-ծաղիկները, որոնք կլոր են, կազմում են հուրանաձև ծաղկափթթությունը: Սերմիկը օվալաձև է, շագանակագույն: 1000 սերմը կշռում է 0,1 գ: Մեկ բույսը կարող է տալ մինչև 700.000 սերմ: Ծաղկում և աստիճանաբար սերմակալում է հուլիսից մինչև սեպտեմբեր ամիսը, աղբոտելով հիմնականում հողը և մանրասերմ կուլտուրաների սերմանայուրթը: Սերմերը կարող են տարածվել հողի, ջրի և ձնաբուրքի միջոցով: Տարածված է Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում, Կովկասում: ՀՍՀՄ գրեթե բոլոր գոտիներում աղբոտում է հացաբույսերի, խոտաբույսերի ցանքերը, այգիները:



Փաղտրիկազգիների (Borraginaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մուխխոտ է: Ունի հզոր վարգացած ու խորը գնացող արմատային համակարգ: Ի տարբերություն մի շարք առանցքաարմատավորների, կավաժիպակի արմատներն իրենց վրա կրում են ելունավոր բողբոջներ: Փխրուն արմատը մեխանիկական հարվածներից կարող է մասերի բաժանվել և բողբոջների միջոցով առաջացնել կոմպակտ բույսեր ու մացառուտներ: Ցողունը հզոր է, ուղիղ, վերին մասում ճյուղավորվող, մինչև 70 սմ բարձրության, պատված կոշտ ու խիտ մազվուկներով: Տերևները երկարավուն-ձվաձև են կամ լայն նշտարաձև: Տերևաջիղը հիմքի մասում վեր է ածվում տերևակոթունի: Այն մակերեսից պատված է թավով, եզրերից՝ փշերով: Ցողունաձայրի ճյուղավորումները կարճ տերևախմբերի ծոցերից սկսած վեր են ածվում հուրանների: Ծաղկի պսակը կարմրավունից մինչև ծիրանակապույտ է: Բույսը ծաղկում և հասունանում է հուլիսից մինչև օգոստոս ամիսը, պտղաբերումը շարունակվում է մինչև սեպտեմբեր: Պտուղն ընկույզ է, որն իր մեջ կրում է 4-ական միասերմ ընկույզիկներ: Սերմ-ընկույզիկը կոշկաձև է՝ սուր ծայրով և ուռած, ատամնաձև ու կլոր կողերով: 1000 սերմը կշռում է 5,2 գ: Մեկ բույսը կարող է առաջացնել մոտավորապես 1000 սերմ: Սերմերի թե՛ ծլունակությունը, թե՛ ծլման էներգիան բարձր է: Նպաստավոր պայմաններում գարնանը ծած սերմից բույսը կարող է մինչև աշուն հասնել ծաղկակալման և նույնիսկ պտղաբերման:


Տարածված է հատկապես Եվրոպայում և Ասիայում բացի ծայր հյուսիսից: ՀՀ-ում մինչև միջին լեռնային գոտին աղբոտում է բոլոր ցանքերն ու այգիները: Այս բույսը համարվում է նաև աշորայի ժանգի տեր-բույս:

ԿԱՎԱԺՊԱԿ ԻՏԱԼԱԿԱՆ

ANCHUSA ITALICA RETZ.

**ВОЛОВИК ИТАЛЬЯНСКИЙ**

1. Բույսը կյանքի առաջին տարվա վերջին կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման և պտղակալման շրջանում: Ցողունը հատված է միջին և գագաթային մասերից.
2. Հասուն բույսի արմատը՝ ելունավոր բողբոջներով.
3. Սերմնածիլը բույսի կյանքի սկզբում (արմատաբողբոջների ծլելու դեպքում առաջանում են տերևակիր ընձյուղներ).
4. Ծաղկի երկայնական կտրվածքը.
5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:







ԳԱՋ ՈՍԿԵԳՈՒՅՆ

**ASTRAGALUS AUREUS WILLD.**

**АСТРАГАЛ ЗОЛОТИСТЫЙ**



1. Բույսը կյանքի երկրորդ և հաջորդ տարիներին՝ ծաղկման վերջին փուլում. 2. Հասուն բույսի արմատային համակարգը. 3. Ծիրը բույսի կյանքի սկզբում. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Ունդը բնական և խոշորացրած չափերով. 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:



Բակլայզգինների (Fabaceae) ընտանիքի երկշաքիավոր, առանցքաարմատավոր կիսաթուփ է: Ցողունը կարճ է, կիսագետնատարած, կոպիտ, ճյուղավորվող, սև: Այն պատված է խոշոր, ոսկեդեղին գույնի սուր ու երկար փշերով: Հատկապես ցողունային ճյուղավորումների վրա անկանոն դասավորությամբ նստած են տերևախմբերը՝ 7—18-ական կույզ, էլիպսաձև կամ գծային, սուր տերևներով, որոնց ելքերը պատված են մանր փշերով: Ծաղկափթթությունը խիտ ողկույզ է: Բաժակը թավոտ է, սև, պսակը՝ դեղին: Ամբողջ բույսի երազիծը անկանոն գնդաձև կամ կիսագնդաձև է: Գոտուղը գրեթե գնդաձև ունդ է, հասունացման փուլում սև գույնի, կոպիտ, մալմվոր: Սերմերը սրտաօվալաձև են, ելունդավոր, դեղին, դարչնագույն կամ կանաչ:

Չորասեր բույս է: Լավ է աճում միջին լեռնային գոտու քարքարոտ, հարավային լանջերում: Հատկապես վնաս է հասցնում մարգագետիններին ու բնական խոտհարքներին: Վատ ազդոտեխնիկայի դեպքում միջնակներով ու անմշակ տարածություններով անցնում է մշակույթները՝ դառնալով ցանքային մոլախոտ: Կապմելով գնդաձև թփուտներ, այն ոչ միայն ուղղակի, այլ նաև անուղղակի վնաս է հասցնում թե մարգագետիններին ու արոտավայրերին, թե մշակովի բույսերի ցանքերին, դժվարացնելով մշակման, բերքահավաքի, կալսման ու պահեստավորման աշխատանքները, զցում է կերի ու մթերքների որակը:

Տարածված է երկրագնդի ասիական մայր ցամաքի չոր գոտիներում: ՍՍՀՄ տարածքում ամենաշատ հանդիպում է Կովկասում: Հայաստանի նախալեռնային, վերին և բարձր լեռնային, կենտրոնական ու հարավ-արևմուտյան գոտիներում մեծ վնաս է հասցնում թե կերաբույսերին, թե հացաբույսերին:



Նեխուրագինների (Umbelliferae) ընտանիքի բազմամյա, երկշաքիավոր սոխախոտ է: Արմատն առանցքային է, ժապավենաձև, խորը գնացող: Արմատավիկից սովորաբար առաջանում է վարգացած, հաստ ցողունը, որը ճյուղավորվում է վերին կեսից: Յողունն ուղղականգուն է, ողորկ, հասնում է մինչև 70 սմ բարձրության: Բնչպես ցողունն, այնպես էլ ամբողջ բույսն ունի կանաչաարծաթավուն երանգավորում: Տերևները եռաբաժան են, սուր, փշաձև կտրտված, կոթունավոր, կոշտ: Բույսի ծաղկակիցները փշապատ են: Ծաղիկը գնդաձև է, սպիտակավուն պսակաթերթերով: Պտուղը ձվաձև, մի կողմից տափակ սերմնապտուղ է: Սերմնապտղի հասունանալուց հետո երկսերմիկները բաժանվում են առանձին սերմիկների ու թափվում են: 1000 սերմը կշռում է 2 գ: Կարող են հողի մակերեսին թափվել կամ կուտուրական սերմնանյութի մեջ ընկնել նաև անբաժան սերմնապտուղները: Բույսը կարող է տարածվել ու բազմանալ ինչպես այս, այնպես էլ ամբողջ բույսի կամ նրա մի մասի կտրվել-գործվելու և վեգետատիվ ճանապարհով, հսկայական վնաս հասցնելով հատկապես բնական խոտհարքներին, արոտներին ու մարգագետիններին, ինչպես նաև կուտուրաների ցանքերին ու տնկարկներին:


Տիպիկ բարեխառն գոտու բույս է: Ծայր հյուսիսում, ինչպես նաև արևադարձային տաք ու խոնավ գոտիներում այն չի աճում: Լայնորեն տարածված է Եվրոպայի միջին, բարեխառն գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում, Կովկասում, Հայաստանի բոլոր գոտիներում: Արոտներից ու մարգագետիններից բացի աղբոտում է նաև հացաբույսերի ու միամյա խոտաբույսերի ցանքերը:

## ԵՐԻՆՋՆԱԿ ԴԱՇՏԱՅԻՆ

### ERYNGIUM CAMPESTRE L.

### СИНЕГОЛОВНИК ПОЛЕВОЙ

1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման և պտղակալման շրջանում. 2. Հասուն բույսի արմատային համակարգը. 3. Ծիրը բույսի կյանքի սկզբում. 4. Ծաղիկը. 5. Պտուղը և սերմը խոշորացրած չափերով:








ԳՈՐՏՆՈՒԿ ԹՈՒՆԱՎՈՐ

RANUNCULUS SCELERATUS L

ЛЮТИК ЯДОВИТЫЙ



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման և պտղակազման շրջանում. 2. Հասուն բույսի արմատը. 3. Ծիր բույսի կյանքի առաջին տարում. 4. Ծաղիկը. 5. Սերմը բնական ու խոշորացրած չափերով:



**Փնջարմատավորներ:** Բնականում են հիմնականում սերմերով և մասամբ՝ վեգետատիվ ճանապարհով:

Հրանուկազգիների (Ranunculaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի ոչ խորը գնացող, բայց վարճացած ու խիտ փնջաձև արմատներ, ուղղականում կամ պառկող, վերևից ճյուղավորվող ցողուններ, կոթունավոր (ներքևում), երեք կամ հնգամատ բաժանված, փոքր-ինչ թավոտ տերևներ: Ունի փայլուն, ոսկեդեղին, հնգապսակ ծաղիկներ: Պտուղը բարդ է, սերմիկը՝ բազմաձև, կլորավուն կամ երկար, բայց անպայման երկարացած թթով: Այն ունի կոշտ, փայլատ, կանաչ կամ մուգ շագանակագույն մակերես: 1000 սերմիկը կշռում է մոտավորապես 1,5 գ: Բազմանում է հիմնականում սերմերով, որոնք առավել լավ ու համերաջի ծլում են ձմեռելուց հետո, հողի մակերեսից՝ 0,5 սմ խորությունից: Գարնանը ծլած սերմերից նույն տարում առաջանում են վարճացած փնջարմատներն ու տերևային վարդակը: Երկրորդ տարում տալիս է ցողուններ, ծաղկում և լրիվ հասունանում է: Սերմերը հեշտությամբ են թափվում, տարածվելով կալսելուց հետո մնացած թափոնների, սերմանայութերի, ջրի միջոցով: Բացի այդ կարող է բազմանալ նաև տերևամերձ ցողուններից: Քանի որ խոնավասեր բույս է, ուստի լավ է բազմանում երկու իրար հաջորդող խոնավ տարիներին:

Աճում է խոնավ մարգագետիններում, արտավայրերում ու խոտհարքներում: Խոնավ տարիներին մեծ վնաս է հասցնում ՀՍՀՄ միջին և բարձր լեռնային գոտիների հացաբույսերի, բանջարաբուստանային բույսերի ու բազմամյա բակլազգի խոտաբույսերի ցանքերին: Շատ թունավոր է հատկապես ծաղկման շրջանում:



Ջղախոտազգիների (Plantaginaceae) ընտանիքի երկշաքիլավոր մոլախոտ է: Ունի կարճացած հիմնական արմատ, որը ճյուղավորվելով նուրբ արմատիկների, վերածվում է փնջաձև արմատի: Հողի մակերեսին գտնվող արմատավիկից սկսվում առաջանում են մանր, սրածայր, նստադիր, ապա՝ կոթունավոր տերևները, որոնք կապում են խիտ վարդակ: Այնուհետև արմատավիկի վրա և տերևածոցերում եղած բողբոջներից առաջանում են ծաղկակիր ցողունները կամ ծաղկակոթունները, որոնք լիքն են, կլոր, դեպի ներքև հաստացող, խավոտ: Հասնում են մինչև 70 սմ բարձրության: Տերևները լայն-ձվաձև են, ջղավոր (բույսը կոչվում է նաև ջղախոտ), սովորաբար մերկ, երբեմն՝ թավոտ:

Ցողունի վերևի մասը, երբեմն կեսից սկսած վերջանում է հասկանման ծաղկափթոթյամբ: Ծաղիկները սռնու վրա շատ խիտ են դասավորված: Ծաղկապսակը բաց գորշավուն է: Պտուղը ձվաձև տուփիկ է, որի մեջ դասավորված են 8—16 սերմ: Սերմերը մանր են, տարածել, որոնք հեշտությամբ կարող են տարածվել նաև կպչելու միջոցով: Հասունացած սերմերը հեշտությամբ են անջատվում հասկի առանցքից: Մեկ բույսը կարող է տալ մեծ քանակությամբ սերմեր, որոնք տարածվում են մարդկանց, փոխադրամիջոցների, քամու, ջրի, ձնհալքի միջոցով:

Տարածման արեալը անսահմանափակ է: Տարածված է ամենուր և աղբոտում է հիմնականում հացաբույսերի աշնան ու զարնան ցանքերը, բազմամյա խոտաբույսերի, շարահերկ բույսերի, բանջարանոցային ու բոստանային կուլտուրաների դաշտերն ու ցեղերը:

## ԵՋԱՆ ԼԵՋՈՒ ՄԵԾ

### PLANTAGO MAJOR L.

### ПОДОРОЖНИК БОЛЬШОЙ

1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման և պողակալման շրջանում. 2. Արմատը. 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը (տուփիկ) խոշորացրած. 6. Սերմերը բնական ու խոշորացրած չափերով:






ԱՌՅՈՒԾԱՏԱՄ ՄԱՋՈՑ

LEONTODON HISPIDUS L.

КУЛЬБАБА ВОЛОСИСТАЯ



1. Բույսը աճի առաջին կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում. 2. Արմատը բույսի կյանքի առաջին կամ հաջորդ տարիներին. 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում. 4. Ծաղկի երկայնական կտրվածքը. 5. Սերմը վրձնիկներով, բնական և խոշորացրած չափերով:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա մուխսոտ է: Աճման շաքիլային փուլում առաջացնում է խոր գնացող գլխավոր արմատը՝ երկրորդային արմատիկներով, իսկ վարդակի փուլում արդեն ունենում է լավ վարգացած ու հողի վարելաչերտի խորությունն ընդգրկող փնջաձև արմատային համակարգ: Տերևային վարդակը բաղկացած է երկար, սրածայր-նշտարաձև ու խիստ կտրտված տերևներից: Սերմի ծյման հենց առաջին տարվա աշնանը, հատկապես մարգագետնատիպ հողատեսքերում, մալոտ առյուծատամի փոփոխ տերևները վաղօրոք պեղեցնելով գետնի մակերեսը, մշակովի ու բնական կերաբույսերին պրկում են աճի ու վարգացման նվազագույն հնարավորություններից:

Տերևային վարդակի տերևածոցերից աճի նույն կամ հաջորդ տարում առաջանում են ուղղաձիգ, վերևի մասում ճյուղավորվող ծաղկակիր ցողուններ, որոնք հասնում են 35—40 սմ: Տերևները մանր են, բարակ, հարթեպր: Յուրաքանչյուր ցողուն և ճյուղավորում, առանց բացառության, իր գագաթին կրում է պամբյուղ-ծաղկափթթությունը՝ դեղնապսակ, լեզվակավոր ծաղիկներով: Բույսը սովորաբար ծաղկում և պտղաբերում է մարգագետինների խոտհարքից հետո, տալով երկարավուն, թեթևակի կորացած, մանր ու ակոսավոր սերմիկներ, որոնք շագանակագույն են, փայլատ և իրենց ծայրին կրում են դեղնաշագանակագույն վրձնիկներ: 1000 սերմը կշռում է մոտավորապես 0,7 գ: Յուրաքանչյուր բույսը կարող է տալ մոտավորապես 1200 սերմիկ:

ՍՍՀՄ միջին և հյուսիսային, ՀՍՀՄ միջին և լեռնային գոտիներում աղբոտում է մարգագետնային հողատեսքերը, բազմամյա, միամյա խոտաբույսերի, հացաբույսերի, շարահերկ բույսերի ցանքերն ու տնկարկները:



Դաշտավուկազգիների (Poaceae) ընտանիքի միաշաքիլ, բազմամյա, փնջարմատավոր մոլախոտ է: Ունի ոչ շատ ուժեղ պարզացած, բայց խորը գնացող արմատներ, մինչև 30 սմ բարձրությամբ կոշտ ու մերկ ցողուններ, որոնք հանգույցներ չունեն: Տերևային ամբողջ կանգվածը գտնվում է թփակալման հանգույցում: Վերջինս գտնվելով հողի մակերեսից զգալի բարձրության վրա, թեփուկային ու ցողունային մեռած ու կենդանի տերևապանգվածի հետ այնտեղ առաջացնում է գուղձեր, իսկ արմատները վարելաշերտում ձիւ: Այս հանգամանքը առավելապես ընդգծում է նրա վնասակարությունը մարգագետիններում: Տերևները բարակ են, սուր, կոշտ և երբեմն ավելի երկար են լինում, քան կարճ ցողունները: Ցողունը վերջանում է հասկով, որի ստնու միակողմանի ելունների վրա նստած են մեկական կարճ, քիստավոր հասկիկներ, որոնք թույլ կանգնելու հետևանքով հասունանալուց հետո թափվում են: Սերմերը մանր են, եռակող, կիսալունանձև կտրվածքով, կողերի վրա թույլ փշերով, սրածայր, փոքր-ինչ կորացած: Յուրաքանչյուր հասկ կարող է կրել միջին հաշվով 20 հատիկ: Մեկ բույսը կարող է տալ զգալիորեն բարձր ծլունակությամբ հարյուրավոր սերմեր: Սերմերը վարակում են հողը և ցանովի խոտաբույսերի սերմնանյութը, տարածվում ջրի, հալվող ձյան ու ձնաբուքի միջոցով: Բույսը ծաղկում և պտղաբերում է հուլիս-օգոստոս ամիսներին:


Տարածված է Եվրոպայում, Փոքր Ասիայում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Կովկասում, Սիբիրում: Աղբոտում է ՀՍՍՀ հատկապես լեռնային ու բարձր լեռնային մարգագետնատիպ հողատեսքերը:

## ՆԱՐԴՈՍ ԱՐԵՎԵԼՅԱՆ

### NARDUS ORIENTALIS L.

#### БЕЛОУС ВОСТОЧНЫЙ

1. Բույսը կյանքի երկրորդ և հաջորդ տարիներին՝ հասկակալման-ծաղկման շրջանում. 2. Հասուն բույսի արմատը. 3. Սերմից առաջացած ծիր բույսի կյանքի սկզբում. 4. Հասկիկները ծաղիկներով. 5. Հատիկը բնական և խոշորացրած չափերով:






ՈՍԿԵԾԱՂԻԿ ԲԱԶՏԱԹԵՐԹԻԿ

*CALTHA PALYPETALA HOCHST.*

КАЛУЖНИЦА МНОГОЛЕПЕСТНАЯ



1. Բույսը կյանքի երկրորդ և հաջորդ տարիներին՝ ծաղկման-պտղակալման շրջանում. 2. Արմատային համակարգը բույսի կյանքի հասուն շրջանում. 3. Ծիլը բույսի կյանքի սկզբում. 4. Ծաղկի երկայնական կտրվածքը. 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:



Հրանուկազգիների (Ranunculaceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա մոլախոտ է: Հողի մակերեսից զգալիորեն խորը գտնվող արմատավիկից ծիլերի հետ միաժամանակ առաջանում են շատ կարճ կոճղարմատ-արմատազլխիկներ, որոնք, սակայն, հետագայում չեն վարգանում որպես կոճղարմատներ, այլ շարունակվում են մանր ու նուրբ փնջարմատների ձևով: Արմատամերձ տերևները երկար կոթուններով են, լայն, սրտաձև, ցողունայինները նստադիր են և գրկում են ամբողջ ցողունը: Ցողունները ուղղականուն են, վերին տերևածոցերից ճյուղավորվող: Ցուրաքանչյուր ճյուղավորման գագաթին նստած է խոշոր, ոսկեդեղին, հնգապսակ ծաղիկը: Ծաղկում է մայիսին: Հունիսին արդեն առաջանում և հասունանում են պտուղ-տուփիկները, որոնցում գտնվում են մոտավորապես 20 հատ երկարավուն, սև կամ կարմրադարչնագույն, փայլուն սերմերը: Մեկ լավ վարգացած բույսը նպաստավոր խոնավ կամ ճահճային և գերխոնավ պայմաններում կարող է տալ 3000 սերմ. 1000 սերմը կշռում է մոտավորապես 0,9 գ: Սերմերը հողի մեջ երկար ժամանակ պահպանում են իրանց ծլունակությունը: Հողի մակերեսին մոտ դասավորված բողբոջները գարնանը շարունակում են վերաճ տալ:

Սերմերը տարածվում են հնձած խոտի, գոմաղբի, հոսող ջրի միջոցով: Աճում և արագ բազմանում է գերխոնավ վայրերում ու ճահիճներում:

Տարածված է ամբողջ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում և ՄԱՀՄ-ում: Մեր հանրապետության անտառային, լեռնատափաստանային ու լեռնային շրջանների խոնավ մարգագետիններին, խոտհարքներին և նրանց հարող մշակովի հողատեսքերին մեծ վնաս է հասնում:



**Ծառնատավորներ:** Այս կենսաբանական խմբի նոյախոտերը բազմաճյուղ են մասամբ սերմերով և հիմնականում վեգետատիվ ճանապարհով՝ արմատային ցրուկների կամ ստորգետնյա ընձյուղների վրա գտնվող բողբոջների միջոցով:

Արևքուրիկազգիների (Guttiferae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոլախոտ է: Բույսը հյուսիսում կոճղարմատավոր է, հարավում՝ ծառնատավոր: Արմատային ցրուկներն առաջանում են արմատավիկիին մոտ գտնվող արմատաբողբոջներից և աճի ընթացքում երբեմն դուրս են գալիս հողի մակերես՝ սկիզբ տալով նոր բույսերի:

Ցողունը ուղիղ է, կլոր, ողորկ, վերին մասում ճյուղավորվող: Այն կարող է հասնել մինչև 100 սմ բարձրության: Գլխավոր ցողունի տերևների անութներից դուրս են գալիս երկրորդային ճյուղավորումները:

Ծաղկաբույրը հուրան է, ոսկեղեղին պսակաթերթերով ու նշտարած քաժակաթերթերով: Պտուղը եռանիստ, բազմասերմ տուփիկ է: Սերմը գլանաձև է, չեջոտ, փայլուն, հիմնականում դարչնագույն մակերեսով: 1000 սերմը կշռում է 0,12 գ, մեկ բույսը տալիս է մինչև 16000 սերմ, որոնք ավելի լավ ծլում են թույլ լուսավորության պայմաններում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին և պլուզաբերում՝ օգոստոսին:

Արևքուրիկի տեսակները տարածված են աշխարհի գրեթե բոլոր գոտիներում, ՍՍՀՄ-ում և ՀՍՀ-ում՝ ամենուրեք աղբոտելով հացաբույսերի, խոտաբույսերի ցանքերն ու կերային հողատեսքերը:

## ԱՐԵՎՔՈՒՐԻԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

### HYPERICUM PERFORATUM L.

#### ЗВЕРОБОЙ ОБЫКНОВЕННЫЙ

1. Մայր բույսը ծաղկման-պտղակալման շրջանում: Կողային ճյուղավորումները հիմքից հատված են: Աջ կողմում՝ դուստր բույսը, ձախում՝ բողբոջից առաջացած ծիլը: 2. Ծառնատը կամ արմատային ցրուկը: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:







ԳՅՈՒՂԱՎԵՐ ԴԱՇՏԱՅԻՆ

**CIRSIIUM ARVENSE SCOP.**

**БОДЯК ПОЛЕВОЙ**



1. Մայր բույսը ծաղկման-պտղակավման շրջանում: Ցողունը հիմքից ու գագաթից հատված է: Աջ կողմից վերևում՝ կամբյուղ-ծաղկափթթությունը, ներքևում՝ ծըլարմատի բողբոջից առաջացած ծիրը: 2. Ծլարմատը: 3. Սերմից առաջացած ծիրը՝ շաքիլատերևներով: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Սերմը բնական (վրձնիկ-առագաստով) և խոշորացրած չափերով:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա մոլախոտ է: Բազմանում է հիմնականում վեգետատիվ ճանապարհով: Սերմից կամ արմատածիրի ամենափոքր կտորից առաջացած մատղաշ բույսը 2-րդ ամսում արդեն ընդունակ է վեգետատիվ բազմացման: Այդ շրջանում արմատածիրի՝ ցողունի վերափոխվելու մասում առաջանում են բողբոջներ, որոնցից էլ՝ հորիզոնական արմատածիրեր: Բողբոջներից առաջանում են նոր բույսեր. գլխավոր արմատը շարունակվում է՝ առաջացնելով նորանոր արմատածիրեր: Գլխավոր արմատը կարող է մինչև 6 մ խորանալ:

Ցողունները բարձր են, ուղղաձիգ-ուղղականգուն, փշոտ, թաղանթահավելվածներով, մինչև 100 սմ բարձրությամբ: Տերևները նըշտարաձև են, կտրտված, փշոտ ելքերով, անթավ, տակի կողմից կանաչ, վերևից՝ կանաչասպիտակավուն: Բույսը երկտուն է, ծաղկաբույլը՝ կամբյուղ: Արական բույսի կամբյուղները ավելի մեծ են, քան իգականներինը: Սերմիկը երկարավուն է, թեթևակի կորացած, գորշադեղնավուն, քիչ փայլուն և ունի շատ ծավալուն թռչող վրձնիկներ, որոնց միջոցով նրա տարածման արեալը հասնում է հարյուրավոր կիլոմետրերի:

Չնայած տարածման արեալը անսահմանափակ է, սակայն մոլախոտը իր չարորակ հատկանիշները անարգել դրսևորում է երկրագնդի հարավային գոտիներում: Լայնորեն տարածված է ՍՍՀՄ հարավային մասում: ՀՀ-ում կլիմայական ու տնտեսական բոլոր գոտիներում մեծ վնաս է հասցնում հացբույսերի, խոտաբույսերի, բանջարանոցային ու տեխնիկական կուլտուրաների ցանքերին, ցելահողմասերին, այգիներին և աճում մնացած բույր հողատեսքերում:



Բակլազգիների (Fabaceae) ընտանիքի երկշաքիավոր, բազմամյա մոլախոտ է: Ունի հաստ, դեղնագորշավուն առանցքային արմատներ, որոնց վրա եղած բողբոջների միջոցով առաջացնում է հորիզոնական և ապա ուղղահայաց ուղղությամբ աճող ծլարմատների խիտ ցանց: Ցողունները ուղղականգուն են, թեթևակի աղեղնաձև, կլոր, արծաթափայլ մաշկակներով: Ցողունը ունի մինչև 100 սմ բարձրություն և ճյուղավորվում է հատկապես վերին մասում: Ունի կենտ-փետրաձև բարդ տերևներ, որոնց գրեթե կանոնավոր-օվալաձև թիթեղները դասավորվում են խառը՝ հակադիր-հերթադիր: Տերևները ավելի մանր են և ավելի բաց կանաչ, քան քաղցրարմատի տերևները, որով և հիմնականում տարբերվում է նրանից: Յուրաքանչյուր ցողունի ու ցողունային ճյուղավորման ծայրին նստած է երկար ու խիտ ծաղկաբույլը՝ ողկույզը, սպիտակ կամ դեղին պսակաթերթիկներով: Պտուղը բազմասերմ, երկար ունդ է: Սերմերը կլոր, ձվաձև են, հարթ, փայլուն, դեղնավուն կամ դարչնագույն երանգով: Բույսի բոլոր մասերը դառնահամ են և թունավոր:


Տարածված է երկրագնդի հարավային տաք գոտիներում՝ Մերձավոր Արևելքում, Փոքր Ասիայում, Բալկանյան երկրներում, ՍՍՀՄ եվրոպական մասում, միջինասիական հանրապետություններում, Կովկասում, Անդրկովկասում: Խոնավ, ջրովի հողատեսքերի մոլախոտ է և ՀՍՍՀ Արարատյան հարթավայրում ու նրա նախալեռնային ցածրադիր ենթագոտիներում աղբոտում է անմշակ, բայց խոնավ տարածությունները (կազմելով միատարր բնուտներ), ջրովի ջարահերկ ցանքերը, այգիները:

Սերմերը խիտ թունավոր են: Նրանցով վարակված հացահատիկի այուրը հացաթխման համար այլևս պիտանի չէ:

ԴԱՌՆԱՐՄԱՏ ՍՈՎՈՐԱԿԱՆ  
**GOEBELIA ALOPECUROIDES BGE.**  
**СОФОРА ОБЫКНОВЕННАЯ**



1. Մայր բույսը ծաղկման փուլում: Կողային ճյուղավորումները հիմքից հատված են. 2. Ծլարմատը, որի բողբոջը ծարձակել է. 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում. 4. Ծաղկաբույլ-ողկույզի հատվածը: Վերին ծաղիկը պսակազերծված է. 5. Պտուղն ունդը բնական և սերմը բնական ու խոշորացրած չափերով:





## ԴԱՌՆԱԽՈՏ ԹՈՒՆԱՎՈՐ

ACROPTILON PICRIS C.A.M.

ГОРЧАК ЯДОВИТЫЙ



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում. 2. Ծարմատը բողբոջներով. 3. Սերմից և ծարմատի հատվածներից առաջացած ծիր. 4. Ծաղկի երկայնական կտրվածքը. 5. Սերմը բնական (վրձնիկներով) և խոշորացրած չափերով:

Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի բազմամյա, ծլարմատավոր, երկշաքիլավոր մոլախոտ է: Խիստ չարորակ, կարանտինային բույս է: Ծելու առաջին տարին դառնախոտը արմատամերձ վարդակի հետ միասին առաջացնում է արդեն խորը գնացող առանցքային արմատ, իր վրա մեծ մասամբ կրելով աճող բողբոջներ, որոնցից արմատավիկից փոքր-ինչ ներքև առաջանում են հորիզոնական կողային ծլարմատներ: Կյանքի երկրորդ տարում տերևավարդակից առաջանում է գլխավոր ցողունը, որի բարձրությունը տարբեր հողատեսքերում և կախված կուլտուրաներից ու նրանց խտությունից հասնում է 15—30-ից (խամերում) մինչև 90 սմ (ոռոգվող հողատեսքերում): Գլխավոր առանցքային արմատը կարող է հասնել 4-ից մինչև 10 մետր խորության, միաժամանակ առաջացնելով հորիզոնական արմատների հզոր ցանց:

Ցողունը ուղիղ է, խիտ ճյուղավորված և պատված է նուրբ մաշիկներով: Տերևները նստադիր են, նշտարած և նույնպես թույլ գեղձամազոտ: Ներքևի տերևները սղոցած կտրված են, վերինները ամբողջաեր են, ավելի մանր: Յուրաքանչյուր ցողունի կամ ճյուղավորման ծայրին նստած են կլորավուն վալբուլո-ծաղկափթթությունները՝ մանուշակագույն երանգավորմամբ վարդագույն ծաղիկներով (պսակաթերթերով): Սերմերը ձվաձև են, կողավոր և իրենց ծայրերին կրում են կարճ վրձնիկներ:

Տարածված է երկրագնդի չափավոր ու տաք կլիմայական գոտիներում, ՍՍՀՄ-ում՝ Միջին Ասիայում, Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Հարավային Ուկրաինայում ու Ղրիմում: ՀՍՀՄ Արարատյան հարթավայրի հատկապես մերձարաքսյան հովտի ամենաչարորակ մոլախոտերից մեկն է և աղբոտում է այդ գոտու բոլոր հողատեսքերը:



Եղինջազգիների (Urticaceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա, ծլարմատավոր մոլախոտ է: Բույսի կյանքի առաջին տարում առաջանում է առանցքային մայր արմատը և կարճ, անծաղիկ ցողունը: Հենց նույն տարում մայր արմատը հողի մակերեսից խորը գնտվող արմատավազիկի վերին մասից առաջանում է ցողուններ, իսկ ներքևի, աճող բողբոջներից՝ արմատային ցրուկներ, մեծ մասամբ պտղաբերող բողբոջներով: Արմատային ցրուկների բողբոջներից առաջացած բույսերը առաջին տարում առաջացնում են միայն տերևային վարդակ և հաջորդ տարիներին միայն ծաղկակիր ցողուններ: Բողբոջներն ընդունակ են առաջացնելու նոր բույսեր և նոր արմատածիլեր: Բացի հզոր կարգացած և առատ ճյուղավորվող ծլարմատներից, բույսերը յուրաքանչյուր բուսահանգույցում առաջացնում են փնջաձև արմատներ, որոնք նպաստում են սնման ինտենսիվացմանը: Յողունը ուղղականոն է, խաչաձև կտրվածքով, մինչև 1 մ բարձրությամբ: Տերևները սուր եռանկյունաձև են, սրտաձև բլթակով ու սղոցաձև եզրերով: Ամբողջ բույսը պատված է երկար, այրող գեղձամազերով: Յողունի վերին մասի յուրաքանչյուր տերևածոցից կախված են հուրանաձև ծաղկափթթությունները: Ծաղիկները մանր են, կանաչ, երկսեռ: Սերմերը ձվաձև են, երկու կողմից ուժեղ սեղմված, սուր եկրագծերով: 1000 սերմը կշռում է մոտավորապես 0,16 գ: Հիմնականում աղբային մոլախոտ է: Այրող եղինջից տարբերվում է տերևների խոշորությամբ, քիչ ճյուղավորված ցողունով և հուրաններով:


Տարածված է Եվրոպայի, Ասիայի, ՍՍՀՄ և ՀՍՀ բարեխառն գոտիներում. աղբոտում է բոլոր ցանքերն ու հողատեսքերը:

## ԵՂԻՆՋ ԵՐԿՏՈՒՆ

URTICA DIOICA L.

КРАПИВА ДВУДОМНАЯ

1. Մայր բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում, ցողունը հատված է միջին և գագաթային մասերից: Երկրորդային, ինչպես նաև ծլարմատների բողբոջներից առաջացած դուստր բույսերը (ձախ կողմում) հիմքից հատված են: 2. Ծլարմատային համակարգը: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Արական և իգական ծաղիկները՝ խոշորացրած: 5. Պտղի երկայնական կտրվածքը խոշորացրած և սերմը բնական ու խոշորացրած չափերով:







## ՋԱՆԳԱԿ ԲՈՂՎԱՆՄԱՆ

**CAMPANULA RAPUNCULOIDES L.**

**КОЛОКОЛЬЧИК РЕПЧАТОВИДНЫЙ**



1. Մայր բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում, ներքևում՝ շառավղային ծլարմատի բողբոջից առաջացած դուստր բույսերը.
2. Առանցքային (բողկանման) արմատը շառավղային արմատածիլերով.
3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում.
4. Ծաղկի երկայնական կտրվածքը.
5. Պտուղ-տուփիկը՝ խոշորացրած.
6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Ջանգակապղինների (Campanulaceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա մոլախոտ է: Բույսը վեգետատիվ ճանապարհով աճում ու բազմանում է ծլարմատավորների նման, սակայն փոքր-ինչ յուրահատուկ ձևով: Առաջին տարում բույսը առաջացնում է մի քանի սրբտաձև տերևներով արմատամերձ վարդակ, որի առանցքը հողի մեջ խորանում է 3 սմ-ի չափով և վերածվում պվելի քան 10 սանտիմետրանոց առանցքային, չճյուղավորվող արմատի: Այս վիճակում ծիլը ձևեռում և հաջորդ տարում աճը շարունակվում է: Երկարավուն, բողկանման արմատի գլխիկի վրա առաջանում են բազմաթիվ շառավղային ծիլեր, որոնց հանգույցներից առաջանում են նույնանման արմատներ և վերգետնյա օրգաններ: Հաջորդ տարիներին տերևային վարդակի կենտրոնից առաջանում են ուղղականգուն, վերձիգ, փոքր ինչ թավոտ ցողուններ, որոնց բարձրությունը հասնում է մինչև 80 սմ: Ցողունի վերին մասում, մի կողմից կախված են կանգակաձև, կապուտակ ծաղիկները:

Բույսը ծաղկում է հունիս-սեպտեմբեր ամիսներին և պտղաբերում աստիճանաբար, ծաղկումից անմիջապես հետո: Պտուղը տուփիկ է՝ մապապատ, ձվաձև, գորշ շագանակագույն երանգով: Սերմը օվալաձև է, բաց շագանակագույն, փայլուն և բժավոր: 1000 սերմը կշռում է մոտավորապես 0,12 գ, մեկ պտղակիր ցողունը կարող է տալ մինչև 3200 սերմ:

Տարածված է Եվրոպայում, Արևմտյան Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում, ՍՍՀՄ եվրոպական մասում, հարավային գոտիներում և հատկապես Կովկասում, ՀՍՍՀ նախալեռնային, լեռնային և անտառատափաստանային գոտիներում: Աղբոտում է հացբույսերի ու միամյա խոտաբույսերի ցանքերը, ցելադաշտերը:



Մատիտեղազգիների (Poloygonaceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա, ծլարմատավոր մոլախոտ է: Սերմից կամ արմատահատվածի բողբոջից զարնանը ծլած բույսը առաջին իսկ տարում տալիս է լավ ճյուղավորված արմատների համակարգ, որոնց ցրուկների բողբոջներից հենց նույն աշնանը կարող են առաջանալ նոր բույսեր: Վերգետնյա օրգանները հիմնականում առաջանում են հողի մակերեսին շատ մոտ գտնվող արմատածիլերի պտղաբերող բողբոջներից: Ավելի խորը գտնվող՝ երկրորդային ու երրորդային ծլարմատները կրում են հիմնականում աճող բողբոջներ, իսկ պտղաբերող բողբոջներն ունեն պահեստային նշանակություն և վերգետնյա օրգաններ են առաջացնում այն ժամանակ, երբ առաջնային ծլարմատները այդ հնարավորությունից զրկվում են: Արդեն երկրորդ տարվա հասուն բույսը ունենում է հարկային դասավորությամբ բարդ արմատահամակարգ և բազմաթիվ աճող ու պլուզաբերող, քնած ու պահեստային բողբոջներ: Ծաղկակիր ցողունները կարող են առաջանալ բույսի աճման առաջին տարվանից, եթե ծիլերն առաջանում են զարնանը: Աշնանը ծլած բույսը նույն տարում առաջացնում է տերևային վարդակ և միայն հաջորդ տարվանից՝ ցողուններ: Ցողունները ուղղակիանգուն են, ճյուղավորվող, մերկ: Նրանց բարձրությունը հասնում է մինչև 55 սմ: Տերևները նիպակաձև են, կոթունավոր: Ծաղկափթթությունը ցանցառ հուրան է: Սերմը եռակող, փայլուն, դարչնագույն պտուղ է:


Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Ամերիկայում, Ավստրալիայում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում, Սիբիրում, Կովկասում: ՀՍՀՄ լեռնային բարձր և անտառատափաստանային գոտիներում աղբոտում է հացահատիկային և շարահերկ բույսերի ցանքերը, արոտներն ու մարգագետինները:

## ԹՐԹՆՋՈՒԿ ՃՆՃՂՈՒԿԻ

### RUMEX ACETOSELLA L.

### ЩАВЕЛЬ ВОРОБЬИНЫЙ

1. Բույսը կյանքի առաջին տարվա աշնանը կամ հաջորդ տարիներին: Աջ և ձախ կողմերում դուստր բույսերն են ու նրանց ծիլերը. 2. Ծլարմատային բարդ համակարգը բույսի կյանքի երկրորդ և հաջորդ տարիներին. 3. Սերմից առաջած ծիլը. 4. Իգական (վերևում) և արական ծաղիկները սոնու հատվածներով. 5. Պտուղը (սերմը) բաժակաթերթերով՝ խոշորացրած և մերկ՝ բնական ու խոշորացրած չափերով:






ԹՈՒՆԱԹԱՓ ՍՈՒՐ

CYNANCHUM ACUTUM L.


ЛАСТОВЕНЬ ОСТРЫЙ



1



2



3



4



5

1. Մայր բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիների: Գլխավոր ցողունը՝ գազաթից, իսկ երկրորդայինները՝ հիմքից հատված են: 2. Առանցքային արմատըն աճման, իսկ արմատային ցուղը՝ պտղաբերող բողբոջներով: 3. Սերմից առաջացած ծիրը՝ բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղիկը՝ խոշորացրած: 5. Տերևապտուղն ու սերմը խոշորացրած չափերով:

Թունաթափազիների (Asclepiadaceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա, ծարմատավոր մոլախոտ է: Ունի հողի մեջ շատ խորը գնացող, հզոր պարզացած առանցքային արմատ, որի վրա, արմատավիկից 15—20 սմ խորությամբ, գտնվում են աճման բողբոջները: Վերջիններից առաջանում է արմատային ցուղը, որը սկզբնական շրջանում աճում է հորիզոնական ուղղությամբ և հիջեցնում է ստորգետնյա ցողուններ: Արմատավիկից դուրս են գալիս մերկ կամ վերին մասում թավոտ, թխագորշ երանգավորմամբ բազմաթիվ ցողուններ, որոնք ուղղականգուն բույսերի հարևանության դեպքում փաթաթվող են: Տերևները սրտաձև-եռանկյունաձև են, կոթունավոր, պարզ, խոշոր: Ծաղիկները հավաքված են հովանոցաձև ծաղկափթթության վրա՝ տերևածոցերում: Ծաղկապսակը սպիտակ կամ վարդագույն է, անվաճ: Ունի նշտարաձև տերևապտուղ: Մեկ բույսը նպաստավոր պայմաններում կարող է տալ մինչև 1500 սերմ: Սերմերը տարածվում են քամու միջոցով: Ցանքերում կամ մարգագետնատիպ հողատեսքերում բույսը կապմում է շրջանաձև թփուկներ, որոնց միջավայրում մշակովի բույսերը կամ դուրս են մղվում, կամ խիստ ճնշվում են: Հասունանալուց հետո ցողունները կոշտանում են և չորանում: Կենսունակ են մնում արմատները, նրանց ցուղներն ու բողբոջները՝ խանգարելով հացաբույսերի կոմբայնային բերքահավաքին: Տարածված է Եվրոպայի հարավային, Աֆրիկայի հյուսիսային մասերում, Ասիայի բարեխառն-տաք գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում, Կովկասում: ՀՍՀՍ-ում ցածրադիր ու նախալեռնային գոտիներում աղբոտում է հացահատիկային կուլտուրաների, խոտաբույսերի ցանքերն ու բազմամյա տնկարկները:



Իշակաթնուկազգիների (Euphorbaceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա մուխոտ է: Բազմաճյուղ է նաև հասուն սերմերով: Սերմից կամ արմատահատվածի բողբոջից ծլած բույսը անմիջապես առաջացնում է ճյուղավորվող առանցքային արմատ: Հենց հողի մակերեսին մոտ, գլխավոր արմատի վրա մեծ մասամբ առաջանում են աճման բողբոջներ, որոնցից տարբեր ուղղություններով դուրս են գալիս հորիզոնական ծլարմատները: Այս արմատների վրա արդեն գերակշռում են պլուդաբերող բողբոջները, որոնցից ամբողջ վեգետացիայի ընթացքում առաջանում են նոր բույսեր և նոր ծլարմատներ: Յողունները մերկ են, թխագորշ և հասնում են 100 սմ բարձրության: Տերևները գծային են, կանաչ գույնի՝ հազիվ նկատելի դեղին երանգավորմամբ: Ծաղկափթթությունը անկանոն հովանոց է, որի կենտրոնում գտնվում է իգական ծաղիկը, իսկ եզրերում՝ արական ծաղիկները: Պտուղը եռաբուն տուփիկ է: Յուրաքանչյուր բնում տեղավորված է մեկ սերմ: Սերմերը երկարացած-ձվաձև են, մանր կետային, փայլուն մակերեսով: 1000 սերմը կշռում է մոտավորապես 2,5 գ: Խիստ չորասեր է: Կարող է աճել բերրիության տարրերից ու պայմաններից պուրկ հողերում (իշակաթնուկով վարակվածությունը հողի՝ բերրիությունից պակասում նշան է): Սերմերը օժտված են բարձր ծլունակությամբ:

Տարածված է երկրագնդի բարեխառն-տաք գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Կովկասում, Միջին Ասիայում և Սիբիրի չափավոր ցուրտ շրջաններում: ՀՀ-ում գրեթե բոլոր գոտիներում աղբոտում է հացահատիկային, շարահերկ, բանջարանոցային կուլտուրաների դաշտերը, այգիները, ցեղահողմասերը, կերահանդակները:

## ԻՇԱԿԱԹՆՈՒԿ ՋՈՂԱՆՄԱՆ

**EUPHORBIA VIRGATA M. B.**

**МОЛОЧАЙ ПРУТЬБЕВИДНЫЙ**

1. Մայր բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում: Գլխավոր ցողունը հատված է միջին և գագաթային մասից, երկրորդայինները՝ հիմքից: Աջ կողմից ներքևում՝ արմատածիլերի պտղաբերող բողբոջներից առաջացած դուստր բույսերը: 2. Արմատային համակարգը առանցքային արմատով և հորիզոնական ծլարմատներով: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղիկը: 5. Պտուղը՝ խոշորացրած և սերմը բնական ու խոշորացրած չափերով:







## ԻՇԱՄԱՌՈՒՆ ԴԱՇՏԱՅԻՆ

**SONCHUS ARVENSIS L.**

**ՕՇՈՒ ՍՈՒՆՅՈՒ**



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում: Գլխավոր ու կողային ծաղկակիր ցողունները հիմքից ու գագաթից հատված են: Առաջին պլանում գլխավոր ցողունի գագաթը՝ զանբյուղ-բարդածաղիկներով: Աջ կողմում՝ ծարմատի պտղաբերող բողբոջից առաջացած ծիլը: 2. Արմատային համակարգը առանցքային արմատով և ծարմատներով: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը և զանբյուղի եզրային ծաղիկը: 5. Սերմերը բնական (թռչող հարմարանքներով) և խոշորացրած չափերով:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոլախոտ է: Դասվում է ամենաչարորակ դաշտային մոլախոտերի թվին: Առատ պտղաբերող է: Ծելու առաջին տարին բույսը սերմերով կամ ծարմատի բողբոջից առաջացնում է ոչ մեծ տերևավարդակ ու բարակ առանցքարմատ և ձմեռում արդեն ծելու պատրաստ, բայց քնած բողբոջներով: Վաղ գարնանը աճման բողբոջներից առաջանում են հորիզոնական ցրուկներ (ծղարմատներ), իսկ այդ ցրուկների վրա զրտնըվող պտղաբերող բողբոջներից՝ նոր բույսեր: Որպես կանոն հորիզոնական ծարմատի վերին մասում գտնվող պտղաբերող բողբոջից բույսի առաջանալուն չուզընթաց, նույն ծարմատի տակի մասից, բույսին ամենամոտ գտնվող աճող բողբոջից, առաջանում է ոչ թե նոր ծարմատ, այլ առանցքային արմատ, որը հիմնականում ծառայում է բույսին սնելու համար: Դաշտային իջամառույի ծարմատները դասավորված են ոչ թե հարկերով, այլ վարելաշերտի վերին մասում՝ միահարկ:

Ցողունները ուղիղ են, թեթևակի մազապատ, 60—120 սմ բարձրությամբ: Տերևները երկար են, սուր, փետրաձև կտրտված, նստադիր: Յուրաքանչյուր ցողունի առաջնային, թե երկրորդային ճյուղավորում վերջանում է բարդածաղկով: Ծաղիկները հավաքված են զանբյուղներում: Դրանք լեզվակավոր են ու դեղին: Սերմերը երկարավուն են, թռչող հարմարանքներով: 1000 սերմիկը կշռում է 0,5 գ: Մեկ բույսը կարող է տալ մինչև 6400 սերմ:

Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում, հարավային կիսագնդում: Աճում և աղբոտում է ՍՍՀՄ գրեթե բոլոր գոտիների խոնավ կամ ոռոգվող հողատեսքերը: Աղբոտում է ՀՍՍՀ հատկապես նախալեռնային ու լեռնատափաստանային գոտիների բոլոր ցանքերը:



Խլածաղկավերնների (Scrophulariaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր, ծլարմատավոր մոլմխոտ է: Ծլելու հենց առաջին տարին, առանց տերևային վարդակ կազմակերպելու, առաջացնում է վերգետնյա օրգաններ՝ առանց ծաղիկների: Սակայն այդ ժամանակ արմատային համակարգը անհամեմատ ավելի արագ է աճում՝ առանցքային արմատը հասնելով մինչև 40 սմ: Գլխավոր առանցքային արմատից հաջորդ տարին սովորաբար առաջանում է միակ ծաղկակիր ցողունը, իսկ ծլարմատների բողբոջներից՝ մի քանի տերևակիր ցողուններ, առանց գեներատիվ օրգանների: Վերջիններս ծաղկում են բույսի կյանքի երրորդ տարում միայն: Եվ այսպես, աստիճանաբար, հողի մեջ առաջացնելով հարկային, համեմատաբար նուրբ արմատներ, իսկ մակերեսին՝ մոլուտներ, անբավարար պայքարի դեպքում կտավախոտը դառնում է չարորակ մոլմխոտ, բազմացման բոլոր հնարավորություններով: Ցողունը կլոր է, ողորկ, հասնում է մինչև 50 սմ բարձրության: Տերևները փոքր են, նշտարաձև-գծային: Ծաղկափթթությունը հասկանման նոսր ողկույզ է, պսակը՝ կապտավուն: Պտուղը երկարավուն, բազմասերմ տուփիկ է, սերմերը անկանոն կլոր են, սևազանակազույն: 1000 սերմը կշռում է մոտ 0,14 գ: Մեկ բույսը տալիս է 8700 սերմ:


Տարածված է Եվրոպայում, Հյուսիսային Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում, Ավստրալիայում, ՍՍՀՄ-ում: Հայաստանում աղբոտում է միջին և բարձր լեռնային գոտիների հացաբույսերի, խոտաբույսերի դաշտերն ու ցեւահողմասերը:

## ԿՏԱՎԱՒՈՏ

### LINARIA L. MILL

### ЛЕХНИК

1. Բույսը կյանքի երրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում: Կենտրոնում՝ երկրորդ տարում առաջացած գլխավոր ցողունը, կողքերին ծլարմատի բողբոջներից առաջացած դուստր բույսերը: 2. Արմատային համակարգը առանցքային արմատներով ու ծլարմատներով: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղիկը: 5. Պտուղը (տուփիկը) և սերմը խոշորացրած չափերով:






ՊԱՏԱՏՈՒԿ ԴԱՇՏԱՅԻՆ

**CONVOLVULUS ARVENSIS L.**

**ВЬЮНОК ПОЛЕВОЙ**




1


1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում: Գլխավոր ցողունը՝ հիմքից հաստված է: Գագաթից հատված ցողուններից մեկը փաթաթված է ուրիշ բույսի ցողունին: 2. Արմատային համակարգը աճող ու պտղաբերող բողբոջներով: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Պտուղը՝ խոշորացրած և սերմը բնական ու խոշորացրած չափերով:




2



3



4



5

Պատատուկագինների (Convolvulaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիավոր մոլախոտ է: Ծիլերը դուրս գալուց հետո 20—30 օրվա ընթացքում վերգետնյա վանգվածը դանդաղ է պարզանում, իսկ արմատային համակարգը՝ արագ: Երկու ամսից հետո բույսը վեգետատիվ բազմացման ընդունակ է դառնում և արդեն կյանքի առաջին տարվա ընթացքում արմատները կարող են հասնել մինչև 1,5 մ խորության: Կյանքի երկրորդ տարում, երբ ծաղկում և պտղաբերում է, գլխավոր արմատի վրա արդեն կազմավորվում են ստորգետնյա հորիզոնական ցողուններ՝ ծլարմատներ: Կյանքի հաջորդ տարիներին, երբ գլխավոր արմատը հասնում է մինչև 2,5 մ-ի, հողի մակերեսից 25—40 սմ խորության վրա դուրս եկած ծլարմատը փոքր-ինչ վեր է բարձրանում և նորից իջնում ներքև, ծովածքի վրա, մայր բույսից ոչ հեռու առաջացնելով վերգետնյա ու ստորգետնյա նոր օրգաններ: Փաթաթվելով հացաբույսերի ցողուններին, սեղմում-ճնշում է նրանց, խախտելով նյութափոխանակության պրոցեսը: Արդյունքը լինում է այն, որ պատաստուկով վարակված հացաբույսերի հատիկները լինում են նվազ, ցողունները՝ բարակ և որի հետևանքով հացաբույսերը պառկում են: Տերևները նետապաքաճ են, ծաղիկները՝ գրամաֆոնաճև, պտուղը երկփեղկ, երկտուն տուփիկ է: Յուրաքանչյուր բնում կա մեկական կորավուն, փայլուն կամ փայլատ, կանաչավուն սերմ: 1000 սերմը կշռում է 5—6 գ:

Տարածված է երկրագնդի բոլոր աշխարհամասերում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Կովկասում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Միջին Ասիայում: ՀՍՀՄ բոլոր գոտիներում աղբոտում է հացաբույսերի և մյուս կուլտուրաների ցանքերը, ցեղահողմասերը, խաղողի այգիները:



Բակլապգինների (Fabaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մուխտոտ է: Գլխավոր առանցքային արմատը հողի մեջ խորանում է մի քանի մետր: Նրա վրա եղած աճման բողբոջներից 20-ից մինչև 50 սմ խորության վրա առաջանում են հորիզոնական ծլարմատները, որոնք թեքվում և ուղղահայաց ուղղություն են ընդունում: Սակայն, թե նոր արմատածիլերը, թե հատկապես վերգետնյա օրգանները մեծ մասամբ առաջանում են ծնկաձև ծռված տեղում կապավորված բողբոջներից (հիմնականում վերգետնյա օրգաններ առաջացնող ծլարմատները հողի մակերեսին շատ մոտ են գտնվում): Նրանց մի մասը նույնիսկ դուրս է գալիս հողի մակերես և մահանում: Թե մայր (գլխավոր արմատից առաջացած) բույսի և թե դուստր (ծլարմատներից առաջացած) բույսերի գլխավոր ցողուններն ու նրանց ճյուղավորությունները կրում են երկար, բլանման սուր փշեր: Վեգետացիայի վերջում (աշնանը) բոլոր ցողունները մահանում են, սակայն հաջորդ տարվա գարնանը արմատավիկի պտղաբերող բողբոջներից նրանք վերած են տալիս: Տերևները օվալաձև են, կարճ կոթունավոր: Ցողունի գագաթային մասում, հենց փշերի վրա, շարքով նստած են կարմիր ծաղիկները: Պտուղը համրիչաձև ունի է: Յուրաքանչյուր ունդում կա 4—5 երիկամաձև սեղմված սերմ: Սերմը մուգ դարչնագույն է, հարթ, փայլուն կամ փայլատ մակերեսով: Սերմերը շատ վատ են ծլում: Խոնավասեր, բայց խիստ չորադիմացկուն բույս է:


Տարածված է աշխարհի չոր ու տաք գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Միջին Ասիայում, Անդրկովկասում: ՀՀ-ում մինչև լեռնային գոտու չոր ու ավազային հողերը աղբոսում է գրեթե բոլոր կուլտուրաների ցանքերը, արոտային հողատեսքերը, այգիները:

ՈՒՂՏԱՓՈՒՇ ՍՈՎՈՐԱԿԱՆ

ALHAGI PSEUDOALHAGI M. B.

ВЕРБЛЮЖЬЯ КОЛЮЧКА

1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին ծաղկման փուլում: Գլխավոր՝ առանցքային արմատից առաջացած մայր\*բույսի գլխավոր ցողունը հիմքից ու գագաթից հատված է: 2. Արմատային համակարգը գլխավոր ու կողային արմատներով, աճման ու պտղաբերող բողբոջներով: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղիկը: 5. Պտուղը (ունդը) և սերմը խոշորացրած չափերով:





ՔԱՂՑՐԱՐՄԱՏ

**GLYCYRRHISA GLABRA L.**

СОЛОДКА ГОЛАЯ



1. Մայր բույսը կյանքի երկրորդ տարում՝ ծաղկման փուլում: Գլխավոր ցողունը հատված է հիմքից ու գազաթից, իսկ կողային ճյուղավորումները՝ հիմքից: Չախ կողմում պտղաբերող բողբոջից առաջացած դուստր բույսի ծիրը: 2. Արմատահամակարգը կենտրոնական արմատով և նրանից առաջացած կոճղարմատակերպ ծլարմատներով: 3. Սերմից առաջացած ծիր բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղիկը: 5. Պտուղը՝ բնական և սերմը բնական ու խոշորացրած չափերով:

Բակլազգիների (Fabaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոխախոտ է: Ունի հյոր պարզացած արմատահամակարգ: Չնայած ծլարմատը կազմող արմատահատվածները կոճղեր են, սակայն նրանք այնքան ամուր են ձուլված միմյանց, որ թե ձևով և թե պայքարի եղանակներով միանգամայն կարող են դասվել ծլարմատավորների շարքին: Արմատավիկի մոտ անկանոն հաստացած կենտրոնական արմատի աճող բողբոջներից, հողի մակերեսից հաշված 15-ից մինչև 60 սմ խորությունից, առաջանում են հորիզոնական ստորգետնյա ցողուններ: Այդպիսի խորությամբ տարածվող արմատացանցի դեմ պայքարը առավել դժվար է: Բայց քանի որ վերգետնյա օրգաններ առաջանում են հողի մակերեսին ավելի մոտ գտնվող ստորգետնյա ցողուններից, իսկ ավելի խորքայինները կատարում են պահեստայինի դեր, ուստի վարելաչափերի հաճախակի մշակմամբ, բույսերի ու վարելաչափերի վերին մասում դասակարգված արմատների հաճախակի ոչնչացմամբ կարելի է ամբողջ բուսուտը (մոլուտը) հյուծել: Յուրաքանչյուր անգամ արմատը կամ նրա հատվածը կտրելուց 14—20 օր հետո առաջանում են նոր ցողուններ: Ցողունները ուղիղ են, խիստ ճյուղավորվող, թավոտ (հասնում են 100—150 սմ բարձրության): Տերևները ձվածիր են. թիթեղը՝ տակի կողմից կպչուն: Ծաղկափթթությունը ողկույզ է, ծաղկապսակը՝ երկնագույն-մանուշակագույն: Պտուղը դեղնադարչնագույն, կոպիտ ունդ է, սերմերը անկանոն-գնդաձև են, կանաչավուն: Տարածված է երկրագնդի բարեխանոն-տաք գոտիներում, ՍՍՀՄ եվրոպական ու ասիական մասում, Միջին Ասիայում, Կովկասում: ՀՍՀՄ Արարատյան հարթավայրում և նախալեռնային գոտու ջրովի ու խոնավ հողատեսքերում աղբոսում է բոլոր դաշտային կուլտուրաների ցանքերը, այգիները:



**Կոճղարմատավորներ:** Բազմամյա մոլախոտերի այս կենսախմբի ներկայացուցիչները պլոտ-դաբերելուց հետո չեն մահանում: Կյանքի հաջորդ տարիներին ստորգետնյա ցողունների՝ կոճղարմատների, միջոցով շարունակում են բազմանալ:


Դաշտավուկազգիների (Poaceae) ընտանիքի բազմամյա, միաշաքիլավոր, կոճղարմատավոր մոլախոտ է: Սերմի ծելուց հետո, երբ առաջանում են տերևածիլերն ու ընտանիքին հատուկ փնջաձև արմատները, որոշ ժամանակ անց թփակալման փուլում սկիզբ է դրվում նաև ստորգետնյա ցողունին՝ կոճղարմատին: Նրա վրա առաջանում են աճող և պտղաբերող բողբոջներ: Նրանց հիմնական բուն աճը տեղի է ունենում ամառվա կեսին: Հողի մակերեսին մոտ գտնվող կոճղարմատների բողբոջներից մի կողմից առաջանում են վերգետնյա օրգաններ, մյուս կողմից՝ նոր, երկրորդային կոճղարմատներ: Առաջնային կոճղարմատներն այնքան մոտ են գտնվում հողի մակերեսին, որ երբեմն դուրս են գալիս գետնի երես, անցնում որոշ տարածություն և նորից մըտնում հողի մեջ: Երկրորդային կոճղարմատներից առաջանում են երրորդային՝ պահեստային կոճղարմատներ: Բույսերը կրում են ժանգ հիվանդության սպորները: Կոճղարմատների թափանցման խորությունը մինչև 60 սմ է, ցողունի բարձրությունը ոռոգվող հողերում՝ մինչև 80 սմ: Ցողունը կիսականգուն է, հիմքից ճյուղավորվող, տերևները՝ նշտարաձև: Ծաղկաբույլը բաղկացած է 3—8 մատնաձև, հասկային ճյուղավորումներից: Տարածված է երկրագնդի բոլոր և ՍՍՀՄ տաք գոտիներում՝ Ղրիմում, Հարավային Ուկրաինայում, Կովկասում, Միջին Ասիայում: ՀՍՀՄ-ում ցածրադիր ու նախալեռնային գոտիներում աղբոտում է բոլոր հողատեսքերը և հատկապես խաղողի այգիները:

## ԱՐՎԱՆՏԱԿ

**CYNODON DACTYLON L.**

**СВИНОРОЙ**

1. Սերմի ծյուրից առաջացած մայր բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ հասկակալման-ծաղկման շրջանում: 2. Կոճղարմատային համակարգը աճող ու պտղաբերող բողբոջներով: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղկաբույլի հասկի մի հատվածը: 5. Սերմը հասկիկային թեփուկներով՝ խոշորացրած: 6. Սերմը բնական և խոշորացրած չափերով:





## ԵՂԵԳՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ

**PHRAGMITES COMMUNIS L.**

**ТРОСТНИК ОБЫКНОВЕННЫЙ**



1. Մայր բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ հուրանակալման փուլում: Յողունները հիմքից և զագաթից հատված են: Չախ կողմում կոճղարմատի պտղաբերող բողբոջից առաջացած ծիլն ու դուստր բույսը: 2. Կոճղարմատային համակարգը: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղիկները հուրանի մի հատվածում: 5. Ներքին ծաղկիկային թեփուկն ու նրա երկու կողմում սերմը բնական ու խոշորացրած չափերով:

Դաշտավունկազգիների (Poaceae) ընտանիքի բազմամյա, միաշաքիլավոր, չարորակ մուլխոտ է: Սակայն նրա չարորակ բնույթը առավել ևս դրսևորվեց այն ժամանակ, երբ ճահիճներից ու գետափնյա գերխոնավ հողատեղքերից կամաց-կամաց տեղափոխվեց ճահճացման հակված ու նրանց հարող խոնավ հողատեսքերը, դառնալով սովորական դաշտային մուլխոտ: Հիմնական կոճղարմատացանցը հողի մեջ խորանում է մինչև 60 սմ, եթե այդ խորությունն ապահովված է դաշտային լրիվ խոնավությամբ: Այդ խորության մեջ կոճղարմատների ուղղությունը, մինչև 2—3 մետր երկարությամբ, հորիզոնական է, որից հետո նրանք ընդունում են վերձիգ ուղղություն, ամբողջ այդ հատվածում միաժամանակ առաջացնելով նորանոր կոճղարմատներ, փնջաձև, սնման արմատներ և վերգետնյա օրգաններ: Ինչպես սերմերից, այնպես էլ կոճղարմատների բողբոջներից առաջանում են հսկայական, մինչև երեք և ավելի մետր բարձրության հասնող սնամեջ ու հանգուցավոր ցողուններ, սուր ու նշտարաձև տերևներով: Յողունի զագաթին պարգանում է խիտ, հուրանաձև, մինչև 40 սմ երկարությամբ ծաղկափթթությունը, որը կարող է կրել մինչև 1000—2000 ծաղիկ: Նորմալ պայմաններում մի բույսը կարող է տալ մինչև 50.000 սերմ: Սերմերը ամբողջությամբ մապալատ են և կարող են տարածվել ինչպես քամու, այնպես էլ ջրի միջոցով: Քանի որ այս մուլխոտը ոչ հողերի և ոչ էլ ջերմության նկատմամբ պահանջկոտ չէ, ուստի տարածված է աշխարհում գրեթե ամենուր: ՀՍՍՀ և ցածրադիր, և բարձրադիր գոտիներում աղբոտում է բանջարաբոստանային ու մյուս շարահերկ բույսերի, այժմ արդեն՝ հացաբույսերի ցանքերը, այգիները:



Կերոնազգիների (Jyphaceae) ընտանիքի բազմամյա, միաշաքիլավոր, կոճղարմատավոր մոլախոտ է: Գրականության մեջ հանդիպում է նաև կեռոն, ջրեղեգ, որձախոտ անվամբ: Ծիլուց հետո, կյանքի առաջին տարում, հիմնականում առաջացնում է տերևներ և թփակավում, երկրորդ տարում՝ նոր միայն կոճղարմատներ: Ծաղկակիր ցողուններ առաջացնում է կյանքի երրորդ տարվանից սկսած: Կերոնի կոճղարմատները տեղավորված են 5—12 սմ խորության մեջ: Կոճղարմատների բողբոջներից, նոր բույսի առաջացմանը զուգընթաց, առաջանում են փնջաձև արմատներ, որոնք օգտագործում են հողի առավել խորը շերտերում եղած սննդանյութերն ու ջուրը: Հիմնական առաջնային կոճղարմատներից դուրս եկած համեմատաբար նուրբ կոճղարմատների մի մասը ընդունում է աճման վերընթաց, մուսները՝ վարընթաց ուղղություն: Ունի 2—3 մ բարձրությամբ սնամեջ ու հաստ, ընդգծված միջհանգույցներով ողորկ ցողուն, նեղ, նըջտարածև, զուգահեռաչիղ, կոշտ տերևներ: Գլխավոր ցողունի ծայրին նստած է գլանաձև, մուգ շագանակագույն ծաղկափթթությունը՝ սև, թավջե երանգով: Ծաղկափթթության վերին մասում գտնվում են արական, ներքին մասում՝ իգական ծաղիկները: Սերմերը մանր են, կրում են թռչող հարմարանքներ՝ վրձնիկներ, և տարածվում են ինչպես քամու, այնպես էլ հոսող ջրի միջոցով և ծլում են հողի մակերեսից:


Աճում է ճահճակալած հողերում, ահպանգելով հողերի ճահճակալման պայմանների ի հայտ գալը: Տարածված է աշխարհի, գրեթե բոլոր գոտիներում, բացի ծայր հյուսիսից ու բարձր լեռնային գոտիներից: ՍՍՀՄ-ում առավել շատ տարածված է Միջին Ասիայի, Հյուսիսային Կովկասի ու Անդրկովկասի ոռոգովի շրջաններում: ՀՍՀՄ Արարատյան դաշտում ճահճակալվող հողերի մոլախոտ է:

ԿԵՐՈՆ ՆԵՂԱՏԵՐԵՎ

TYPHA ANGUSTIFOLIA L.

РОГОЗ УЗКОЛИСТНЫЙ

1. Բույսը կյանքի երրորդ կամ հաջորդ տարիներին: Ցողունը հիմքից և գագաթից հատված է: Աջ կողմում կերոնաձև ծաղկափթթությունը: 2. Արմատային համակարգը: Կոճղարմատները բույսի կյանքի երկրորդ և հաջորդ տարիներին: 3. Ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Իգական ծաղիկը: 5. Պտղիկը՝ շրջապատված առագաստի մափկներով:







ՀԱՋԱՐԱՏԵՐԵՎՈՒԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

**ACHILLEA MILLEFOLIUM L.**

**ТЫСЯЧЕЛИСТНИК ОБЫКНОВЕННЫЙ**



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին ծաղկման փուլում: Գլխավոր ցողունը՝ միջին և գագաթի, երկրորդայինները՝ հիմքի մասից հատված են.  
2. Արմատային համակարգը բույսի կյանքի հասուն շրջանում.  
3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում.  
4. Ծաղիկը՝ խոշորացրած.  
5. Սերմը բնական ու խոշորացրած (մեջքից և կողքից) չափերով:



Աստղածաղկազգիների (Asteraceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր, կոճղարմատավոր մոխիտու է: Վեգետատիվ բազմացման բնույթով կոճղարմատավոր-ծլարմատավոր է: Բայց արմատահատվածները միմյանց միացած են փուխը կերպով, և պայթարի բնույթը ավելի մոտ է կոճղարմատավորների կենսախմբին: Առատ պտղաբերում է. սերմերը լավ են ծլում հատկապես ձմեռելուց հետո: Ծլելու առաջին տարում կազմավորվում են արմատամերձ տերևային վարդակը, հպոր, փնջաձև արմատահամակարգը և արմատային ցրուկը՝ աճող ու պտղաբերող բողբոջներով: Մինչև ծաղկալիր ցողունների առաջացումը (նրանք առաջանում են բույսի կյանքի երկրորդ կամ երրորդ տարում) արդեն լավ զարգացած արմատային ցրուկը, մեծ քանակությամբ կոճղարմատահատվածներով, տարածվում է մշակովի բույսերի արմատների բնակչերտում: Այդ պատճառով էլ հազարատերևուկից պետք է ազատվել մինչև կուլտուրական բույսերի ցանքը: Ծաղկակիր ցողունների առաջացմամբ սկսվում է բույսի բուռն ու համակողմանի զարգացման էտապը:  
Ցողունը ուղիղ է, 30—70 սմ բարձրությամբ և ճյուղավորվում է հիմնականում վերնամասում: Տերևը գծային-նշտարաձև է, կրկնակի կամ եռակի փետրաձև կտրված, մանր: Բույսը չունի ինտենսիվ կանաչ գույն: Ծաղկաբույլը բազմաթիվ զամբյուղներով, սպիտակից վարդագույն բարդածաղիկ է: Արտաքին ծաղիկները լեզվակավոր են և իզական, կենտրոնական ծաղիկները՝ երկսեռ: Սերմիկները մանր են, բազմաձև:

Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Սիբիրում, Միջին Ասիայում, Կովկասում: ՀՍՀՍ-ում ցածրադիր գոտուց մինչև մերձալպյան գոտին աղբոսում է հացաբույսերի ցանքերն ու այգիները:



Չիաձետազգիների (Equisetaceae) ընտանիքի սպորավոր, բազմամյա, կոճղարմատավոր մոլախոտ է: Աճում է խոնավ և գերխոնավ հողատեսքերում: Թխագորշ գույնի կոճղարմատները հողում սողում են հորիզոնական ուղղությամբ: Հորիզոնական կոճղարմատների բողբոջներից առաջանում են և դեպի վեր, և դեպի ներքև ձգվող կոճղարմատներ: Առաջինները վերածվում են վերգետնյա ցողունների, երկրորդներից առաջանում են երկրորդային, ապա պահեստային կոճղարմատներ: Մլեղու տարվա աշնանը հողում առաջանում են սպորակիր ցողունները, որոնք ձմեռելուց հետո վաղ գարնանը դուրս են գալիս հողի մակերես, և մինչև մայիս սպորները արդեն հատունանում են: Հասունանալուց ու սպորաթափվելուց հետո ցողունը մեռնում է, իր տեղը զբաղեցնում անսպորակիր ցողուններին: Վերգետնյա ամբողջ վանգվածը մահանում է աշնանը: Ցողունները սլացիկ են, հանգուցավոր, որոնցից սիմետրիկ կերպով դուրս են գալիս ցողունային ճյուղավորումները: Սպորակիր ցողունը հասնում է մինչև 30 սմ բարձրության: Սպորակիր «ծաղկափթույունը» նոնակաձև հասկ է: Հասունանալիս սպորակիր տուփիկները բացվում են, և պարուրաձև, քառաթել սպորները թափվում են:

Շատ դժվար ոչնչացվող մոլախոտ է, որովհետև օժտված է հատկապես վեգետատիվ բազմացման բոլոր հնարավորություններով: Նրա կոճղարմատները 50 սմ խորությունից կարող են ծել ու բույսեր առաջացնել: Կոճղարմատ-հանգուցներում առաջացնում է պալարիկներ, որոնցում եղած սննդանյութերը օգտագործվում են սպորակիր ցողունների կողմից:

Տարածված է ինչպես աշխարհի, այնպես էլ ՍՍՀՄ և ՀՍՍՀ բոլոր գոտիների խոնավ ու գերխոնավ հողերում:

## ՉԻԱՁԵՏ ԴԱՇՏԱՅԻՆ

### EQUISETUM ARVENSE L.

#### ХВОЩ ПОЛЕВОЙ

1. Բույսի անսպորակիր ընձյուղը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին: Աջ կողմում սպորակիր (սպորաբերող) ընձյուղը, որն առաջացել է բույսի կյանքի երկրորդ տարում կոճղարմատի բողբոջից: 2. Արմատային համակարգը ուղղահայաց, հորիզոնական կոճղարմատներով, սնող մագարմատներով ու բողբոջներից առաջացած ծիլերով: 3. Սպորից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Սպորակիր հասկը: 5. Սպորակիր տուփիկը թափվող սպորներով: 6. Սպորները փաթաթված (վերնում) և բացված զարններով:








## ՄՈՒՍՈՐԳՈ

**SORGHUM HALEPENSE L.**

**ԳՄԱՄ**



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ հուրանակալման փուլում: Գլխավոր ցողունը հատված է հիմքից և գազաթից: Աջ կողմում՝ հուրանը: 2. Արմատային համակարգը կոճղարմատներով, բողբոջներով և սնող մազարմատներով: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Հուրանի մի հատվածը (հասկիկը): 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:



Դաշտավուկազգիների (Poaceae) ընտանիքի միաշաքիլ, կոճղարմատավոր մոլախոտ է: Սերմի ծլումից 22—25 օր հետո սկզբնավորվում է նրա առաջին կոճղարմատը, որով և դրվում է վեգետատիվ բազմացման հիմքը: Կոճղարմատի ծայրին, աճող բողբոջից առաջանում է նոր կոճղարմատ, պտղաբերող բողբոջից՝ վերգետնյա օրգաններ: Հողի մակերեսից մինչև 15 սմ խորության վրա, մեծ մասամբ հորիզոնական դիրքով դասավորվում են առաջնային կոճղարմատները, նրանցից մինչև 85 սմ խորության վրա առաջանում են երկրորդային կոճղարմատները: Նպաստավոր պայմաններում այս կոճղարմատները երկրորդային՝ պահեստային կոճղարմատներ առաջացնելու հակում են ցուցաբերում և մինչև 85 սմ խորության վրա առաջացնում են սննդանյութերի մեծ պաշարով պահեստային կոճղարմատների հզոր ցանց, որոնցից հետագայում կարող են նոր բույսեր առաջանալ: Այդ պատճառով էլ նրա դեմ տարվող ագրոտեխնիկական պայքարը մինչև վերջ չհասցնելու դեպքում նպաստավոր պայմաններ կատեղծվեն նրանց առավել բուռն աճի համար: Համեմատաբար երկար ժամանակ հողի մակերեսին մնալուց հետո կոճղարմատները կարող են աճել:

Ունի ուղղաձիգ, մինչև 2 մ և ավելի բարձրությամբ մերկ ու հաստ, հանգուցավոր ցողուններ, գծանշտարաձև տերևներ: Ծաղկափթթությունը մինչև 40 սմ հասնող հուրան է: Յուրաքանչյուր հուրան կարող է տալ 500—800 մուգ շագանակագույն, փայլուն հատիկներ, որոնք կարող են ծլարձակել հողի մինչև 10—12 սմ խորությունից:

Տարածված է աշխարհի տաք գոտիներում, Ղրիմում, Միջին Ասիայում ու Կովկասում: ՀՍՍՀ ցածրադիր ու նախալեռնային գոտու ցածրադիր ենթագոտում աղբոտում է բոլոր ջրովի հողատեսքերը:



Հովվափողպզիների (Alismataceae) ընտանիքի բազմամյա, երկշաքի, կոճղարմատավոր մոլախոտ է: Ջրային բույս է, աճում է հիմնականում ճահիճներում ու բրնձի դաշտերում: Սակայն աճում է նաև խոնավ, գերխոնավ և ճահճացման ենթակա հողերում: Կարճ ու բավականին հաստ կոճղարմատ ունի: Մինչև ամառվա վերջը այն աճում, սննդանյութեր է կուտակում: Այնուհետև մինչև ձմեռուը առաջացնում է սողացող, երկար, ստորգետնյա ընձյուղներ: Նրանք իրենց ծայրերին կրում են պալարանման գոյացումներ՝ բողբոջներ, որոնցից թե ստորգետնյա և թե վերգետնյա օրգաններն են առաջանում:

Ցողունները անտերև են, մինչև 100 սմ բարձրությամբ: Ցողունահանգույցներն իրենց վրա կրում են տերևաթեփուկներ, որոնցից դուրս են գալիս ծաղկափթույթունները: Ունի սետաձև, կոթունավոր տերևներ:

Ծաղկակիր ցողունի վերին մասում տեղավորված են արական, իսկ ներքևի մասում՝ իգական ծաղիկները: Նրանք հիմնականում սպիտակ են: Պտուղը լայն-եռանկյունաձև, թևավոր սերմիկ է:

Բույսը շատ խոնավասեր է: Կապակերպելով և վերգետնյա, և ստորգետնյա բավականին հզոր պանգված, այն ոչ միայն ուժեղ ճնշում է մշակովի բույսերին, այլև թեկուզ բավարար խոնավության դեպքում խիստ չորացնում է հողը:


Տարածված է արևադարձային, խոնավ գոտիներում, Հարավային Ուկրաինայում, Հեռավոր Արևելքում, Անդրկովկասում, Միջին Ասիայում, Անդրբայկալում: <ՄՍՀ-ում հիմնականում տարածված է Արարատյան հարթավայրում, ուր աղբոտում է խոնավացած ու ճահճացող հողատեսքերը, խաղողի այգիները: Սակայն այն այժմ տարածվում է նաև նախալեռնային ու միջին լեռնային գոտիներում:

## ՆԵՏԱԲՈՒՅՍ ԵՌԱՏԵՐԵՎ

### SAGITTARIA TRIFOLIA L.

### СТРЕЛОЛИСТ ТРЕХЛОПАСТНЫЙ

1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին: Անտերև ծաղկակիր ցողունի վերին մասում արական, ներքևի մասում իգական ծաղիկները: 2. Կոճղարմատային համակարգը պալար-բողբոջներով: 3. Ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղկի (արական) կտրվածքը: 5. Պտղիկը բնական և խոշորացրած չափերով:





## ՍԵՋ ՍՈՂԱՅՈՂ

**AGROPYRUM REPENS L.**

**ПЫРЕЙ ПОЛЗУЧИЙ**



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ հասկակաման-ծաղկման շրջանում: Գլխավոր ցողունը հիմքից ու զագաթից հատված է: Աջ կողմում ծաղկած հասկը, ձախտում՝ կոճղարմատից առաջացած դուստր բույսը: 2. Կոճղարմատային համակարգը: 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում: 4. Հասկիկը ծաղիկներով: 5. Հատիկը հասկիկային թեփուկներով, բնական ու խոշորացրած չափերով:

Դաշտավուկազգիների (Poaceae) ընտանիքի միաշաքիլ, կոճղարմատավոր մուլխոտ է: Հիմնականում վեգետատիվ բազմացող բույս է: Սակայն թափված ծլունակ սերմերի փոքր մասը կարող է ծլել: Ծլելու առաջին տարին արդեն բույսը կազմավորում է մեծ քանակությամբ ստորգետնյա ընձյուղներ՝ ձևափոխված ցողուններ: Նույն տարում նրանց վրա եղած բողբոջներից կամ կոճղարմատի ծայրից առաջանում են մեծ քանակությամբ վերգետնյա օրգաններ: Սակայն դրանցից պլուզակիր (հասկակիր) ցողուններ առաջանում են կոճղարմատների ու բողբոջների ձևեռելուց հետո միայն: Բույսի կոճղարմատային հիմնական զանգվածը կազմակերպվում է հողի վարելաչերտում, 6—8 սմ խորության մեջ: Կոճղարմատների տեղադրման խորությունը կախված է հողի տիպից: Թեթև հողերում և թույլ բուսածածկի դեպքում նրանք ավելի խորն են թափանցում, ծանր հողերում և ուժեղ, խիտ բուսածածկի տակ՝ ավելի սաղր: Առավել կենսունակ ու երիտասարդ կոճղարմատները դասավորվում են հողի մակերեսին ավելի մոտ, իսկ ավելի ծերերը՝ խորքում: Ծանր հողերում, արդեն սահմանային ճնակալումից հետո, նրանք այլևս ի վիճակի չեն նոր երիտասարդ կոճղարմատներ առաջացնել:

Ցողունները ուղղականգուն են, հանգուցավոր: Նրանց բարձրությունը կարող է տատանվել 50—120 սմ: Տերևները գծային են, ծաղկափթթությունը՝ հասկ: Չիզգազաձև սոնու վրա հերթադիր ու կոմպակտ ձևով դասավորված են հասկիկները: Հատիկները մանր են, ձրգված:

Տարածված է աշխարհի, ՍՍՀՄ և ՀՍՍՀ բոլոր գոտիներում: Սակայն ՀՍՍՀ-ում առավել տարածված է բարձրադիր գոտիներում և դեպի ցածրադիր գոտիները այն իր տեղը պիջում է արվանտակին:



**Պալարավորներ:** Այս կենսախմբի մոլախոտերն իրենց արմատների կամ ստորգետնյա ցողունների վրա առաջացնում են պալարային գոյացումներ, որոնք ձմեռումից հետո նոր բույսեր են առաջացնում:

Նուլեղինջապզիների (Lamiaceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա մոլախոտ է: Գարնանը ծլած սերմից նույն տարվա ընթացքում առաջանում է թույլ վարգացած փնջաձև արմատ և կարճ ցողուն, որը չի հասցնում ծաղկել: Ձմեռումից հետո սերմերի և ծունկությունը, և թե ծլման էներգիան մեծանում է: Փնջարմատների ծայրին առաջանում են պալարներ, որոնք իրար են միացած թույլ հանգույցներով և իրենց վրա կրում են բողբոջներ: Աջնանը ստորոնանման արմատները մահանում են: Պալարների վերին կողմի բողբոջներից առաջանում են վերգետնյա օրգաններ, ստորին կողմի բողբոջներից՝ նոր, հանգուցավոր պալարներ: Պալարները կատարում են բույսի բազմացման օրգանի, իսկ փնջաձև արմատները՝ պալարները սնողի դեր: Յողունը հասնում է մինչև 60 սմ բարձրության, ուղղակիանգուն է, քառանիստ և հանգույցներում կրում է հակադիր ու իրար նրկատմամբ թեք դասավորված նշտարաձև տերևներ: Դրանք սուր են, ատամնաեզր, նըստադիր: Ծաղկափթթությունը օղակաձև հասկ է, ծաղկապսակը (շրթնածաղիկը)՝ կարմրավուն: Պտուղը բաժանվում է չորս միասերմ ոչ սև ընկուզիկների:


Աճում է Եվրոպայի, Հյուսիսային Ասիայի ու Հյուսիսային Ամերիկայի համեմատաբար խոնավ գոտիներում: ՍՍՀՄ-ում ամենաշատ տարածված է Ղրիմում, Միջին Ասիայում, Արևելյան Սիբիրում, Անդրկովկասում: ՀՍՀՄ լեռնատափաստանային ու անտառատափաստանային գոտիներում աղբոտում է արոտավայրերը, գարնանացան ու աշնանացան հացաբույսերի, խոտաբույսերի ցանքերն ու ցելադաշտերը:

## ԱՐԵՂԱԽՈՏ ՃԱՀԱՃԱՅԻՆ

### STACHYS PALUSTRIS L.

#### ЧИСТЕЦ БОЛОТНЫЙ

1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում: Գլխավոր ցողունը միջին և գազաթային մասերից հատված է. 2. Արմատային համակարգը պալարիկներով, ստորոններով ու մալարմատներով. 3. Ծիլը բույսի կյանքի առաջին տարվա գարնանը. 4. Ծաղիկը. 5. Բաժակի կտրվածքը՝ խոշորացրած և սերմը բնական ու խոշորացրած չափերով:






ԱՆԱՆՈՒԽ ԵՐԿԱՐԱՏԵՐԵՎ

MENTHA LONGIFOLIA L.

МЯТА ДЛИНОЛИСТНАЯ




1

1. Բույսը կյանքի երկրորդ կամ առջորդ տարիներին՝ ծաղկման փուլում. կողային ճյուղավորումները հիմքից հատված են. 2. Արմատային համակարգը, առանցքային արմատը, ստորգետնյա ընձյուղները՝ պալարանման գոյացումներով և մազարմատները. 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի առաջին տարում. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտույի ընդլայնական կրտորվածքը (խոշորացրած) և սերմը բնական ու խոշորացրած չափերով:



2



3



4



5

Խուլեղինջազգիների (Lamiaceae) ընտանիքի երկշաքիլավոր, բազմամյա մոխսոտ է: Սերմից կամ պալարաբողբոջից ծլած բույսը առաջացնում է կարճ, ոչ ծաղկակիր ցողուն, և նրա հիմքից, միջնամասից ու գագաթից՝ ցողունային ճյուղավորումներ: Նրանք առաջին տարվա աշնանը կապնում են վարդականման խմբավորում, ճյուղավորված առանցքային արմատ և արմատավիկից՝ ստորգետնյա ընձյուղներ: Այդ ընձյուղների ծայրերը շարունակվում են պալարանման հատվածավոր գոյացումների՝ պալարների ձևով և բույսը այդ վիճակում ձմեռում է: Հաջորդ տարվա գարնանից շարունակվում են արմատապալարային ճյուղավորումները և նպաստավոր պայմաններում հողի վարելաչերտը գրեթե ամբողջությամբ զբաղեցվում է պալարային ճյուղավորումների ու նրանց հանգույցում փնջարմատների խիտ ցանցով: Պալարագոյացմանը զուգընթաց շարունակվում է ծաղկակիր ցողունի ու դուստր բույսերի առաջացումը: Ծաղկակիր ցողունը հասնում է մինչև 40 սմ բարձրության: Այն քառանիստ է, ծայրեծայր պատված հակադիր դասավորված, ձվաձև, մազապատ տերևներով: Բույսի վերին մասի յուրաքանչյուր տերևածոցում օղակաձև նըստած են հասկանման ծաղկափթթությունները՝ վարդակապտավուն ծաղկապսակներով: Պղտուղը քառասերմ (սերմը ընկուզիկ է), բաժականման տուփիկ է: Հասունանալիս սերմերը հեշտությամբ թափվում են և աղբոտում թե հողը, թե սերմնանյութը: Բույսը խոնավասեր է: Այդ պատճառով էլ աղբոտում է բնական խոնավ հողատեսքերը:

Տարածված է հյուսիսային Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, Ասիայի հյուսիսում: Աղբոտում է մեր հանրապետության նախալեռնային, միջին ու բարձր լեռնային գոտիների բոլոր խոնավ ու ջրովի հողատեսքերը:



Բոշխապզիների (Cyperaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոխրոտ է: Նոր ծրոց բույսի ստորգետնյա ցողունն աճի սկզբնական շրջանում ուղղահայաց ուղղություն ունի: Հասնելով մինչև 15—20 սմ խորության, ստորգետնյա ցողունի միջհանգույցները կարճանում են և աճի խթանիչների ազդեցության տակ ցողունը ծռվում է, ընդունելով վերընթաց ուղղություն: Այդ ծռվածքի հանգույցները հաստանալով, վեր են ածվում կտր, երկարավուն պալարների, որոնք իրենց վրա կրում են հաստ մազարմատներ: Դրանք ծառայում են պալարն ըս բույսը սնելու համար: Կապմավորվելուց հետո պալարը մինչև ձմեռունը մեծ քանակությամբ սննդանյութեր է կուտակում և հաջորդ տարվա վաղ գարնանը առաջացնում է ստորգետնյա և վերգետնյա նոր ցողուններ: Ստորգետնյա ցողուններն աճում են հորիզոնական, թեք կամ ուղղահայաց ուղղությամբ: Մեր պայմաններում ցողուններն հասնում են մինչև 40 սմ բարձրության: Դրանք եռակող են, ողորկ: Տերևները գծային են, հարթ ու գորշ: Ծաղկափթթույունը հուրան է և կապմում է հասկափնջերի մի ամբողջ խմբավորում: Սերմերը մանր են և մեծ մասամբ աղբոտում են առվույտի սերմնանյութը: Բույսը ծաղկակիր ցողուն առաջացնում է ծելու տարին: Մոխրոտը խոնավասեր է և ջրի նկատմամբ այնքան պզայուն, որ իր ցողուններն արձակում և մոլուտներ է կապմում դաշտի միկրոռելիեֆի ցածրադիր տարածություններում, ուր երկար ժամանակով ջուր է հավաքվում:



Տարածված է աշխարհի և ՍՍՀՄ տաք գոտիներում: ՀՍՀՄ ցածրադիր ու նախալեռնային գոտու ցածրադիր ենթագոտում աղբոտում է նաև ոռոգվող ու վատ ոռոգման հետևանքով գերխոնավացած ու ճահճացող հողատեսքերը:

## ԴՈՒՆ ԿԼՈՐ

### CYPERUS ROTUNDUS L.

#### СЫТЬ КРУГЛАЯ

1. Բույսը կյանքի առաջին տարվա վերջին կամ հաջորդ տարիներին՝ հուրանակալման փուլում: Աջ կողմում ստորգետնյա ցողունից առաջացած ծիլը՝ դուստր բույսի սկիզբը: 2. Արմատային համակարգը ստորգետնյա ցողուններով, պալարներով ու մազարմատներով: 3. Պալարակիր ընձյուղից առաջացած ծիլը: 4. Հասկիկը խոշորացրած: 5. Պտուղը (սերմը) բնական ու խոշորացրած չափերով:





ԽՈՐՂԵՆԻ ԳԾԱՏԵՐԵՎԱՄԱՍՆԻԿԱՅԻՆ

**GERANIUM LINEARILOBUM D.C.**

**ГЕРАНЬ ЛИНЕЙНОДОЛЬЧАТАЯ**



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման-պտղակալման շրջանում: Կողային ճյուղավորումները հիմքից հատված են: 2. Հասուն բույսի արմատային համակարգը՝ պալարներով ու մազարմատներով: 3. Պալարիկից առաջացած ծիլը բույսի կյանքի հաջորդ տարիներին: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Սերմերը բնական և խոշորացրած չափերով:

Խորդենազգիների (Geraniaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոլախոտ է: Մշակովի տեսակները խիստ արժեքավոր եթերալուղատու և դեկորատիվ բույսեր են, վայրի տեսակները՝ չարորակ մոլախոտեր: Կյանքի հենց առաջին տարում, գետնածիլի հետ միասին առաջացնում է նաև պալար: Այն գուրպանման է, կոպիտ, բողբոջային երուններով, մաշկը՝ մուգ շագանակագույն, միսը՝ սպիտակ, թույլ վարդագույն երանգով, թրթվաշ: Սկզբում բույսն առաջացնում է տերևային վարդակ և կյանքի երկրորդ ու հաջորդ տարիներին՝ արմատածիլեր, ծաղկակիր ցողուն: Այդ ցողունը հասնում է մինչև 20 սմ բարձրության, ուղիղ է և վերին մասում ճյուղավորվող: Ցողունի ստորին հանգույցներում առաջանում են գրեթե կլոր, վերին հանգույցներում՝ մատնաձև բաժանված գծային տերևներ: Այդ հանգույցներից դուրս եկած երկրորդային ճյուղավորումների կամ ուղղակի ծաղկակոթունի վրա նստած է ողկույզանման ծաղկախումբը՝ բաց մանուշակագույն, վարդագույն և մուգ ջղերով երանգավորված ծաղկապսակներով: Ծաղկում է հուլիս-օգոստոսին և նույն հերթականությամբ էլ պտղաբերում, առաջացնելով փոքր-ինչ մազապատ պտուղ և խորդուբորդ սերմեր: Սերմերով բազմացումը բույսի կյանքում նույնպես կարևոր դեր է խաղում: Այդ դեպքում, հատկապես նոսր ցանքերում, առաջանում է խորդենու խիտ բուսածածկ: Այդ ամենահարմար պահը բաց թողնելուց հետո նրա դեմ պայքարը դժվարանում է:

Տաք գոտիների բույս է և աճում է հարավային Ասիայում, ՍՍՀՄ եվրոպական մասում, Կովկասում: Հայաստանի հարավարևմտյան մասում է հացահատիկային և համատարած ցանքի այլ կուլտուրաների դաշտերը, ցելահողմասերը, այգիները:



Պատկանում է բակլազգիների (Fabaceae) ընտանիքին: Ծլելիս տալիս է ստորգետնյա շաքիներ և նիստավոր, կարմրավուն ցողուն: Հենց այդ ժամանակ էլ այն կապավորում է սողացող կոճղարմատներ, որոնց մի մասը հաստանում է, վերածվելով կլորավուն կամ իլիկաձև պալարների: Երիտասարդ պալարներն ունեն ջեկ գույնի ձկուն մաշկ: Չմեռելուց առաջ նրանք մեծանում են, կուտակում սննդանյութերի մեծ պաշար: Նրանց մաշկը այդ ժամանակ հաստանում է, սևանում և դառնում առավել փխրուն: Պալարամիսը բոլոր դեպքերում սպիտակ է: Պալարներն ու կոճղարմատահանգույցները կրում են թերպարզացած կարճ արմատիկներ, որոնք ծառայում են հողից ջուր և սննդանյութեր վերցնելու համար: Բույսը ծաղկակիր ցողուն սփորաբար կապակերպում է կյանքի հաջորդ տարիներին, նույնիսկ եթե ծուռ է գարնանը: Ունի նուրբ, մազցող, խավոտ ցողուններ: Նրանց երկարությունը հասնում է մինչև 100 սմ: Տերևաթիթեղները ոլորուն են, էլիպսաձև, վերևից՝ մերկ, տակից՝ թավոտ: Ունի երկար, ծայրում ճյուղավորված կեռանման բեղիկներ, որով և կառչում է կանգուն ցողուններ ունեցող բույսերին: Բուսապուրկ հողատեսքերում (ցեղ) փոփոխ-սողացող է: Ծաղկափթթությունը 3—7 ծաղկանի ողկույզ է, ծաղկապսակը՝ վարդագույն: Պտուղը գլանաձև, բաց դեղին կամ դեղնագորշ ունդ է, սերվը՝ գնդաձև, սեղմված: Կոճղարմատներն ու պալարները (կոճղեպներ) թափանցում են վարելաչեղտից էլ խորը:




Տարածված է գրեթե բոլոր աշխարհամասերում, ՍՍՀՄ կենտրոնական, հարավային գոտիներում, Միջինում, Միջին Ասիայում, Կովկասում: ՀՍՀՄ նախալեռնային, միջին լեռնային և լեռնային գոտիներում արթոտում է հացաբույսերի ցանքերն ու ցեղադաշտերը:

## ՏԱՓՈԼՈՒ ՊԱԼԱՐԱԿԻՐ

### LATHYRUS TUBEROSUS L.

#### ЧИНА КЛУБНЕНОСНАЯ

1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին: Գետնատարած ցողունները հիմքից հատված են.
2. Արմատային համակարգը, սողացող կոճղարմատները և նրանց հաստացումները՝ պալարները սնող մալարմատներով.
3. Պալարիկից առաջացած ծիլը.
4. Ծաղկի երկայնական կտրվածքը.
5. Ունդը և սերվը բնական և խոշորացրած չափերով:








ՍՈՒ ՎՆՈՐ

**ALLIUM ROTUNDUM L.**

**ЛУК КРУГЛЫЙ**



1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում: Ծաղկակիր միակ ցողունը միջին և գագաթային մասից հատված է: Սոխուկը ցույց է տրված հողի մակերեսին (հողում միայն փնջաձև, սնող արմատները ցույց տալու նպատակով): Աջ կողմում՝ ցողունի գագաթը հովանոց-ծաղկափթթության հետ. 2. Հասուն բույսի փնջաձև արմատները. 3. Սերմից առաջացած ծիր բույսի կյանքի սկզբում. 4. Ծաղիկը խոշորացրած. 5. Պտուղը և սերմը բնական և խոշորացրած չափերով:



**Սոխուկավորներ:** Այս կենսախմբի մոլախոտերի վեգետատիվ բազմացման հիմնական օրգանները հողում գտնվող սոխուկներն են:

Սոխազգիների (Alliaceae) ընտանիքի բազմամյա, միաշաքիլ մոլախոտ է:

Բազմանում է նաև սերմերով, սակայն սոխուկներով բազմանալիս նրա աճի ու վարգացման եռանդն ավելի մեծ է: Սերմից կամ սոխուկից ծլելու ժամանակ դեպի հողի մակերես է արձակում թելանման շաքիլածիրը, որը մինչև 2—3 տերևի փուլը չի տարբերվում աշխանացան հացաբույսերի ծիրերից: Շաքիլածիրը հակառակ ուղղությամբ խորանում է հողի մեջ և գուրպանման հաստանում է, կապակերպելով վեգետատիվ բազմացման օրգանը՝ սոխուկը: Այն ձվաձև-գնդաձև է և ծածկված է գորշ շագանակագույն թաղանթով: Այդ թաղանթի տակ էլ գտնվում են 10-ից մինչև 50 հատի հասնող սոխուկները, որոնք նստած են թելիկների վրա և որոնցով էլ կապվում սնում են վերգետնյա օրգաններին: Բույսերին ջուր և սննդանյութեր են հայթհայթում սոխի ծայրի փնջաձև արմատները: Հողի մշակման ժամանակ, շփվելով մշակող գործիքների բանող օրգաններին, սոխի թաղանթը հեշտությամբ պատռվում է, և սոխուկները ցրվելով հողի մեջ, դառնում են հողի վանգվածային վարակման աղբյուր: Ցողունը կլոր է, ուղղականգուն, մինչև 80 սմ բարձրությամբ և կեսից տերևակալած: Տերևը գծային է, քիչ խորդուբորդ ելրերով: Ծաղկափթթությունը գնդաձև հովանոց է, մուգ կամ բաց վարդագույն ծաղիկներով: Պտուղը տուփիկ է, 3—6 սև սերմերով: Ծաղկում է մայիսից մինչև հուլիս ամիսը, հասունանում է հացաբույսերի հետ:

Տարածված է միջին և հարավային Եվրոպայում, Ասիայում, ՄԱՀՄ եվրոպական մասում և Կովկասում: ՀՍՍՀ բոլոր գոտիներում աղբտուում է ցանքերը, խոտհարքները, ցեխհողմասերն ու այգիները:



**Սողացողներ:** Բազմամյա մոլախոտերի այս կենսախմբի ներկայացուցիչները բազմանում են վերգետնյա, հողամերձ գողունային ընձյուղների արմատակալման միջոցով:

Հրատուկազգիների (Ranunculaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիավոր մոլախոտ է: Ծելու առաջին տարում բույսը առաջացնում է փնջաձև արմատային համակարգ և վերգետնյա տերևային վարդակ: Նույն տարում բույսը այդ ձևով էլ ձմեռում է: Արմատավիկի վրա կազմակերպված բողբոջները պիմանում են և ցրտին, և զարնանային ողողմանը, և թե՛ թեթև տղմակալմանը: Հաջորդ տարվա զարնանը մայր բույսի կենտրոնական բողբոջներից առաջանում են 60 սմ-անոց ուղղականգուն գողուններ, իսկ երային (աճող) բողբոջները գետնի մակերեսի վրա արձակում են վերգետնյա, տափակացած ընձյուղներ: Առաջինները առաջացնում են գեներատիվ օրգաններ, վերջիններս շփվելով հողի մակերեսի հետ, գողունային հանգույցից արձակում են փնջաձև արմատներ և վերգետնյա տերևային վարդակ: Հաջորդ տարվա զարնանից նրանք արդեն անջատված լինելով մայր բույսից, դառնում են ինքնուրույն: Ունի կլոր, ողորկ ու հյութալի, ջղավոր գողուններ: Տերևները հիմքում երկարակոթուն են, գողունի զագաթին՝ նստադիր. եռաբաժան են, կտրտված: Ծաղիկները դեղին են, հնգապսակ և առանձին-առանձին նստած են ծաղկակիր գողունի ու գողունային ձյուղավորումների զագաթներին: Պտուղը բազմասերմ ընկույզ է, սերմը՝ ընկույզիկ:


Խոնավ կլիմայի բույս է և տարածված է ՍՍՀՄ եվրոպական մասի, Հեռավոր Արևելքի, Կովկասի, ՀՍՀ բոլոր գոտիների խոնավ հողերում. աղբոտում է աշնանացան հացբույսերի, բանջարաբոստանային բույսերի, բազմամյա խոտաբույսերի ցանքերը, անտառային ու տափաստանային կերահանդակները:

## ԳՈՐՏՆՈՒԿ ՍՈՂԱՅՈՂ

### RANUNCULUS REPENS L.

#### ЛЮТИК ПОЛЗУЧИЙ

1. Բույսը կյանքի երկրորդ և հաջորդ տարիներին՝ ծաղկման-պտղակալման շրջանում: Չափ կողմում գլխավոր գողունի երային բողբոջից դուրս եկած վերգետնյա սողացող ընձյուղի՝ գետնի հետ շփման տեղում առաջացած դուստր բույսը: 2. Մայր բույսի և դուստր բույսի (ձախում) փնջաձև արմատները: 3. Սերմից առաջացած ծիր բույսի կյանքի սկզբում: 4. Ծաղկի երկայնական կտրվածքը: 5. Սերմիկը բնական չափերով և մեջքի կողմից ու կողքից՝ խոշորացրած:





## ԵՐԵՔՆՈՒԿ ՍՈՂԱՑՈՂ

TRIFOLIUM REPENS L.

КЛЕВЕР ПОЛЗУЧИЙ



1. Բույսը կյանքի երրորդ, չորրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում: Գլխավոր արմատից առաջացած սողացող ընձյուղի վրա աճած մայր և դուստր բույսերը: 2. Արմատը: 3. Սերմից առաջացած ծիր շաքիատերևներով: 4. Ծաղիկը խոշորացրած: 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:

Բակլազգիների (Fabaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոլախոտ է: Բազմանուն է վեգետատիվ ճանապարհով և սերմերով: Կյանքի առաջին տարին շատ դանդաղ է աճում, բայց կազմակերպում է սողացող ընձյուղ: Տերևային վարդակն ու ծաղկակիր ցողունները առաջանում են ընձյուղի վրա եղած հանգույցներից, որոնք հողի մակերեսի հետ շփվելուց հետո արձակում են թույլ փնջաձև արմատներ: Ամբողջ բույսը սողացող-փռված է, ճյուղավոր: Կանգուն են միայն ծաղկակիր ցողունները: Տերևները երկարակոթուն են, եռամաս, ձվաձև, սղոցաեզր: Ծաղկաբույլը գլխիկ է, ծաղկապսակը՝ սպիտակ կամ բաց վարդագույն: Ծաղկելուց հետո այն ունենում է դարչնագույն երանգ: Պտուղը 3—5 սերմանի ունդ է: Սերմը սրտաձևաձև է, մանր: 1000 սերմը կշռում է 0,5—0,75 գ:

Ծաղկում է ուշ գարնանից մինչև ուշ աշուն և ամառվա կեսից թափում հասուն սերմերը՝ աղբոտելով հողն ու բակլազգի բույսերի սերմանայութը: Ցրտադիմացկուն է և լուսասեր: Կարճացողուն բույսերի համակեցության մեջ, գրավելով վերին հարկերը, իշխող է հանդիսանում: Բարձրացողուն բուսածածկում ճընջված է: Եթե ցանքաշրջանառության մեջ երկու-երեք տարի արմատավորվեն չորադիմացկուն և բարձրացողուն ստվերարկող կուլտուրաներ, ապա այդ տարիների ընթացքում հողը կապատվի սողացող երեքնուկից: Երեքնուկով խիստ վարակված դաշտը կարելի է վբաղեցնել նաև անտրակնուպի, քաղցկեղի, արացողի և ժանգի նկատմամբ դիմացկուն բույսերով, քանի որ երեքնուկի այս տեսակը խիստ տուժում է դրանցից:

Տարածված է Ասիայում: ՍՍՀՄ և ՀՍՍՀ բոլոր գոտիներում աղբոտում է մարգագետնային հողատեսքերը, դաշտային կուլտուրաների ցանքերը, ցեղերն ու այգիները:



Վարդազգիների (Rosaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր մոխխոտ է: Ծլերու առաջին տարում կազմակերպում է տերևային վարդակ: Երկրորդ և հաջորդ տարիներին առաջացնում է կարճ ու հաստ գլխավոր արմատ, նրա վզիկից՝ երկար (մինչև 80 սմ), մտրակաձև վերգետնյա սողացող ընձյուղ: Այդ ընձյուղի հանգույցից առաջանում են նույնանման արմատներ: Երբ նախորդ տարվա մայր բույսն առաջացնում է ծաղկակիր ցողունը, հանգույցային բույսերը կազմակերպում են տերևային վարդակ, դրանով ձևեռում և հաջորդ տարին հանդես գալիս որպես ինքնուրույն մայր բույս: Բույսի վեգետատիվ բազմացմանը նպաստում է նաև արմատահատվածներով բազմանալը: Թե ծաղկակիր, թե սողացող ցողունները թափոտ են: Տերևը բարդ է, բազմաթիվ ընդհանուր, փետրաձև, ատամնաեզր տերևաթիթեղներով: Ծաղիկները անուրթային են, բաց դեղին պսակով և երկար կոթունով: Սերմնապտուղը օվալաձև է, խորհուրդ, փայլատ, դարչնագույն երանգավորմամբ: Սերմը հատիկ է (1000 հատիկը կշռում է 0,75 գ): Մեկ ընձյուղը կարող է տալ մինչև 300 սերմ, որոնք հասունացման առաջին տարին վատ են ծլում, բայց հաջորդ տարիներին բույսի բազմացման գործում վեգետատիվ բազմացմանը հավասար դեր են կատարում: Բույսը կարող է աճել ու բազմանալ թե խոնավ և թե չոր հողերում, մշակովի բույսերին ճնշելով հատկապես հողի մակերեսից:


Տարածված է աշխարհի ու ՍՍՀՄ գրեթե բոլոր գոտիներում: Հայաստանի նախալեռնային ու անտառատափաստանային գոտիներում աղբոտում է հացաբույսերի, բանջարաբուստանային բույսերի, ցանովի ու բնական խոտաբույսերով զբաղված հողատեսքերը:

## ՄԱՏՆՈՒՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ

### POTENTILLA ORIENTALIS JUZ.

#### ЛАПЧАТКА ВОСТОЧНАЯ

1. Բույսը կյանքի երկրորդ կամ հաջորդ տարիներին՝ ծաղկման փուլում: Արմատավզիկից առաջացած ընձյուղ-«մտրակի» վրա մայր և դուստր բույսերը: Աջ կողմից վերևում ցողունի սողացող հատվածը. 2. Մայր և դուստր բույսերի արմատները. 3. Սերմից առաջացած ծիլը բույսի կյանքի սկզբում. 4. Ծաղկի և սերմնարանի երկայնական կտրվածքը. 5. Սերմը բնական և խոշորացրած չափերով:





# ՊԱՐԱԶԻՏՆԵՐ

## ԻՍԿԱԿԱՆ ՊԱՐԱԶԻՏՆԵՐ

### ՃՐԱԳԱԽՈՏ ԴԵՂԻՆ

### OROBANCHE LUTEA BAUMG.

### ЗАРАЗИХА ЖЕЛТАЯ



1. Ճրագախտի ցողունը ծաղկման-պտղակալման շրջանում: Չախ կողմում՝ տեր բույսը, որի արմատների վրա պարապիտել է ճրագախտը: 2. Տեր բույսի արմատը, որին ծծիչների օգնությամբ (աջ կողմում) կպել է ճրագախտը: 3. Ճրագախտի ծիլը տեր բույսի արմատի վրա: 4. Ճրագախտի ծաղիկը: 5. Ճրագախտի պտուղը խոշորացրած և սերմը բնական ու խոշորացրած չափերով:



**Պարապիտներ:** Կենսաբանական այս խմբի մուլախոտերը կամ չունեն սեփական արմատներ ու կանաչ տերևներ և ամբողջությամբ սնվում են կանաչ բույսի հաշվին (իսկական պարապիտներ), կամ ծծիչներով սնվելով կանաչ բույսի հաշվին, միաժամանակ տերևներով կարող են օրգանական նյութեր սինթեզել (կիսապարապիտներ):

### ԱՐՄԱՏԱՅԻՆ ՊԱՐԱԶԻՏՆԵՐ

Ճրագախոտազգիների (Orobanchaceae) ընտանիքի միամյա, երկշաքիլավոր մուլախոտ է: Ինչպես բոլոր պարապիտների, այնպես էլ ճրագախոտերի կյանքն ու կենսագործունեությունը կապված է մշակովի կամ վայրի կանաչ բուսականության հետ: Պարապիտում է հատկապես առվույտի, երեքնուկի և մյուս բակլազգի բույսերի արմատների վրա: Բազմանում է միայն սերմերով: Սերմը ծլում է հողի վերին շերտից, և նրա ծլումը համընկնում է պարապիտվող (տեր) բույսի արմատների կապավորման հետ: Մինչև սեփական սննդանյութերի սպառումը, եթե վերընթաց ծիլը հասնի ու շփվի տեր բույսի արմատներին, այն կառչող ծծիչների օգնությամբ կխրվի կանաչ բույսի արմատակեղևի տակ և կշարունակի իր աճն ու վարգացումը, եթե ոչ՝ բույսը կմահանա: Միակ, չճյուղավորվող ուղղական գուն ցողունը հասնում է մինչև 60 սմ բարձրության: Այն դեղին է, գեղձամազի թեփուկներով: Ունի հասկանման խիտ ծաղկափթթություն, ծաղկի պսակի ստորին մասը դեղին է, ծայրի մասը՝ դարձնամանուշակագույն: Պտուղը տուփիկ է, սերմերը՝ շատ մանր: Ճրագախոտերի այս տեսակները տարածված են Արևմտյան, Հյուսիսային Կովկասում, Ակդրկովկասում և հսկայական վնաս են հասցնում վերը նշված բույսերին, հատկապես այն դեպքում, երբ ցանքաշրջանառություն չկա:



